

# ՄՐԱԿԻՐԱԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 3 1900

Մ Ա Ր Տ

1900 № 3

ՏԱՍԽԱՐԿՈՒԵԼՈՐԴ ՏԱՐԻ

*Երես*

1 ԳՈՒՇԵԱՆՑ, ԿԵՐՃ . . . . .	275	Յունօ՞ն (վէպ; շարռւնակութիւն):
2 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .	311	Ես ձեզ ասում եմ... (Բան.):
3 ԱԴԵԼԵԱՆ, Ա. . . . . . .	313	Ուսանողի լիշտակարանը. I.
4 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ . . . . .	323	Ա՛խ, երնէկ... (Բան.):
5 ՆՈՅՆԸ . . . . . . .	324	Լուռ գիշերին... (Բան.):
6 ԿՈՊՊԵ՛Լց Մ. ՆԱՐԱՍՍՈՐԴԵԱՆ.	325	Մեռածների մի զրոյց:
7 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ . . . . .	333	Երազ (Բանասդ.):
8 ԱԴԵԼԵԱՆ, Ա. . . . . . .	335	Հասարակական խանութներ:
9 ՄԱՐԻ-ՇԱՀՆՈՒՐ. . . . . . .	340	Հրաժեշտ (Բանասդ.):
10 ԱՂԲԱԼԵԱՆ, ՆԻԿ. . . . . . .	342	Նամակներ Զանգեղուրից. I:
11 ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԶՕԶԵԱՆ, ԳԵՂՈՐԳ.	354	Գերման. օգնութ. Տաճկահակերին.
12 ՑՈՎՀԱՆՆԻՍԻԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ .	364	Սոցիալ. լարաբերութիւնները(վերջ):
13 ՎԱՐԴԱՆՆԵԱՆ, ԳՐ. . . . . . .	370	Շիրվանջադէի «Բաօս» վէպը:
14 ՑԱՐՄԱՐԵԱՆ, Ս. . . . . . .	373	Պարսկասրանից. VII, VIII:
15 ՄՈՋՈՐԵԱՆ, ՊԵՏՐՈՍ. . . . . .	384	Արևելեան երաժշութիւն:
16 Z. . . . . . . . . . .	390	Պատերազմը Հարաւ-Աֆրիկակում:
17 ԽՄԲ. . . . . . . . . . .	403	Զանազան լուրեր:


Տեղեկատու եւ Յայտարարութիւններ

ԹԻՖԼԻՍ

Տպարան S. Մ. ԱՕՏԻՆԵԱՆՑ:

Տիպոգրαֆія Т. М. Ротніанца, Гол. пр., д. № 41.

1900





ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Բ

№ 3 1900

Մ Ա Ր Տ

1900 № 3

ՅԱՍՏԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ԹՈՏՎԵՎԵԱՆՑԻ

Տիոգրաֆիя Т. М. Ротицанца Гол. пр., д. № 41.

1900

# СИМВОЛЫ

ДИАЛОГ ДИФФИЧУЛЛУСА СО СВОИМ БРАТЫМ

ЧАСТЬ ПЕРВАЯ

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го Марта 1900 г.

# ՅՈՒԽՈՆ

ՊԵՐՃ ՊԱՌԵԿԱՆՑԻ

(Հարուճնակութիւն <sup>1)</sup>)

Ժ.

Երկու շաբաթ յետոց է, մենք դարձեալ նոյն Նուշչիբիլակ գիւղումն ենք, վերադարձել ենք Սիւնիքի Տաթեռու վիճակից: Հիւրասիրուել ենք զիւղի առաջաւոր ծերունի Զօհրաբ ամու փանը, ուր նախկին զաւսպեանս իջևանած էինք:

Դիւշական տէր Մ. քահանան, որ անցեալ անգամին իջևանածս րոպէից մեզանից անրաժան մնաց, դարձեալ, կարծես, հոգով իմացաւ վերադարձաւ. ուզքս ձիու ասպանդակից դեռ չէի հանել, որ ինձ օգնում էր իջնելու:

—Այ երէց, հերիք չի, ձեռք բալով՝ ասացի ես:

—Մեռել ես՝ քեզանից բաժանուողը չեմ: Եւ տէրսէրը թե ոընկաւ ու առանց փանուիրոջը պեղեկութիւն փալու՝ քարշ տուեց, ու Զօհրաբ ամու հիւրանոց-սենեակի դուռը պինդ հրելով՝ շրջևկացրեց պատին ու ինձ ներս փարաւ:

Երեկոյեան պահն էր պատուելի ծերունին, երևի, փոքր ինչ սպամքսին բաւականութիւն էր պուել ու կամեցել էր իւր յոդնած կուռ ու ճուռի սիրուն էլ շահած լինել, ալեղարդ գլուխը չոր բարձակալին դրած՝ հանգսպանում էր:

<sup>1)</sup> Ակիդքը Մուրճ 1900 թ. № 1, 2.

Դրան թրիսկոցն և մեր աղմկալից ներս խուժելը խեղճ ծերունուն թարժած արին. շշմած զեր թռաւ, նայեց ու բերանը կիսաբաց, բոպէաչափ ապու շի պէս նայում էր մեզ:

— Դէ, ես քո գերեզմանիդ վրաց զինի լցնեմ, ճշաց տերսէրը, սրան պեսէք, շուրջ շուրջ էլ պարծենում է, թէ մազերս սպիտակել են, համա սիրառ վարդի պէս կարմիր է: Այդ է փթել ես, թէ չէ ընչը շըպիտի ինձ նման պառզ պղամարդի պէս՝ Դրան ձաշնն առնելուս՝ տեղիցդ ցոփ վերթուչէիր ու մեր սիրելի հիւրին գրկէիր:

— Մեր աղէն աշքիս ու զլիսիս վրայ է շնորհ բերել, ուշքի գալով պատասխանեց Զօհրաբ ամին, բայց քո անկարդ շորժմունքից Դևերն իրանկ էլ Դիւադադար կը լինին, ոչ թէ մարդիկը։ Նէր օրհնած, Դեռ տուն մոլիք, ինձ դարձնացրու, աղի գալն աչքալոյս գուր, որ ներս չըմդնի ու մեզ էսպէս անքալաքափարի դպնին ներիր, աղայ, անկարգութիւնիս, մեղքն էս դաւարի ցաւինն է, որի ինչ լինիլը Տաթեւ գնալիս՝ բարի աչքովդ տեսել ես։ Քանի ասացի, աց երէց, մի՛ գնալ, շնորհքներդ քեզ համար սլահիր, չեղաւ, չըկարողաց խօսք հասկացնել։ Իրբեւ թէ շատ սլարդերես է գտնուել մօդդ, վերադարձին եկաւ փողոցի մէջ նասրեց, զիւղականների առաջին պարծենով պարմեց։ Ներիր աղայ, մեր ցաւն է, ընկել է վիզներս, պիտի քաշենք, մինչեւ Աստուած ձեռներիցս առնի՛ մենք էլ հանգստանանկ ու ինքն էլ։

—Մինչև զիւղիս ծերերի զերեզմաններին զինի չածեմ, ինք մեռնողը չեմ, զլուխը թափահարելով շեշտեց պէրտէրը:

—Գինի ձեռքդ ընկնելիս՝ կոկորդովդ ես ցած լցնում, համբերնեմ ես, որ գերեզմանն օբհնես, մի քանի կաթիլ վրան շաղ պառ նոր լկես:

Զօհրաբ ամին կողքին Դրած բարձը Դրեց նոյն բարձակալի վրայ և ինձ համեցէք արեց։ Ծերունին խնայել էր հիւրի համար յափկացրած բարձը ախտորիկ, բարձակալի չոր տախտակի վրայ էր հանդիսոր առել։

Այդպէս են մեր չարքաշ զեղչուկները, իրանց անձից աւելի  
քնի պարուժ Աստվածոց հիւրին, իրանք ցամաք հացով բաւակա-  
շանում են և ամեն համեմ պարագ հիւրի համար պահում։

— Հեղի քեղ մարտադ, աղակ, մեզ պատուասիրելու բոլոր կնօրէ-

նութիւնները տնեցիներին անելուց յեպոյ, ներս եկաւ և խնդրեց Զօհրաբ ամին, մի ասա, գեսնենք՝ ուզի՞շ էր պաղմում էս անշնորհք քահանէն իր արած խաչպառակչութիւնները, թէ իր կարճ խելքով պարձանք էր համարում ու դուրս դալիս:

— Էոլորը ճիշդ էր, ժպասցի ես:

Դլացաւանք չըտալու համար՝ ասենք, որ Առշիթիլակի Մ. քահանացի համբաւը շրջակայ գաւառներում հանրապարած էր:

Թողնենք նրա գինեմոլական հակումը, որ տարաբաղդաբար՝ եթէ ոչ նոյն չափով, բայց ընդհանուր է մեր գիւղական հոգևոր հայրերի համար, ու Մ. յայտնի էր իւր ախորժ սրախօսութիւնով և յանդուգն արաբքներով ու սիրելի համոցականութիւններով:

Երկրորդ երիտասարդութեան հասակը ողք կոխած, մի աշխոյժ, մի կայսուս, մի զեղեցկապեսիլ, շէկամօրուս, լայնամօրուս, երկարամօրուս գէրգէր էր Մ. քահանան: Նրա թանձր յօնքերն և խոշոր ու մշտաժողիպ աչքերը շատ այրի գեղեցկուհիների մինչեւ սրբի խորը կատօսէին, եթէ գէր-հայրական նուիրականութիւնը չըզսպեր հեշտասիրութեան թափը: Տեղը բամբասաւէրների վզին, պապումում էին, որ ներողամբարար՝ ու հայրը՝ նախօրոք՝ թողութիւնը շնորհել էր այդ «փոշերիստակ» սխալանքի ձանապարհը սիրող իւր հողեւոր դուսպրներին:

— Հենց էն ապաբաղդ օրից, որ ես զրկուեցի իմ՝ հարազար պիրուհուց, մի ողորմեսցին էլ իմ՝ գլխի համար եմ մշտնջենական կարդացել, չէր թագցեսում պարզապէս հարցնողների առաջ իւր խոսպատճանութիւնը ու Մ.—ը:

Իշխանութիւնից բազմաբեսակ յանդիմանութիւններ և պատիժներ արացել ու շարունակ սրանում էր գէրպէրը, բայց նա դարձեալ չէր քաշւում պարզ ասել.

— Փիլնիս հետ կը խռովիմ, իսկ պիրուհուս դուած անմեռ վիշպը քաղցրացնողներից՝ ոչ, ոչ ու ոչ, երեք անգամ էր շեշտում երեցը:

Զօհրաբ ամու և շափերի տութեամբ՝ գէրպէրի մորմոքը դէսի իւր պիրուհին անկեղծ էր: Քահանան ամբողջ երկու դարի պարի պառնից դուրս էր զալիս միմիայն սլաշփօնակապարութեան անհրաժեշտ միջոցին, երեսի վրայ կործ՝ անրնդհապ ողբում էր, հալուել ու մաշուել էր. մի այրի կին միացն կարեկցելով իրիցի վշպալից վիճա-

կին՝ ասքիճանաբար երկու դառն պարիներից յեպոյ՝ մեղմացրեց նրա թախիծը:

Անուհետեւ երեցը ընդ միշտ գտաւ իւր տրվամահալած ամոքիչ դարմանը:

Արդեօք ժամանակիս փչութիւնը, թէ հոգեոր հօր ժողովը դասէր և ղարղիւնիդ բնաւորութիւնը ներելի արեց նահավետական ռամկի աչքում՝ ոչ միայն քահանացին՝ նոյն իսկ աշխարհականին անվայիլ զեղծումը. մի օր կար, այդ մոլութիւնը արիւնով էր մաքրում, իսկ այսօր՝ աչքի սղոչով են ամենքը մորիկ փալիս:

Զօհրաբ ամու հարցասիրական փենչն յաղեցնելու համար՝ համառուսակէս պարմեցի իրան, թէ թնչապէս տէր Մ.Ն ինձ հետ դէպի Տաթեւ ճանապարհորդելու հէնց առաջին օրը՝ յեր մնաց մեղանից:

Ա. մալականաբնակ գիւղում տէրտէրը մի ասեղ դառաւ և աչք ներիցս չքացաւ:

Աս չըգիպէի քահանացի թոյլ բնաւորութիւնը. նա, թէպէտ, նախրնթաց երեկոցին, Զօհրաբ ամու դանը սեղանին դրուած խմիչքի մեծ մասն իւր կոկորդով ներս ածեց, բայց այդքանը բաւ չէր մի գինեսպառ մարդի պակասութիւնը նկարելու համար:

Ասքուծոյ սպաշտունէի այդ արագն երեսս զարկեց մեզ հիւրընկալող մալականն և աւելացրեց. դուք գուր կը սպասէք ձեր հոգետոր հօրը, նա իւր գրպանում ունեցած օղիով սիրաշահելու է մեր մաքրակենցաղ մալականութեան արագիք բերող մի երկու անուանարկուած կանանց, որոնց մեր համայնքից արդաքսելու համախօսականն արդէն պարզապար է. իսկ այդ անբարոցականութիւնը մեր գիւղը ներս բերոնսերը մի քանի սպաշտուական անձինք են և ձեր Ասքուծոյ սպասաւորը: Խմ խոնարհ խորհուրդս է ձեզ ուղեռուիլ քահանան երբ լինի՝ ձեզ կը հասնի:

Մալականի խօսքն երկարժամանակեայ փորձառութեան վրայ էր անշուշտ հիմնուած: Հետեւեալ հայաբնակ գիւղում, տէր Մ.—ը մեզ հասաւ, բայց ես այլ ես ինձ չընկերացրի. զիրաւորուած՝ վերադարի:

Մի գեղեցիկ նորագի կնոջ հասդէին պատիւ արագսւորող խօսքեր շապլիւ պարձառաւ՝ տէրտէրը փառաւոր քոթակ էր կերել արիկնոջ խանդոց: ամուսնուց: Եւ եթէ ես ուշանացի մեր տէրտէրին ձի

Նսպացնել և վերադարձնել բալը. նրա գլխին կոտրատիռսի բօնը աւելի փառաւոր պիտի կատարուէր; Իսկ իւր այդ խայպառակչութիւնը տէրքէրն եկել և պարծանքով իրանց գիւղումը մանրամասնօրէն պարունակում էր:

—Դարդ մի՛ անիլ, ասաց ինձ տէր Մ—ը. էզուց հետո գալուս՝ Դարալագեազի գիւղերում քեզ էլ ամօթով չեմ թողնիլ. վայրենի Զանգեազուրցիք էին, կատակներ չեին հասկանում. մեր ժողովուրդն ինձ ճանաչում է և բոլոր զուարձախօսութիւններս սիրով լինում:

—Նեղութիւն մի՛ քաշիլ, պատասխանեցի ես, առանց քեզ եկել եմ, առանց քեզ էլ կը գնամ:

—Քմայլ չես համարձակիլ անելու, պնդեց տէրտէրն և այնքան յամառութեամբ հակաճառեց իմ և Զօհրաբ ամու հետ, մինչև երկուսս էլ զիջանք տէրտէրի պատրաստակամութեանը. մանաւանդ՝ որ ինքն ազնիւ խօսք տուեց անսուազ (անօթի) դալ և ինձ ճանապարհ չըդրած՝ բերանը կաթիլ չառնել:

Վճռուած էր. վաղին առաւօտ գնում եմ և քահանան ինձ ուղեկցում է մինչև Գևարքունի դաւառի սահմանադլիսի գիւղը:

### ԺԱ.

Երկրորդ առաւօտը ես դեռ քնած եմ և դուռս բալիսում են: Քահանան ինքն է, որ կազմ՝ ու պատրաստ շփապեցնում է ինձ ճանապարհ ընկնել: Տէրտէրի հետ է տեղական բանութէրից ինձ հետեւորդ նշանակած գիւղացին:

—Այ երէց, առում է քահանացին հիւրասէր Զօհրաբ ամին, էս գիշեր քունդ չի պարել, սպասիր՝ հեշտացնուը պատրաստուէ, նախաճաշեցէք և այնպէս ճանապարհ ընկէք:

—Մօրիկ գիւղերում փորերս բռզացնելու բան կը գտնենք, պատրասխանում է տէրտէրը, իսկ հիմի պիտի օգտուել առաւօտեան անուշ օդից. լսիր՝ թէ ինչպէս են բիւլբիւլներն իրանց Փառք ի բարձումն երգում:

Տէր հօր բանասդեղական խանդը չըշիջուցանելու համար՝ համակարծիք գրնուեցայ հետը և Զօհրաբ ամուն բարե մնայ ասացի:

— Երեցը լուրջ է երիում, «Փառք ի բարձունք» ից է խարար պալիս, կարծես խօսքը պահել է, բերանը կաթիլ չի առել, Էհ, փառաւորի ինքը, զոնէք քեզանից ամօթանք է քաշել, փափաց ականջում Զօհրաբ ամին:

— Ընչից հասկացար:

— Ենրանիցը հոր չէր դալիս, ուրիշ ժամանակ մօս գնալ չել ինում, տիկ պէս է հոգում:

— Աւրեմն ուրախ եմ: Մնաս բարին:

Զորս հրացան մեզ պաշտպանող զէնքին են, որոնցից իմը՝ նոր սիստեմի, մնացած երեքից՝ ծառացինս՝ ալիստոնով, քահանացինն ու փեսացինը՝ հին ձեի քար ու չախմախով:

Զորս հրացան մեզ պաշտպանող զէնքին են, որոնցից իմը՝ նոր սիստեմի, մնացած երեքից՝ ծառացինս՝ ալիստոնով, քահանացինն ու փեսացինը՝ հին ձեի քար ու չախմախով:

Կշփացած ու հանդարացած ձիանքը քթերը հովին բռնած՝ փոնդպալով ու ոպիքերը խաղացնելով՝ սրարշաւ. բարձրանում են Վայող ձորն ու Գեղարքունու գտւառն իրարից անջանող լիւն ի վեր:

— Քիրեմս ինչ, պարմն, դարձաւ ինձ քահանան, երբ լեռնածմբով պիսի թեքուէինք դէպի արևմուտք ընկած մերձակաց զիւլը. եթէ դու ցանկութիւն ունիս այցելելու Դարալազեազի հնութիւններն ու վանքերը, չորս օրուայ մէջ հեշտ ու հանգիստ քեզ կը հասցնեմ Գեղարքունու սահմանը. խոկ եթէ կը կամենացիր՝ յառաջ ընդանիքիդ հետ գրկախանուուել, որոնք քո ասութեամք՝ Նոր-Բայազիդումն են, այդ դէպիքում՝ ես էսօր՝ արևը դեռ արևմուտք ըլթեքուած՝ քեզ կը հանեմ ծովափին մօր Գեօզալյարայ զիւլը, որ տեղից մինչև Նոր-Բայազիդ՝ մի ճաշուան ճանապարհ է:

— Մի պայմանով, պէրտէր, ասացի, որ այս լեռան արևելեան կողմի ձորը ըլմզնենք:

Խօսքս նադօյի հետ եկած ձորի մասին էր:

— Եելքս հացի հետ եմ կերել, որ իմ ուղքովը մաղաղ գնամ մարդակեր աւազաներին, ասաց քահանան, ընդհակառակն՝ իմ առաջնորդելիք ճանապարհով գդակդ թեք ծոիր, խալ ու դաշտ ասելով՝ գնա: Միայն առաջուց ասում եմ. համբերութիւն ողիպի ունենաս դիմացներիս լնու մի քանի ժամ բարձրանալու: Այդ սարը շապ:

սրա-դլուխ լինելու պատճառով՝ Փալան թօքեան է առում, որ անօրէնի լիզուով նշանակում է՝ համեսը, կամ թարբը ձիու միջքից ցած զլորող սար:

—Մեր ոտքերին հօ՛ նեղութիւն չենք դուռու, ողափառիսանեցի գէրսէրին, իսկ մեր գրաստները վարժուած են այդպիսի դժուարութիւններին:

—Ուրեմն, ձիուդ սանձը թեքիր դէպի հիւսիս և լեռն ի վերքշիր, ասաց գէրսէրն և յառաջեց մեզանից:

Բարձրանում ենք ու բարձրանում; ոչ աչ ենք ծուռում և ոչ ձախ, մինչև ծունկը կանաչ խոտերն ու անուշահոս հազարերանգ ծաղիները պրարելով՝ մեզ համար ճանապարհ ենք հարթում:

Անրան մեր գրաստները քրոնքի մէջ ջլբջլրում են, գրլորշին եռ եկած փլաւի ջրից աւելի է բարձրանում; լիզուները կես գագ կախած. հեացող ու հեթացող անտառների վրայից, թամրերը անզգալի կերպով՝ մեզ իրանց վրաց առած՝ դեղահան են եղ'լ և հասել ձիանց պոչերի զլուխը. լաւ էր, որ մեր բոլոր հեծած ձիանքը կրծկապներ ունեին, ապա թէ ոչ, թամրերի հետ հեծեալներին էլ պիտի զլորէին ձիու վրայից, և վայը կը զար այն ժամանակը մեր զլսին, ու լլազիդ լիոան ծալրից անիւի նսան զլդի-զլոր զալով, նորից մինչև Զօհրաբ ամու դուռնը պիտի սահէինք:

Օրն եկել է, 11 ժամը հասել, բայց մենք դեռ Փալանթօքեանի կիսումն ենք, ձիանց ոտքերը հազիւ են շարժւում:

—Քո դունը բրինձ լցուի՛, այս գէրսէր, անում եմ, այս ի՞նչ խաղ խաղացիր մեր զլսին, վեր նացիր, քո Փալանթօքեանդ դեռ չենք կիսել:

—Քիչ էլ, քիչ էլ, համբերութիւնը կեանք է, ծաղրեց ինձ Ըստուծոյ պաշտօնեան, ի՞նչ է մնացել. ակսնում ես հովիւն իր հօգու սարի թմբից մեր երկշորութեան վրաց զարմացած՝ մեզ է նայում. հովուի մօպ եթէ հասնենք, միեւնոյն է, թէ լեռան զլսին ենք, իսկ սարի զագաթից աչքերդ պինդ փակիր ու քեզ ցած թող, մի քանի բուգէից՝ աչքերդ բաց արա ու քեզ զորիր նոր Բայազիդի զաւառի Գեօղալդարայի եացլաղում (ամարանոցում), ուրիմն, զիւղին մի ժամ մնացած:

Տէրտէրի ասութեան առաջին կտորը մասամբ ուղիղ էր, հո-

վիւլ մեզանից հարիւր քայլ հազիւ հեռու էր. բայց այդ հաշիւր քայլին հարիւր բոպէն ըիչ էր մեր յոգնած ու քաղցած գրասպների ուրքերով բարձրանալու համար:

—Այ տէրպէր, ձայն փուեց ծառաս, դու և քո փեսան հրացաններիդ շախմատիները լաւ պեսէք, եթէ պակասութիւն կայ՝ ուղեցէք՝ քանի ուշ չէ:

—Այ բալա՛մ, (զաւակ), քո հրացանդ լիքն է, ձայն փուեց տէրպէրն իր փեսացին:

—Ուզեցաց տանը լցնեմ, բայց վառօթ չունէի, շամփուրն էլ կորած էր, կուշ զալով պարասխանեց աներոջը փեսան:

—Տօ, Բարաղամի աւաննակ, հասպա ընչի Բնձ տանը չասացիր, որ վառօթ էլ տայի, շամփուր էլ, Դէ երկարականջ, քթերիցդ դու զան աղջկանս համբոյըները:

Փեսան կարմրեց մինչև ականջները, բայց իւր կողմից չուշացաւ նկապողութիւն անելը.

—Ի՞նձ ես ասում, տէրպէր, հասդա որ քո հրացանի չախմախնը քար չունի:

—Ամօթ քո երկար մօրուքին, իզիթ (կորիճ) տէր Մ., շեշտեց յանդիմանութիւնն իւր հասցէին քահանան, նոր է միբոս գալիս, որ երկու ամիս յառաջ՝ Սիսիանցի Զամալ բէզն եկել էր մօսս հիւր ու չախմախաքար չունէր, որ չիբուլի կրա՛լ վառէր, ես իմ հրացանիս քարը հանեցի ու բաշխեցի:

—Դէ, հիմի դնա, Դիմացի սարից ցած եկողների պարասխանը բուր, յանդիմանեց փեսան աներոջն և զլսով ցոյց փուեց լեռան արևելեան կողմից Դէպի մեզ եկող պատնեհինդ սպառազինուած հեծեալներին:

—Վայ ձեր ճանապարհն անիծած, սարանի սերունդներ, բացականչեց քահանան՝ մարով ցոյց տալով ինձ ձիաւորներին: Դէն, պարհն, ուշանալու ժամանակ չէ, Դրանք Սուլէյման բէզի մարդիկն են, առաջներինը Սիւլէյման բէզն ինքն է, ես ճանաչեցի տակի սպիտակ ձիուցը, որ երկու դարի յառաջ իւլեց մեր Զօհրաբի տղայիցն ու, ասում են, դասրած օրից՝ ուրիշ ձի չի նսրում: Անիրաւը քանի ժամանակ էր՝ կորած էր, Գաւառցի Յունօյի երկիւղից՝ մեր կողմերը չէր կարողանում գալ, իսկ հիմի՝ որովհետեւ Ղարաբաղի

սարւորները մեր լեռներն են բարձրացել, հիմի ոպքին պեղ է արևլ։ Երկիրը տակ ու վրայ կանի ու սար եկած թուրք բէգերի մօտ կը թագչի։ Անիծածներն անունները խաղաղ ժողովուրդ են դրել, հօտերի ու նախիրների բէրեր են և հարամկերութիւնից ձեռք չեն քաշում։ Նորապենք, շրապենք, մեզ զցենք հովիւների մօտ, տնօրինեց քահանան և իւր ձիուն կրնկեց։

Զուր էր տէրպէրի և մեր աշխարութիւնը, գրասպներս յառաջ չեն գնում, ծնկների ոյժը կփրուել է. սպիտուած եղանք ծանր ծանր դնալ։

Մեր բաղդից՝ լեռն արևելեան կողմից գոգաւորուած էր, սարի կապարից մի ձորակ ասպիճանաբար լայնանալով, Փալսնթօքեանն երկու մասի էր բաժանել։ Աւազակները սարի արևելեան բաժնի լան-ջով՝ հորիզոնական մի բարակ շաւլով գծաւորուած՝ զալիս էին անգնելու լեռան արևմիքեան մասը, ուր մենք էինք գրնուում։ Հեռուից՝ հրոսակի խումբը նմանում էր երկնքի երեսին թև պուղ կռունկների կանոնաւորուած կարաւանի, որոնք ուղղաձիգ փռուած իրանց աւաշնորդողի եպեկից՝ մի գծի վրայ թևագրած լողում են օդի մէջ։ Աւելի յարմար նման ու թիւնն ատիսական ուղիքերի շարքերն են, որոնք միմեանց քամակից՝ առանց աջ ու ձախ շեղուելու՝ ծանր ու դանդաղ քայլերով յառաջ են շարժւում։

— Նայիր, մի լաւ նայիր Սուլէյման բէգին, մաքնացոյց արեց ինձ գէրպէրը, ուսո՞ որքմն զէնք ունի վրան։ լսել էի, որ եկել է մեր սարերը և չէի հաւաքում, հիմա բաց աչքով իրան դեսնում եմ։

— Եթէ լսել էիր, հապա ընչու եկար այս ճանապարհով, հարց պուի ես։

— Ե՞ն, թո եկայ, ինձ բերեց։

— Ո՞վ բերեց։

— Լուսարկմին դադարկածս երեք թէյի բաժակ, քարը ճաքացնող, թունդ արալը, պարասխաննեց երէցն ու շարունակեց. բաժակ բաժակի եպեկից՝ կոկորդիցս մի ումազով ներս լցրի ու ձի նըս-տայց։ Նար ավան, անիծեալ լինի Սուլէյման բէղը, մի անգամից արալը վորումն ջուր կորացրեց։

— Իսկ դուած ազնիւ խօսքդ մւր թողիր։

— Դրա պարասխանը յետոյ, դարողութիւնների ժամանակ չէ,

լրջութեամբ ասաց քահանան, դեռ մի փեսակ անենք, հովուի մօվ հասնենք, որքան և լինի, շունչ է, քիչ ու շափ ասպահովութիւն է. թէպէս՝ շղւնը շանից, երկուսը մի փանից, հովիւը նմանապէտ թուրք է, շունը շան միսը չի ու փիլ:

Քահանայի առաջարկութիւնը սրբի բռպէտական անդորրութիւն էր, պարզ էր, որ մինչև մեր յոզնած զրապահները ու շահացիաց բարձրանալով մի քայլ կանեին, աւազակների ձիանքը հորիզոնական շաւզով երեք անգամ փասը քայլ կը փոխեին:

Մեր ննթագրութիւնը սակայն սխալ դուրս եկաւ, Սուլէյման բէզը մասը վեր բարձրացրեց և իւրացինները բոլորեքեան փեղները մնացին մխուած: Ել չըւսեցինք, թէ ինչ կարգադրութիւն արաւ Սուլէյման բէզը, այսքանը միտյն փեսանք, որ իւր եղանից եկող ձիաւորն առաջ անցաւ և նեղի նման սլացաւ դէպի մեր կողմը: Երկու բռպէտումը նաև իջաւ ձորակը, փոքր տեղ ձին աշխանակելով վեր բարձրացաւ և ձայն գուեց:

—Հովիւ, այ հովիւ, ներքեւ արի:

Հովիւը բառն քայլ հաղիւ մեղանից վեր էր, մենք արդէն մօրեցել էինք իրեն:

Նա թողեց իւր հօվը, ցած վազեց և հարիւր քայլաշափ հեռաւորութիւնից՝ ձայն գուեց աւս զակին:

—Ի՞նչ ես ուզում:

—Հարցըն՝ ով են դրանք, ձայն գուեց աւազակը:

—Ով էք, կրկնեց աւազակի հարցը՝ դէպի մեզ դառնալով հովիւը:

—Երանա՛լ է (генерал) պարասխանեց իւր կողմից յանկարծ բէրպէտի փեսան:

—Երանա՛լ է, կրկնեց մեր ձիաւորի խօսքը հովիւը:

—Երանա՛լ է, ձայն գուեց ձորակի թմբից դէպի իւրեանց խումբը բանբեր աւազակը:

—Դրանց միջից որն է երանալը, պարգամ արձակուեց Սուլէյման բէզից և իւր բանբերի ու հովուի միջոցով պարտասխանը դէղ հասաւ.

—Սոաջից գնացող սպիտակ պոչաւ որ զլիարկ ծածկողն է, եղաւ քահանայի փեսայի սպարասխանը:

— Ապրի փեսաս, տալրի, բացականչեց պէրուէրը, աշխանս համեցոյները մօրդ կաթի պէս քեզ անոնց, իրաւունք եմ դավիս՝ օրական հարիւր համբոցը հազար շինելու Տեսնք, պարզն, փեսայիս խելքը, ֆրանգն ու Խնդլիզը գլուխները քարովն են դուել սրա հանճարի առաջին: Ո՞վ կասէ թէ երանալ չես, գդակիդ սպիտակ փաթաժանի պոչը, որ օդի մէջ խաղում է, հեռուից մրիկ դուողի աչքին, քեզ շահից ու սուլթանից բարձրացնում է: Կաիր, լսիր, ինչպէս են քոքուալով ծիծաղում փեսայիս խօսքի վրաց աւազակները:

Արդարեւ աւազակային խմբի միջից բարձրացաւ, պարզ երևաց, որ ծաղր էր Դէպի իմ երանալութիւնը և հեղնացից արհամարհանք, ըստ որում պատգամաբեր աւազակը շուշացաւ իր սղերի հրամանը հովուի բերանով մեզ հասցնելու.

— Սուլէյման բէզը հրամացում է, գոչեց հովիւը Դէպի մեզ, որ Դուք՝ ձեր երանալին առաջ քցած՝ համեցէք լինիք ցած, Սուլէյման բէզն ուզում է, որ երանալի հետ ձորումը խօշութէշ անի:

Ուրիշ խօսքով՝ այդ նշանակում էր. իջէք ձորը, ձեր յօժար կամքովը ոսքից զլուխ մերկացէք, ունեցածներդ, գուցէ և կեանքներդ. Սուլէյման բէզին մարտաղ դուէք:

— Ի՞նչ անենք, պէրուէր, շփոթուած հարցրի իրիցին:

— Ի՞նչ պիսի անենք, ծափ տանք ու պար գանք. եթէ անիծուած Սուլէյման բէզի երկիւլից կոնճածս օղին ջուր չըդառնար, ես դիտեի, թէ ինչ կանէի, ցած կերիւացի ու անշախմախ հրացանիս կոթով էնպէս կը թրիկացնէի Սուլէյման բէզի զլսին, որ աչքերը բուռը կը կաթէին, բայց հիմի ճարս կփրած՝ պիտի դլուխս թեքեմ, հրամանին սպասեմ:

— Ենւոր, ցած իջէք, գոչեց ներքելից համբաւաբեր աւազակը՝ եթէ մի դդալ արիւններդ ձեզ համար քաղցր է: Սուլէյման բէզն ասում է, թէ էդակս երանալներ հարիւրն է մորթել, Դա էլ...

Աւազակը չըկարաց վերջացնել իւր սպառնալիքը, նա սարսափեց, շուասլով ձիու զլուխը յեպ դարձրեց ու դուաց Դէպի իւր ջնկերները:

— Նա ի՞նքն է:

— Նա ի՞նքն է, լսուեց Սուլէյման բէզի երկիւլալից ձայնը:

— Նա ի՞նքն է, հնեց արձագանգն ամբողջ խմբի մէջ, և ամէնքը

միասին, րոպէական՝ աչք ձգեցին դէպի սարի մեր կիսի արևմբահարաւային կողմը, ու ական թօթափել՝ ամէն մէկն առանձնակի ձին յետ շրջեց ու մորակեց:

Տոպէ չանցաւ, Սուլէյման բէղի և իւր խմբի հետքն անդամ չերեաց. եթէ այն արագութեամբ երկու ժամ՝ աշուանակէին, Գանձակն այս կողմը կը թողնէին:

—Ի՞նչ կը նշանակի, տէր հայր, զարմացական հարց պուի ես? —Կայ, չոկայ, հեր (առիթը) սարի ներքեւի կողմից երեացող երեք ձիաւորի մէջն է, պատասխանեց տէրպէրի վեսան, մաքնացոյց անելով ինձ ձորի ներքեւը կանգնած երեք հեծեալներին:

—Վահ, բացականչեցի ես, մեր նադօն, որքան նմանութիւն:

—Հենց ինքն է, աշոյ ջան, հասրապեց իմ ծառան, չուխէն է միայն փոխել:

—Աացէք, կացէք, զոչեց ուէրփէրը՝ ուշադրութեամբ աչքը դէպի ցած սևեռելով, էդ մարդն իր շնչք ու շնորհքովլը հայ է երեում. չըլինի թէ Յունոն է, թէ չէ Սուլէյման բէղը հարիւր հայից երես չէր թեքիլ:

Մեր խօսակցութիւններն ինքն լսու ինքեան լնդհաւուեցան, երբ մեր հետաքրքրութեան շարժառիթները մեր աչքից հեռացան: Զիսւրբներն իւրեանց զրաստների գլուխները ցած դարձրին և ձորնի վայր գնացին:

### ԺԲ.

—Պէհ, պարոն, ձիանքը շարժենք, աճապարելն անհրաժեշտ է, անիծած Սուլէյման բէղը մեզ ուշացրեց, մեծախօս անպիտան, հպարտանում էր՝ թէ հարիւր երանալ է մորթել, տեսար՝ մնց վախկու շների պէս պոչները փորերի տակը կոխեցին ու դլուխառան, կորան: Երաւ, քեզ պստիկ մարդ ասողի հայրն եմ օրհնելց պարոն, լաւ ես մորածել, գրակիդ վրայ փաթաթած մի կոր կրաւով երկու խումբ աւազակներ շուաքիցդ անհետ եղան. հաւարածակարիդ փալով ասրագլուխ քորոցն էլ երանալութենան նշան կարծեցին. փորձուած մարդ ես. զիգեցողների մօտ կարդարանաս, թէ կրաւը արեի բաքութիւնից ես ծածկել, որ վիզդ չը խանձուի, իսկ քորոցը կրաւը ամրացնելու համար ես կարել, իբր թէ չէր

կարելի առանց քորոցի ամրացնել, կամ հասարակ քորոցն անպէսք էր, անսլադճառ երանալի կրծքի նշանի չափ ասրդագլուխ քորոց էր հարկաւոր. իսկ սարերումը սպիտակ գլխովդ ու ասրդաձև քորոցով երանալ ես ու երանալ:

—Կապակներդ թող, նկատեցի ես զուարծախօս տէրտէրին, թէպէս մասամբ նկատողութիւնդ ձիշդ է, բայց արդէն ժամն երկուսն է և մինչեւ լեռան գագաթը դարձեալ մեզ առ նուազը մի ժամ է հարկաւոր, իսկ մեր դարպարկ սրամնքսներն իրենցը պահանջում են, գոնէ հետդ մի երկու հաց վերցնէիր, եթէ այս կողմովը գալու դիպաւորութիւն ունէիր:

Մեր խօսակցութիւնը կապարւում էր հովուի մօփ կէս ժամ մեր գրասարներին հանգարութիւն դալուց և ճանապարհ ընկնելուց յերոյ:

—Փորիդ հոգսը թող ու ձիուդ քիչ էլ նեղութիւն դուր, մինչեւ այս մի կտորը բարձրանանք և մրնենք ուղիղ շաւիլը. թէ չէ կը ցարմարուի մեր զլիսին վաղի առածը. «գայլի ձեռից պրծանք, արջի հանդիպեցանք»: Աչքդ արևմուտք դարձու, դես ինչ կը գեսնես երկու թմբան միջեւը, մասը ձգեց դէպի ցած տէրտէրին և ցոյց դուեց դամնի չափ ձիաւորների մի խումբ, որոնք, ինչպէս երևում էր, մեծ խորհրդի մէջ էին: Այժմ կասկածելու դեղիք չըմնաց. Սուլէյման բէզին փախցնող երեք հոգին այս խմբի անդամներիցն էին և երեք հոգուց մէկը նադօն ինքն էր, որին հիմա շուրջ էին բոլորեւ դամնի չափ ձիաւորներ և լսում էին նրա պարուերը:

Որքան ես նկատեցի իրանց հագուստներից՝ ձիաւորների եթէ ոչ բոլորը, գոնէ մեծամասնութիւնը նոր. Քայազիդու դաւառացի հայեր էին:

Շար որոշ աչքի էր ընկնում իւր դարազով մի քուրդ. ելէգ նեայ դէգը ձեռքին, վահանը թևին, կեռակրուց սուրը կողքին և շորս ադրճանակ պատեանի մէջ ձիու թամբի զլիսին ամրացրած:

Բոլորեքեան ընդհանրապէս ութից գլուխ զինավառուած էին:

—Ի՞նչ ես քիթդ սրել մտիկ դալիս, պարոն, դարձաւ ինձ տէրտէրը, չես ճանաչում, շափը դրանցից հայեր են ու մէջպելը կանգնածը նա ինքն է, որ Սուլէյման բէզի լեղին ջուր կդրացրեց.

ութէ որ Յունոն չըլլինի, Յունոյից պակաս մօր ծիծ կորոշ չի երեսում: Տեսնում ես, ինքն իր լնկերների մէջ, ոնց որ մի հաւի ճուղը՝ սարերի թագաւոր արծուի առաջին, բայց, ինչպէս երեւում է, մարդի մէջը սիրով կայ. նայիր՝ մնց մասը ցցելով հրամաններ է պալխ ու բոլորը պարի հարսի պէս լոել լսում են:

— Հայ են, թէ թուրք են, ողջ մէկ է, պատասխանեցի քահանային, բայց որ անվանով մարդիկ չեն, անփարակոյս է, մեզ հարկաւոր է շփապել. չես փեսնում, որ շար խորհրդի մէջ են և մեր զլին մի փոթորիկ բարձրացնելու նպարակ ունին:

Արածո զուզ պարուակ էր. ես շար լաւ ճանաչեցի մեր նադոյին, բայց քահանայիցն էի կամենում թագցնել, նադոյի հետքն էի ուղում կորցնել:

— Լաւ հասկացար, ասաց գէրպէրը, մտիկ փուր նրանցից մէկը բաժանուեց լնկերներից և դէսի մեզ է բարձրանում:

— Այո, այն էլ ոչ հայ, այլ քուրդ, վրայ բերի ես, երեխ կամ մեր առաջը կիրով լնկերներ ունին այս մօրերքումը, կամ ուրիշ շար նպարակի համար է շրապում:

— Բարով խերով գայ, դարձեալ կապակաբանեց երկցը, մենք արդէն լնկանք ու լիլ ճանապարհն և երկու բոպէից կսկսենք սարից իջնել, իսկ նա ձիռւն ոչժ պալով ու շնչարգել լնկնելով դեռ մի ժամ լեռ ունի բարձրանալու. մինչև նա մեզ կը հասնի, մենք Ահմօ-բէդի հետ պոօշպի անում կը լինինք:

Հայ, հայ, հայ, հոհուալ սկսեց գէրպէրն և շարունակեց. հանաք չի անում մեր այդ բարեկամը. մեզ մօր պարզամաւոր է գալիս, մտիկ փուր՝ ո՞նց է ձեռքով նշան պալիս, որ կանգնենք Չէ, սիրելի քուրդ, չէ, շար ես ուշացել. այս անզամ քո կորցրածը մեզ մօր չես գտնիլ, այս անզամ մեր երանելը պարզամաւոր լնդունելու ժամանակ չունի, գնա լնկերներիդ ասա, եթէ կամենում են՝ թող շնորհ բերեն Ահմօ բէդի վրանը և կը փեսնին, թէ ինչպէս անվախ, աներկիւլ մի կողըի ձգուել ենք ու զառան խաշլամէն արտամներիս պակին խժառում:

Այս անզամ քահանան իրաւոնք ունէր իւր մնապարծութիւնների ու հեզնութիւնների սլարկի բերանը լայն բանալու. ձիաւորը թեւաւոր էլ լինէր՝ մեզ չէր կարող հասնիլ. մենք արդէն

Փալանթօքեանի կարարին. էինք, իսկ նա սարի քառորդն էլ չէր քարձրացել:

Մի ընդարձակ կանաչազարդ լայնափարած դաշտ փոռւել էր մեր առաջին, օրը պարզ էր և ամարացին, բայց լեռան գլխին անդադար սուացող, անոյշ քամին մեղմում էր արևի կիզիչ ոյժը: Բոպէաբար՝ երկիւղն անհետացաւ մեզանից, մեզ սիրու գումարին լեռան հիւսիսային սփորուում դաշտի վրաց արածող, լրասնաւոր հօպերը: Աւելի ոգեսորուեցինք, երբ սարի տակին գտնուած խոր ձորից դուրս եկանք ու այնուհետեւ մեր առաջի ոլորապուցր, նեղ ու հարթ ճանապարհը հեշտացրեց մեր զնացքը:

Տէրուերն ուսից հրացանն իջեցրեց, փողն ու զլեց դէպի վեր քարձրացող քուրդը, և մարով սպառնալիք անելուց յերոյ՝ գըլ-խարկը հանեց, խոր գլուխ իջեցրեց քրդին և ասաց. գնան, մի հաց կեր, միւսը մարաղ տուր, որ հրացանս անչախմախն է, թէ չէ ճկութիս եղնդի չափ արճիծը հիմի վաշուց սիրուդ խաշած կը լինէր:

Այսպէս թէ այնպէս, մենք արդէն լեռն իջել ենք և բարեւում ենք ամենամօր հովուին, որը ժամանակ չունի մեր ողջունին պատասխանելու. նա հազիւ է կարողանում իւր հաստագլուխ, երկար հովուական գաւազանոմն իջեցնել իւր վոյ զայլսերդ գամփոների կարաղութիւնը, որնք, ալլապէս, անշուշդ մեզ ձիանց վրացից ցած կը քաշէին և կը ծուարէին:

Մեր կրկնակի ու եռակի հարցերին հովիւն այսքանը միայն կարողացաւ կարծ պատասխանել, թէ Ահմօ բէզի վրանը դիմացի Քաշալ կոչուած թափայի (բլուր) միւս երեսին է ու շուրով կը հասնենք:

—Դէ՞հ, պարն, շրապենք, ճանապարհներս հարթ ու կակուզ է, ասաց տէրտէրը, հիմի ձեր բոլորիդ փորի հեր՝ իմ սփամքսս էլ իրաւունք ունի վեց-վեց անելու և Ահմօ բէզի սեր ու կարագի հետ՝ գառան խորովածի ախորժակ ունենալու, ափսհս՝ որ մենք էլ պիսի սրիպուած լինինք աւ եփարանը թողած՝ լուրանի պարուէրը պահելու, էն օրհնեալ հեղուկիցն Ահմօ բէզի մօք չի գտնուիլ, անիւրաւը մարդի արիւն կը խմի, գինի չի խմիլ:

—Իրաւ, այս երէց, ասացի ես, չէ որ դու երեկ երեկոյ ինձ և Զօհրաբ ամուն հասպար խօսք գուիր անսուաղ մնալ և բերանդ կա-

թիլ չառնել, արդէն շատ յարմար տեղ է, երկիւղից պրծանքը խնդրեմ արդարանաս, կիսալուրջ, կիսակագակ կարդացի տրէրտէրի մեղադրամիանը:

— Ես մարդը մարդ չէ ով իր խօսքը չըպահի, շեշպեց քահանան:

— Խնչպէս, չէ որ դու քո քերանովդ խոսփովանեցար, որ երեք

թէլի բաժակ ողի ես դապարկել:

— Միփքդ բեր բառ առ բառ փուած խօսքս:

— Անսուադ զալ և ինձ ճանապարհ չըդրած բերանդ կաթիլ չառնել:

— Ես ես կարարել եմ:

— Ի՞նչպէս

— Մինչեւ էս րոպէն ել անսուազ եմ, բերանս նշխար չի մտելի Ադամայ մութը նոր էր քաշուել, որ ձիս թամբեցի ու եկաց քեզ քնահարամ արի: Էն մը տուող ալրու ցաւն էր կորել, որ քնահարամ լինէր, իր գանից վեր կենար, զար մեր հաւերի թառի վրացից երկու դմութ բռնէր, փետրահան անէր, խաշէր, տաք տաք բերէր կողքիս պատրաստէր ու գար թշերս պաշտօրելով ինձ զարթնացնէր, մի զաւ էլ գինի մօսու դնէր ու իր թիվիկ ձեռներով ճութը փառափէր, (կորափել), մի թիքայ իմ բերանը դնէր, մինն իր. մնացածն էլ հացի մէջ փաթաթէր, ինձ համար պաշար կապէր: Անգէր, անփիրական, կոյր բալդից հալածուած մի զզզզուած դէրփէր եմ. իմ գիրուհուն Ասկուած ինձ շատ համարեց, ձեռից առաւ, ուրիշ տէրտէրների էլ խղճմկանքն է բարձուել, թէ մէկ մէկ շաբաթը մինը՝ հերթով՝ իրանց գիրուհիներին ինձ հիւր զրկէին: Խնչպէս որ Զօհրաբենց տանն երեկ երեկոյ քեզ հետ բերաններս փակել ենք, էլ հաղի փշրունք չի արամիս տակն ընկել:

— Այդ առաջին մասը, իսկ երկրորդը, հարց ուրի ես՝ երբ քահանան լոեց:

— Ես էլ քեզ քաջ հայագէտի տեղ եմ դրել, դու հօ հայոց լեզուի մէջ մեր զաւառի վերջին տղէտ քահանացից աւելի բոբիկ ես եղել, որ մի կաթիլն ու երեք թէլի բաժակ հեղուկն իրարից չես կարողացել որոշել. լաւ վերլուծիր. կաթ, կաթ, կաթ=կաթիր. քո թանգադին արևովն եմ երդւում, մի անգամից էնպէս շպրտեցի, որ հափ կաթիլ չըմնաց բաժակումը. զիժ հօ չէի, որ քեզ պէս մեծ

մարդի մօք խոսքմնազանց դուրս զայի: Տէր Մ-ը մինչեւ օրս ինչ խօսք փուել է՝ կարարել է: Ինձ ու րիշ գլուխէրներից չըկարծես, որ երեւահանց հրեշտակ են ձեանում, իսկ ներսից սարսանին թարս են նալնում, սարսանին էլ խարում են: Զէ, սիրելիս, աէր Մ-ը պարզ մարդ է, ամեն բան բաց աշխարաց է անում: Ես զինի խմում եմ, պարում եմ, լուսով այրիներից մի երկուսին զրկում եմ, չըհաս պասկ եմ կարարում, շաբաթներով՝ երբ ժողովուրդը Դաշտավին գործերի հետ լինելով եկեղեցի չի յանախում, ժամ չեմ ասում, աթոռապարկան հատցթի կհան ուզում եմ, մեսելի հոգերաժինը կամ ինքս եմ սպանում, անուշ անում և կամ գալն արգելում եմ և ամէն ինչ որ գէրգէրին արգելուած է, անում եմ: Եդ պատճառաւ, Պարի չի անցնիլ, որ ամիսներով ու շաբաթներով քահանայազործութիւնից չըզրկուիմ: Վիլոն ծածկելու իրաւունք չըկորցնեմ:

— Ես այդ բոլորը լսել էի, բայց ինձ թոյլ չեի բալիս քեզ հարցնելու:

— Եաւ զուր, քան թէ կեղծաւորում էիր ու սրբում: միշտ կասկածներ պահում, աւելի լաւ էր ինձանից մէկ մէկ կը հարցնէիր և սպասախանը կը սպանացիր:

— Դարձե ալ ուշ չէ:

— Քիչ ուշ է և զեղին անյարմար, բայց երկիր ջն անցաւ, Ահմօ բէզի վրանը ոսքներիս գակին է, կարող եմ կարծօրէն քեզ քիչ ասել և դու շաբ հասկացիր:

— Իմ բոլոր պակասութիւններս կարելի է երկու կարգի բաժանել, շարունակեց գէրգէրը: առաջինը՝ ինչպէս մեղանչական մարդ՝ ենթակաց եմ մարդկացին թուլութիւնների, որովհետեւ քառասուն դարին չըմուած երիտասարդ եմ, անժամանակ զրկուել եմ պիրուհուց և գաք բնաւորութեան գէր եմ: Այդ բանում ես աւելի ներողութեան արժանի եմ, քան թէ ժամանակիս գէրգէրներից շաբերը, որոնց գիրուհիների վարդ պատռած թշին մագի ծէրով թէ թիազէս, արիւնը մօրուքդ ու երեսդ կը ներկի, բայց էլի աչքներն ուրիշի դրանն է: ու մի քանիսի գեղն էլ գիտեմ: որ մէկի գեղակ երկու կնիկ են պահում: Բայց ես իմ խոսքովանած յանցանքի համար երկու անդամ գիլոնազուրկ եմ եղել, իսկ իմ սիրելի կարգակիցները համ անում են, համ մարսում են և գեղումն էլ պարիւ:

ունին ու սպարգեների արժանացած են. որովհետքե... Տէր Մ-ը  
բութն և ցուցամապն իրարու շփեց: Իր թէ կաշառք են ուղում:  
Իսկ ինձանից հար կոպէկ չեն կարող սպանալ, շարունակեց քա-  
հանան. սպարան չեմ տալ, որ վիզնիրը քցեն ու կախուին Չեմ  
թագցնում, առողջ կազմուածքով, ախորժակս տեղը, բնաւորութիւնս  
ուրախ, սիրոս բարի մարդ եմ; իմ ժողովուրդը՝ բնութիւնիս հետ  
հաշրուել է, փոշեփեսակ սխալմունքներիս ներողամրաբար է միիկ  
պալիս ու չի գայթակղւում: Ուրեմն ումնից ինչ ունիմ թագցնելու.  
Ծող ինձ դափողները, ով ինձանից աւելի անմեղ է, առաջին քարն  
ինքը զլխովս դաբ: Եդ ընչթցն է, որ կաշառքով սարի չափ մեղքերի  
դէմ աչքեր կը փակեն, իսկ տէր Մ-ի աւազի հարիկը քարափի տեղ  
կընդունեն. Էդ ընչթցն է, որ իրանք և կը դործեն և վերի բար-  
ձին կընարեն, իսկ իմ լուի չափ պակասութիւնս ուղարի տեղ կըն-  
դունեն: Չէ, պարոն, չէ, աշխարհքս տես և ուս է, իրարոցից տես-  
նում ենք և ուսանում ենք. մեռել են, կորուել են, մինչեւ իրանք դարձ  
չըգան, իրանց յանձն առած սպարգաւորութիւնները չըկապարեն,  
ես իմ սովորութիւններից յետ կենալու չեմ: արել եմ, անում եմ  
և պիտի անեմ: որ տեղ բարակի՝ էնորեղ կորուի:

—Կարծեմ՝ մեծ սպասի չափ բացադրութիւններիդ մէջ զեկեղ-  
ուեց քո երկու կարգի բաժանած սպակասութիւններդ. այնպէս չէ,  
ընդհարեցի տէրուերին:

—Ոչ, դեռ առաջին մասն էլ չըվերջացրի, բայց որովհետքեւ  
անհամբեր ես, այդքանով բաւականանք և երկրորդ կարգի սպակա-  
սութիւններիս մասին դափողութիւնն ուանքք: Ասացի, որ ես արգելք  
եմ լինում աթոռապարփան և վիճակապարփան հասոյթներ տալուն,  
քամ ինքս եմ սպանում և ուղում:

Այս բանն իմ ամենածանր, մինչեւ անդամ՝ մահացու յանցանքն  
է: Հայոց ազգն ապրում է և դոյութիւն ունի իր եկեղեցովն ու  
վանքերովը. իմ կարճ խելքով՝ կործանիր եկեղեցին, բնաջինջ կը լի-  
նիս և դու. իսկ եկեղեցին ու վանքը դափարկ քար ու կիրը չեն,  
ժողովուրդն ինքն է, իր ընտրած հոգևորականներն են, իր Ասուծու-  
սպաշտօննեաներն ու իր կրօնի աւանդապահ սպասաւորներն են. իսկ  
եթէ ժողովուրդը մասնաւորապէս ապրուափ կուզի ապրելու համար,  
իր եկեղեցու սպաշտօննեաներն էլ բերան ու սպամոքս ունին, նրանք

էլ նախ մարմնի հոգսը պիսրի քաշեն, որ հոգւով զօրացած՝ և՛ ծառ ուղեն և պիտանի դպնուին, և զործեն և ուսուցանեն, որ իրանց առաքինի վարք ու բարքով իրանց հովուած հօփին զեկավարող լինին, և ի հարկէ, ացդ լնութեալները Սիօնին են ծառայում, Սիօնից պիրի ուղենու, այնպէս չէ:

—Անշուշտ:

—Քայց հիմա քեզ եմ հարցնում, դու կը պահե՞ս քո այն մշակներին, որոնք փոխանակ այդիդ մշակելու, ծառերդ արմագիցն են կորում ու չորացնում և այդիդ ամայացնում։ Ասա ինձ, արժանի են ներկացիս վանքերի համել պարառով փորերը ու գործադրություններից շատերը վանքի հացով ապրելու։

—Քո խօսքի և գործքի մէջ ես հակասութիւն եմ պեսնում, պարասխանեցի տէրպէրին.

Դու աթոռապարկան հասոյթներն ինքդ ես ուրում, կամ կորում ես, որ մեր եկեղեցու պաշտօնեանները քաղցած մեռնին, կամ հեռանան, իսկ միւս կողմից մոռանում ես, որ ինքդ քո ձեռքով մեր կիսաւեր քար ու կրի չենքերը հիմքից խսպառ կործանում ես. ի՞նչ է հօփն առանց հովոի, ի՞նչ է մեր աշխարհականութիւնն առանց հոգեորների, ի՞նչ է քո եկեղեցին առանց սպասաւորների։

—Այս, մի կարճ միջոց զնասը մեծ կը լինի, պարասխանեց երէցը, ժողովութը կը սառչի իր աթոռից և իր տուքը կը կորի. աթոռի ձրիակեր պաշտօնեանները քիչքիչ կը վերջանան ու մի առժամանակ ամէն շարժում կարծես կանդ կառնի, բայց հոդ չէ, վագերը կը վերջանան, լաւերը կը շապանան և ամէն բան նորից կարդի կը նկնի:

—Իսկ դու քեզ որմնց կարգումն ես դնում:

—Ո՞է, բերանիցս դուրս դայ, քամին բանի, լաւերը շուր զլուխ կը բարձրացնեն, ես օր ծերութեան կամ կսկսեմ օձի պէս հին շապիկս նորողել, որ էս հասակումս, աչքովդ էլ փեսնես՝ մի՛ հաւափալ, կամ թէ չէ սրբաճափ կը լինիմ ևի գոգն Աբրահամու կերթամը և կամ փասափուաէլ կը քաշեմ, տէրպէրութիւնին «Հոգոցն հանգուցելոց» կասեմ, օրական էնքան կը կոնճեմ, որ ոչ աչք բացանեմ, ոչ պաշտօն կապարեմ, ոչ ժողովրդին զայթակլութեան պարանառ լինիմ։ Կապակը մի կողմը, պարոն, մեր նմաններն այսուհետեւ

աւելորդ են, աշխարհն օր ըար օրէ լուսաւորւում է, Ասպուծով եկող նոր սերունդը կըքննի չարիքի էական պատճառներն և իր եկեղեցուն կընուիրի անձնանու էր պաշտօնեաներ, որոնք նոր շունչ, նոր ողի կը թափանցեն ժողովրդի մէջ և կորցրածի կրկնապատիկը յեւ կը բերեն:

—Եդքանը որ հասկանում ես, այ երէց, ընչի ես ու րիշներին շաբապարտում, աշխապիր ինքդ քեզ աղապ կացուցանել մեղադրանքներից և թող ուրիշներն էլ քեղանից օրինակ վերցնեն:

—Զէ, սիրելիս, ես հասպացած ծառ եմ դառել, ինչպէս եկել եմ, էնողէս պիպի զնամի Խնչ ես ասում, պարոն, ախար ես մնց ուղղուեմ, ինձ պատուիրաւմ են չըհաս չըպասկել, իսկ իրանք այդ անլուծելի պսակափիրոջ ձեռքը մի կոտր թուղթ են դալիս երկուշաբաթից, ուղարկում ինձ՝ թէ պսակիր. Բնչ է թէ կթել են. գօ, բարի մարդ, թէ կթելու էր՝ ես կը կթէի. իմ ոչիարը դու ընչի իմ ձեռից խլեցիր...

—Տէրտէր, Փէրտէր, մի յեւր մորիկ դուր սարն ի վեր, գոչեց աներոջ քամակից եկող քահանացի փեսան:

—Դէն, քո խմած թանը քթերից իջնի, յեւր նայեց և բռունցք ցոյց դուեց քահանան Փալանթօքեանի գագաթից ցած նայող քրդին՝ մոռանալով իր երկարաբանութիւնը. մնց ես հիմի յեւր դառնամ, գամ, գաւազ մնովս զլուխտ երկու կէս անեմ, նայեցէք, նայեցէք, դեսէք մնց և ձեռքով անում, լսնւմ էք՝ ձայն է դալիս, թէ գնացէք. հապա չէ; քո հրամանին կապասենք, չէ, էշ, քուրդ, չէ, մենք քո և ընկերներիդ ատամի մարդիկ չենք, մենք Սուլէյման բէգին փախցրինք իր երեսուն ձիաւորների հետ, դուք ինչ էք, մւմ շունն էք, որ հինգ, դասը հոգւով համարձակուիք մեր առաջին կանգնիլ:

Սրդարի մեր եպուից ընկնող քուրդը կանգնել էր սարի գըլ խին և գուռում:

—Գնացէք, մի՛ մնաք, շփապեցէք հասնել Ահմօ բէզի օգաները:

—Տօ՛, կորի, ասում եմ, վախկոր նասլասպանի, նորից սպառն սուլիքներ արեց քահանան քրդի հասցէին, թէ չէ էս բոպէիս կը բարձրանամ սարը, մի ձեռքով քեզ էլ, քո ձիուն էլ էնողէս կը հրեմ, որ

գլուխով՝ գալով՝ կընկնիս ընկերներից որի տակն ու մեծ թիքէ՛  
ականջդ կը մնայ:

— Գալի ու այծի առակը գիտես, տէրտէր, գոչեցի ես:  
— Ե՞ն ես ասում, որ այծը վերևից՝ ապառաժ քարտի վրայից  
ապառնում է ներքեւից իրեն նայող քաղցած գայլին ու ասում:  
— Բնչպէս ես յանդնում վրաս նայել, կորիր աշքեց, թէ չէ ցած կը-  
գամ, պոզ փորդ կը կոխեմ, աշկը կը թափեմ: — Ա'ն, միայն ինէ  
դու ցած արի, կուզես այդ սիրունիկ մանր ոսկերովդ գլուխս տրո-  
քիր, հառաչելով պատասխանել է գայլը:

— Զանազանութիւնն այսքան է, ասացի ես, որ այժմ գայլը  
վերևն է, այծը ներքեւ:

— Դիցուք՝ մօրուքով ես այծին ազգակից կը գամ, բայց քո  
արած համեմատութիւնով մի քիչ շափը մոռացար, էնպէս չէ, կէս  
հանաքով, կէս վշարցած պատասխանեց տէրտէրը:

— Ներողութիւն եմ խնդրում, տէր հայր, անշնորհք կապակիս  
համար, սիրուն առայ քահանայի և լրջօրէն ասացի:

— Սակայն, տէրտէր, քուրդը մեզ երեւի մի լուրջ ասելիք ունէր,  
իսկ մենք շատ անքաղաքավարի դպնուեցանք:

— Մեռնի, լսողը չեմ, շիշորեց տէրտէրը, մինչև Ահմօ բէզի  
տանը փորիս կուղալը չըդնեմ (չըկշրանամ), որ փոխելու չեմ:

Ասաց տէրտէրն և ձիուն մըրակեց:

### ԺԴ.

— Ո՞վ է ասած? Ահմօ բէզը, տէր հայր:

— Ահմօ բէզը Ղարաբաղուկոյմերի էլքէզիներից ամենից անուա-  
նին է:

Դեռ նրա ինչ պառուշ լինելը թողած՝ եթէ կամենաս, ես քեզ  
կարճօրէն տեղեկութիւն կը տամ ընդհանուր էլքէզիների մասին  
պատասխանեց տէրտէրը լրջութեամբ: Ես թէպէփ Ղարաբաղու-  
մարդ չեմ, բայց լաւ ծանօթ եմ այնփեղից մեր կողմերը սար եկու-  
թուրք էլաթի (համայնք) վարք ու բարքին, մանաւանդ այդ հա-  
մայնքների գլխաւորներին շատ լաւ եմ ճանաչում, զարկուաց կար-  
միր ձուի նման բոլորին արամովս եմ տուել, դրանցից շատ քի-  
չերը կը լինին, որ իմ հացի պառունիը կորած չըլինին. աչքները

բռնի ու կուրացնի՝ անաղուհաց շներին։ Ներս են գալիս, հացդ ուփում, դուրս են գնում՝ դաշտիցը փաւարդ են քշում փանում։ Եւ դերդէրն իմ կողմից հաճութիւն չարացած՝ շարունակեց։

— Ամէն ամառ մեր սարերը լցում են հազարաւոր զարաբաղցի անասնապահ սարւորներ։ Մեր այս հսկայական լեռները, որ անծանօթի համար մժում են աւելորդ փեղ բռնող բարձրութիւններ, որոնք երկրագործութեան համար անպէսք են, անասնապահութեամբ պարապողների համար հարստութեան անհապնելի ալլրիք են։ Թէ ինչով են կերակրում իրանց հօտերը, ջոկերն ու նախիրները Դարաբաղի անասնապահ թուրքիրը, այդ դու ուրիշից կարող ես հարցնել, իսկ ամառը եթէ մեր սարերն իրանց արօդարեղը յագկացրած չըլինէին, սովամահ կը սափէին։

Գես նոր զարնան բերանին՝ արևկող փեղերից ձիւնը հալուած է լինում, դեռ աև ընկած փեղերում կանանչի ծիլը չը քշած, արդէն Դարաբաղի թուրք էլաթի ուխարը զլուխը կախ, անցեալ փարուանից մնացած չորացած խոռերի փշրանքներն է ժողովում և և իր փորին կեր փախիս։ Այդպիսով՝ ձիւնի աստիճանաբար լիռները բարձրանալու հետ՝ սարւորն է անբաժան դէպի վերէ յառաջ շարժուում Անիծածներն ինչպէս էլ ցրոին դիմանում են. կին, ընդունիք, երեխայք կիսամերկ ու բորիկ ողջ օրը բաց երկնքի դոկ թափուած են. բացի մի-մի թաղիքի կամ մազագործ փալասէ վրանից՝ ոչինչ ծածկ չունին, որ արևին ու անձրկին, պարահում է, և ձիւնին պալին կուչ գան։

Եդ միւնոյն վրանի դակն են և իրանց դնդասական բոլոր պարագայքը՝ կաթ, մածուն, պանիր, իւղ, բուրդ բոլորը խառն ի խուռը լցուած է այնպեղ։

Գալիս դեղաւորւում են լեռների զանազան փեղերում որոշ համայնքներ իրանց էլքէզիներով (համայնքի զիստար)։ Վերջիններիս լիակատար իրաւունքն է կառավարելու իւր հսկողութեանն բանձնուած էլին, կամ համայնքին։

Սխալուած կը լինինք, եթէ կարծենք, թէ իշխանութեան գուած արփոնութիւնով, կամ ընդուղական սկզբունքի իրաւունքով էլքէզիները դիրում են համայնքին։ Թէ ինչպէս է կազմակերպուել սկզբումն այդ մի դեսակ ստորակարգական իշխանութիւնը, դժուար

է քննել; բայց արդէն այդ կարգը ժառանգականութեան գեղաշկանութեամբ սրբագործուած է և համայնքն անորոշունջ հնազանդ է իր պետի հրամանին, առանց նրա լիակատար տնօրինութեան՝ ինքնաղլուխ դործ չի բանում և զլուխը կախ՝ իւր ունեցածից որոշ մասն է հանում իւր նահապետի համար, որի անունով իւր համայնքը թէեւ ոչ օրինաւոր և հասպատուն ճանապարհով, բայց կոչուում և ճանաչում է: Այսքանը չէ միայն, համայնքը պարծենում է իր պետով և պարբասոր է իր զլսաւորի անունը բարձր պահելու, կամ նրա դիրքն իրանց ընդհանուր հասարակութեան մէջ բարձրացնելու համար արիւն թափելու:

Եւ թափում է նաև Ահա ինչպէս:

Աւ շադրութեան չառած երկրորդակարգ էլքէզիններին, առաջնակարգ հոչակուածները միմեանց հետ դարաւոր ոխերիմ թշնամութիւն են շարունակում:

Ինչպէս պարսկական շողոքորթութեան ենթակայ ժողովուրդ, նրանք՝ այդ մեծամեծները միմեանց հանդիպելիս արսաքուսոր իրար սիրաշահում են, անդամ միմեանց մօր երթեւեկում և հիւրասիրում են, բայց չեն ինսացիլ յաջող դէպքերում իրար արիւն խմել:

Առիթն անպահաս է, հերիք է, որ մէկ կամ միւս համայնքի համար օրէնքով յարկացրած արօգագեղի վերայ դիպուածով երեւաց միւս համայնքի մի հար ոչխարը, կամ երկու երեխայ հակառակ էլերից դաշտում իրար հետ կոռւեցին:

Մէկէլ էն կը տեմիս, որ երկու կողմի էլքէզինները զէնքերը կապած, իրանց հապատակ քաջերով յարձակում դործեցին միմեանց վրայ ու կորորեցին, մինչեւ որ մի կողմը յաշթող հանդիսանայ և միւս կողմը խոնարհի Հոգ չէ, թէ երկու երեք հողի Մահմետի դրախտն են գնացել ու գասնաւոր մարդիկ վիրաւորուել են. չէ որ պայունի կախ է, չէ որ էլքէզու անոնի և իրաւունքի հետ իր համայնքի նշանակութիւնն էլ բարձրանում է իրանց ընդհանուր հոսարակութեան շրջանում: Եւ այս արիւնեղութիւնները յաճախուի կապարւում են առանց դի. անին մի ծայն կամ շշուկ հասցնելու: Խօսք չունիմ, զու ցէ մերձաւոր իշխանութեան սրորին պաշտոնեաների ականջը լուր հասնում է, բայց նրանց հաշիւն է անցուկ մոռանցուկ անել ու այդպիսով թէ իրանց զրագանը և թէ հարե-

ասն էլքէզու սիրով շահել։ Գառը, սեր, կարագ, մածուն, այս  
ամենը շատ դուրալի բաներ են։

Տացի իրար միս ուգելուց, ուրիշ դարերով նուիրագործուած և  
առհմական արիւնի հեր մէրուած սովորութիւններ էլ ունին էլքէ-  
զիները։ Նրանք աւազակացին խմբերի են հովանաւորում ու տեղն  
եկած ժամանակ՝ ինչպէս կեանքի փոփոխութիւն՝ իրանք էլ հեռու  
չեն երթեմնապէս խմբապետութիւն անելուց։

Ի՞նչ վնաս, թէ մի զիշեր իր համայնքի կորիճներն եփել քցած՝  
նոր-հայազիդի գաւառի, կամ Սիսիանու վիճակի, կամ Նախիջեանի  
կողմերի դաշտումն արածող ոչխարի հօտը կամ գութանի եզները  
կը քշի, կամ Երասին անց կը կենաց, Պարսից հողումը կը ծախի  
ու օր ցերեկով ազար համարձակ կը դաց իր համայնքին գլուխ քա-  
շելուե կամ ուղղ սկի գողացածը կը բերի կը խառնի իւր ապրանքին։

Ոչոք կասկած դանելու իրաւունք չունի, Սիւնեաց լիոներումն  
աւազակախմբերն անպակաս են։ այս վերջին դէպքն էլ նրանց կը  
վերագրուի ու կանցնի։

Բայց այդ միայն պաշտօնական դեղերի ենթադրութիւնն է,  
և շատ հաւանական ենթադրութիւն։ Հաղիւ չէ պատահել սահմա-  
նապահ զազախներին կամ տեղական իշխանաւորներին կապաղի կոիւ  
մշել աւազակախմբերի հետ։ Գիւղական խաղաղ ազգարնակութիւն-  
ները սակացն ենթադրութիւնների կարիք չունին. Նրանք հասրապ  
գիտեն, թէ իրանց ապրանքն ով դարաւ. հոդ չէ, թէ խսկապէս  
աւազակախմբի արարք ևս է. զիւղացու փոյթն է լինում շփապով  
դիմել այս և այն էլքէզու ոտքը, նրանից իրաւունք սրանալ,  
մինել նրա սեպհական կամ հէնց էլեամթի սախրի, հօգերի, ջոկերի  
մէջ, ընսպել իր սեպհական դանուլ դուած ապրանքը, բերել կանգ-  
նացնել էլքէզու աչքի առջև, սակարկութիւն անել, արծողութեան  
կէս կամ քառորդ գինը վճարել և իւր անասուններն առաջ վարել  
ու դանել.

Եւ թնչ կարծիք, որ այսպիսի խելօքների արածն աւելի խո-  
հեմութիւն. և շահաւելու է, քան մի քանի դարարկագլուխ սնա-  
պարծների, որոնք կը փորձեն իշխանութեան իրաւամբ յեր բերել  
իրանց կորցրածը, և մենք կաւելացնենք՝ յաւիրեան կորցրածը։

Էսպիսի որսածանգութեան դէպքում՝ որսկանները կրօնակցու-

թեան կամ ազգակցութեան խորութիւն շափ սակաւ են անում և եթէ առհասարակ թուրք գիւղերի ապրանքին քիչ են մօդենում, այդ թուրքերից կրած երկիւղն է և ոչ հաւաքակցութիւնը:

Թուրք գիւղացիներից շափ անգամ կողոպտղներն իրանք են պուժում. ձեռաց զինավառում են զեղջուկ թուրքերն և կուր մղում իրանց ապրանքին դիալոյների հետ: Զես գրնիլ մի գիւղցի; Թէ կուղ դառն աղքափ թուրք, որ տանը մի քանի կոր զէնք չը պահի. քաղցած մնում են ու նախ զէնքի համար են փող գնափեառում: Դաշոցնը հօ ամենքի կողքից կախ անբաժան ընկերն է՝ հար. կաւոր ժամանակ տիրոջը պէտք գալու:

—Խելացի զործ, բացականչեցի ես:

—Բայց հիմա հարցրու քո ազգակիցներից, քանիսի՞ տանը մի հար ժանգու զէնք կը գրնես. այն էլ միայն Դարալագեազի ժողովրդի մէջ: Ի հարկէ, խօսքս Սիսիանու և առհասարակ Ղարաբաղի քաջասիրու հայերի համար չէ, որոնք զէնքն իրանց հարազափ որդոց ու եղբացրների պէս են սիրում: Ես ակնարկում եմ այսպեղ մեր հիւսիսացին հարեւանների՝ Գեղարքունցի հայերին, որոնց զէնքը միայն գերանդին ու մանդաղն է հունձ անելու համար. գնաշէնների վառելանիւթն անասնոց աղքն է, գոնէ փացր վառէին, որ մի կացին սահէին, որով տեղն եկած ժամանակ՝ իրար զլուխ ճշելու սպառնալիքներ անէին: Ի հարկէ, դառն կարակ է արածս, թէ չէ հայ ու արթւն. լսուած բան է:

—Ընչժու, մեր փրկիչների մեծամասնութիւնն ինքո՞ չէիր ասում, որ հայ են:

—Սուլէյման բէգին փախցնողների մասին է խօսք:

—Այս:

—Հր՛, ժպրաց փէրտէրը, հազարաւոր ինձալէս հայեր թող մատալ գնան նրանց միջի մի թզաչափ լլար տղացին, որին դու չըգիտեմ, բայց ես Յունոն կարծեցի, և հասպափ կարող եմ ասել, որ նա էն գառան մորթու մէջ...

—Սոիւծն էր:

—Առիւծն էր, այս, բայց ինչ արած, հազարաւորների մէջ մէկ մարս խուզի, Ասգուած Յունոյի կոսնը կենայ (օգնական լինի), Յունոն ինչպէս ասացի, մի առիւծ է ոչխարից կամ կովից ծնած. Յունոյի

սրբութութեանն են պարպատկան էս կողմերի հայերը, որ նրա լոյս  
ընկած օրից՝ ոչ մի գիւղի հասր փողի վեաս չի դիպել, Յունօցի ահն  
է, որ Հարաբաղի կողմերից եկած, մեր աշխարհը քար ու քանդ  
աւերող արենխումներին ծակերն է կոխել ու աւազակութիւնները  
պահասել են. այն, Սուլէյման բէղի ճանդից մեզ ազարովը Յունօն  
էր, ու իր մարդիկն էին, թէ չէ Սուլէյման բէղը քո զլիսիր Փըռ-  
ֆլուացող մի զազ կփառից վախեցողը չէր: Հա, հա, Յունօն էր,  
անպատճառ. Յունօն էր, շեշտեց մէրոքէրը:

—Եւ շաբ էլ լաւ է անում Յունօն, ասացի ես, խորո՞նակին  
խորո՞րնակ, մինչև երբ պիտի հայը թուրքի ձեռքին մուկը դառնայ:

—Ի՞նչ անես, որ երկարադու չի լինելու Յունօցի ասպարէզը,  
նկատեց քահանան, իր կորիճութիւնի հետ եթէ փոքր ինչ էլ խե-  
լօքութիւն ու հեռագիտութիւն ունենար, նզարակին հասած կը  
լինէր: Անիծած թուրք աւազակներն աւելի վսպահ են գործ դնում  
իրանց արհեստը, քան թէ ես իմ քահանացութիւնը: Ընչու: Որով-  
հերև կողուպրածից անխնաց բաժին են հանում էն մարդկանցը,  
որոնց ձեռքին է իրանց վիճակը: Դիցուք՝ շապուէլ խսդիւ պատուի-  
րած է վերելից ամէն հնարք գործ դնելու, աւազակութիւնը վեր-  
ջացնելու և խեղճ ժողովրդին պէր ու պիրեկանութիւն անելու,  
բայց ինչպէս է կարարում էդ սուրբ պարպականութիւնը: Էն ո՞ր  
խելքն աղ ու հացի հետ էերած մարդը կը լինի, որ իր հացին քա-  
ցով կը տայ ու իր ծոցը պազացնողի ճանապարհը կը փակի: Ի՞նչ  
կայ, ով է համբաւը դեղ հասցնողը: Օրինակ՝ լուր սպացար, թէ  
այս ինչ զիւղի կամ մարդի փաւարը փարել են. ձիաւորուիր, հա-  
րիւր ձիաւոր քամակիցդ քցիր, մի քանի ժամ չօլերը շափիր ու արի  
արդարացիր, թէ հինգ օր հինգ զիշեր քունդ կորել ես ու չես դուել  
աւազակներին, կամ թէ հանդիպել ես, հետները զէնքի ես բռնուել,  
մի երկուսին վիրաւորել ես և դեղի անյարմարութիւնից, կամ  
ուրիշ պատճառներից սպիսուած ես եղել ձեռքից բաց թողնել:

—Իսկ Յունօն, հարցըրի ես.

—Յունօն կոպիր հացութիւն է անում: Եւ այդ պատճառով  
Յունօն աչքի փուշ է դառել երկրի վրայ աչք ունեցողների համար.  
իսկ ցիմար կը լինի էն մարդը, ով փուշը կը թողայ իր աշքումը  
ցցուած և չի աշխատիլ հանել ու կրակ փալ: Արի ես քեզ հասպակ:

խօսք դամ; որ Յունոյի ասպարէզը շաբ կարճ կը լինի. մի ամսից, մի դարուց կը լսուի, որ քո Յունոն Սիբիրի ճանապարհին է, թէև նրա մեղքն այսքան է միայն, որ ժողովրդի արիւնը ծծողների արիւնն է խմում... Է՞ն, պարսն, ինչ եմ երկու ժամ գլխացաւանք դրալիս քեզ, յոգուց քաշեց քահանան. քեզ էլ, ինձ էլ, աշխարհքին չէ էս բաները յայտնի են, էսպէս եկել է, էսպէս էլ գնալու է: Ճաւն այն է վերջ դանք, մօդենում ենք ահա Ահմօ թէզի օբաներին (վրան-ների խումբ), ձևացրու՝ որպէս թէ ոչինչ շըդիբես և ինչպէս ես գործը կը դանեմ դու այնպէս քեզ պահիր:

— Բայց դու իմ գլխաւոր հարցին պատասխան շըդուիր, այ երեց, և միայն ճռոռմաքանութիւնների կծիկը յնու դուիր. ես քեզ հարցը Ահմօ թէզի անձնաւորութեան մասին:

— Այդ հարցմունքին ես մի խօսքով պատասխան կը դամ: Ահմօ թէզը բոլոր էլքէզինների ամբողջացած գումարն է: Նա միակ մորդն է, որի մսի վրայ ոչ մի էլքէզու ափամը չի գործում, ուստի և ամէնքից հաւասարապէս յարգուած է: Միակ նրա աչքի գրոյն իր մօդիկ հարեւան Դարալազեազինների էլքաշի նասիր թէզն է. իսկ այդ արգելք չի լինիլ մեզ այսօր Ահմօ թէզի մօգ սիրալիր հիւրընկալութիւն գտնելու: Այդ յարկութիւնը ընդհանուր է բոլոր էլքէզինների համար: Դուրսը մարդի արիւն խմոր լեռնական համայնքների այդ պետերն իրանց վրանի ներքոյ չափազանց հիւրասէր և քաղցր են, մանաւանդ՝ եթէ իրանց հիւրը հրամանոցդ պէս իշխանաւոր և իրաւունքի որէր անձն լինի:

— Ի՞նչ կատ ունի իմ պաշտօնս Ահմօ թէզի կենցաղավարութեան և վայելած իրաւունքների հետ, զարմացած հարց դուիր դէր-դէրին:

— Այս, շուրով կը դեսնիս, որ ունի. թէ յոյսս հասպար է, որ դերդ յաջողութեամբ պիտի կարարես:

Բայց բաւական է, այսքանը միորդ պահիր, որ Ահմօ թէզն իմ մօգ ծանօթն է ու բարեկամը, և ահա ինքն իր ծեր գուշով՝ իր ուսումն է մեզ դիմաւորում, ասաց տէրպէքն և ձիու դլուխն ուղղեց դէպ սպիրակամօրուս, բարձրահասակ, բայց ծերութիւնից փոքր՝ ինչ կուցած էլքէզին:

ԺԴ.

Զշոր երեսով, մանր, կապոյք աչքերով մի կացրառ, մօրուքը հինա դրած ալևոր արագ-արագ շփալում էր Դէպի մեզ:

Նա թեմիւրէն գլուխ տուեց ինձ և ժպառալով քահանացի երեսին, կամենում էր թեքուել նրա կողմէ:

—Դէպի թօրփաղ-երանա՛լը, Դէպի թօրփաղ-երանա՛լը, յօն-քերը ցած թողից և լուրջ Դէմք առած՝ պատիկառանքով ձեռքով իմ կողմէ ցոյց տուեց տերպէրը թուրք էլքէգուն. գլուխ տուր, լաւ պարիւ տուր. երկու քայլաչափ յետ մնալոյ ինձանից, ձայնը կոկորդի մէջ խեղդած՝ փսփսաց նա: Հասկացիր, ամեն բան սրա-իրաւանց տակ է, սրանից է կախուած:

Ահմօ բէզը գոյնը տուեց. Նա կանգնեց և ամենայն ակնածու-թեամբ խոր դլուխ տուեց ինձ:

—Ենքը շատ խիստ մարդ է, թօրփաղ-երանայների գլխաւորն-է, բայց իմ լաւ բարեկամն է, քո խաթեր եմ հետը ձի նարել, եկել, ականջս է ընկնում երկեցս քահանացի փսփսոցը Ահմօ-բէզին ուղղած:

—Նուր, մի ուշանաք, մանուկներ, մերաքսեայ վրանը տնկե-ցէք, դառը մորթեցէք, երեսը շրջելով Դէպի իւր եպեից եկող դասնաւոր հապալակները, տնօրինեց Ահմօ բէզն և մօր վազեղ-ձիուս սանձը բւնեց և յասաջ քաշելով՝ գոշեց:

—Սսրուած երկար կեանք տայ մեր թօրփաղ-երանալին, մեր գլխի, մեր աչքի վրայ է շնորհ բերել:

Տեղական կեանքին անծանօթ մի անձնաւորութիւն ոյինչ չէր հասկանալ անշուշր քահանացի խորհրդաւոր խօսքերից, իսկ ես և Ահմօ բէզն իսկոյն երկուսս էլ մեր դերերի մէջ մրանք:

Քահանան ինձ ներկայացրեց իբրև թօրփաղ-երանալ, կամ հայերէն՝ հողացին գեներալ. ուրիշ խօսքով՝ պետական կալուածների լիազօր տեսուչ, իսկ Ահմօ բէզն ըմբռնեց, որ իմն է լիու լի իրա-ւունքը՝ կամ կը թողնեմ խորաւէր արօտապողին իւր ձեռքին, կամ թէ կը խլիւմ և կը բանձնեմ ուրիշ համայնքի՝ հովանաւորելով իւր հա-կառակորդին՝ նորա նու իրած մի քանի քրդի կարպետներով:

Ժողովրդական լեզուում՝ քրդի կարպետ նշանակում է հարիւր-

բուրիանց թշթադրամն Մեծամեծ հօպերի և Նախիրների տէր սար գնացող էլքէզիներն իրանց համայնքի միջից լոնդեսում են միքանի այդպիսի կարպետներ կամ փալամներ՝ թօրփաղ-երանալի որքի տակ փուելու համար։ Այդ քրդի կարպետների շնորհիւ չօփըաշի, սաբալախօ, կամ խորպին կոչուած արքունի վճարքի քանակը կիսով չափ շատ անգամ պակասում է։ Պատը հազար ոչուար ու հինգ հազար տառար ունիս համայնքիդ սեպհականութիւն, մի քրդի կարպետ վրաները փոխիր ու կը դառնայ կիսով չափ, որի հետ և վճարքը կը կիսուի։ Եաւ սովորակն մի երևոյթ։ Հաշառքը մութը ուելը լոյս է Պալիս ասում է առածը։

— Իարի՝ գիտութիւն, քիթս երկու գագ վեր քաշած՝ ծանրակագոթ գլուխս լոմբացրի ևս Ահմօ բէզի մինչւ ծունկը անընդհատ կրկնուող խոնարհ երկրպագութիւններին իրքև պարասխան։

Երեք վիթխարի հսկաներ՝ ուղաբ բրդէ, նրբագործ, թանգագին չուխաները հագած՝ շուրջ բոլորիցին ինձ նոր կանգնացրած, կերպասազարդ վրանի առաջին և պարկառելի ակնածութեամբ՝ նրանցից մէկը ձիուս սանձը բռնեց, երկրորդն ասուանդակը, իսկ երրորդը թես մրաւ ու ինձ իջեցրեց։

— Հրամանոցդ ծառանելը — իմ որդիքս են, համեսու ժպիսով ներկայացրեց կորիմներին ծերունի գոհմապերը։

— Ասպուած քեզ բաշխի, շնորհ արի ես պարասխանելու հիւրընկալ տան տիրոջը և մուայ գորգերով, բարձերով ու մահիմներով զարդարած վրանի ներքոյ ու ձգուեցի Փափուկ թաւշապար մահճի վրաց։

— Երեխայք, ինչ էք դանդաղում, գոչեց վրանի դուրսը Ահմօ բէզը, շնորհ մորթեցէք, ամենից զէր ու մուո, ճակարը ծաղիկ գառը, ձեռաց մի խորոված արէք, մինչւ ճաշը հասնելը, երանալը քաշած կը լինի։

— Ահմօ բէզ, տէրպէր, ներս հրամայեցէք, բարեհամեցի կանչել ես։

Նախ քահանան և ասլա էլքէզին ամենայն պարկառանքով ներս մրան, տէրպէրը ձեռքերը խաշեց կրծքին ու ցցուեց, իսկ Ահմօ բէզը քահանայիցն երկու քայլ յեպ կանգնած՝ երեք անգամ գլուխ տալուց յերոյ ասաց։

— Բարե՛ իս եկել, մեր աչքի, մեր գլխի վրաց ես եկել:

— Տէր հայր, նստիր, դարձայ քահանացին հայերէն և ցոյց բռւի ինձանից բաւականին հեռու պատրաստած տեղը, իսկ Ահմօ բէզին ասացի. հրամէ նստիր, ծեր մարդ ես, հօրս տեղն ես, ջահելնիրը թող կանգնեն, վնաս չունի, մենք էլ մեր մեծաւորների առաջին ժամերով փայտի նման անշարժ ցցուած ենք մնում:

— Աստուած քեզ կեանք տայ, երանա'լ, պատասխանեց ծերունին և հեռուուրը՝ վրանի դրան մօտ՝ ծնկների վրայ չոքելով, դարձաւ դէպի վրանի դուրսը սպասող իւր որդիքն ու անխօս, ձեռքերի ու մարների շարժումով, հրամացեց շրապել գառը ։ որթել, խորովել և բերել: Ապա բարձր ձայնով նոյն հրամանը կրկնեց.

— Եռւոր, գլխով արեց էլրէդին որդոցը, երանալը քաղցած կը լինի:

— Քաղցած լինելով՝ քաղցած ենք, միջամբեցի ես, բայց խնդրեմ գառը չը մորթել, Աստուծոյ գուածից՝ ինչ կը լինի, բաւական է. իս գիտեմ՝ քո գունդ «Փեյշամբար» Արքահամի շեն օջաղն է, կաթը, մածուն, պանիր, կարագ անպատճառ կը գտնուի, խանում քոյրերս<sup>1</sup> իրանց ծերունի գլխի տիրոջ համար, որ հրամանքդ ես, չարաճճի երեխաների բերանից թագցրած կը լինին անուշ մեր ու կարագը. ձուն ու իւն էլ, փառք Աստուծոյ, շատ է. Աստուծու գուածից էնքան ոչխար ու դրաւար ունիք, որ հաշիւը կորցրել էք, հաւեր էլ՝ հարիւրներով տեսայ դուրսը քջուշ անելիս, ձուաձեղն իմ սիրած կերակուրն է, հազար գառանվլաւի հետ չեմ փոխիլ. կը վայելենք, կը հանգստանանք ու ճանապարհ կը նկնենք:

— Ասածիդ չափ շատ չեն մեր անասունները, տէր իմ, հրամանոցդ սխալ են հասկացրել մեր թշնամիքը, ըմբռնեց իսկոյն իմ ակնարկս Ահմօ բէդը, այս գարուն էլ՝ դաւարի մէջ դաբաղ (հարբուղ) կար, կէսը կոտորուեց, բայց փառք ստեղծող Աստծուն, մի կտոր ցամաք հաց կը գտնուի՝ որ դու կշուանաս: Խնդրում եմ, երանա'լ, մեր գլխի տէրը, խօսքդ յետ առնես, այսօր գնալդ մոքիցդ հանես, էս գիշեր՝ ծառալցիդ դանը դու թանգագին հիւր ես, մի

<sup>1</sup> Քաղցած քավարական թօր խօսքը ժողովրդի լեզուում նշանակում է կանացի սեռ:

շաւ լէք կանենք, կը պառկես, ջարդուած անդամներիդ հանգըս-  
տութիւն կը տաս ու էգուց՝ բարի լուսի հետ՝ ևս կը զրկուեմ լու-  
տառ ու պայծառ դեսութիւնից:

—Այդ մասին յերոց կը խօսենք, Ահմօ թէդ, դու դեռ իմ մի  
քանի հարցին պարասիսան դուր.—ո՞րքան է քո համայնքի թիւը,  
տան զլուխ՝ միջն թուով հաշուած՝ քանի ոչսար, ձի և դաւար  
կլնինի, որքմն խոպագին էք տալիս մեր կողմից ուղարկուած աս-  
տիճանաւորներին, նրանք հօ ձեզ չեն նեղացնում, մէջ տեղը կաշառ  
հօ չի խաղում:

—Տեսնում եմ, որ իմ թշնամիքս հրամանոցդ շափ գլխացա-  
ւանք են դուել, երանա՛լ, իմ հացը կերել են, եկել քո առաջին  
եփեթց սուրուսուուր լուրեր են հալորդել: Խնձ ովէ դուել համայնք,  
անունս է հուշակուել, թէ չէ մեր էլրէզիների մէջն ինձանից աղ-  
քաբը ըրկայ, հինդ, դասը դուն ալքափ ու դիլոր ժողովուրդ է  
այս ձորակումը կուշ եկած, ամէն մէկը քսանի շափ, դայլի ձեռքից  
խլած, լզար ոչտար ունի, մի երկու, ոսկրներն երեացող, կով է պա-  
հում, որ իրանց երեխնեքանց բերանը հաղիւ է թացացնում. խորա-  
գինն էլ՝ Ասպուած հրամանոցդ կեանքն երկար անի, ինչքան ձեր  
ծառաշողների կամքն ուղում է՝ դալիս ենք, նրանց բաւականաց-  
նում ենք, ճանապարհ ենք դնում. խեղճերը՝ քիչ է մնում՝ մերոնց  
խեղճութիւնը դեսնելով՝ իրանց քսակից մի քանի կոպէկ հանեն,  
մեր մարդկանցը բաշխեն, և, ոչ թէ կաշառք առնեն: Ստաֆուռուլ-  
լա (քաւ լիցի), ես 75 ձմեռ ամառի գլխով անցկացած մարդ եմ,  
50 դարի է մօրուք եմ պահուն, երկու անգամ Հաջն եմ դնացել,  
միրուքս Փէյլամքարի դրան շեմքին եմ քսել ու ոչ մի զուլլուղի  
մարդի չեմ պարանել, որ գայ ու աչքը մեր գրավանին քցի, մեզա-  
նից կոշառք վերցնի: Կը բաշխես, երանա՛լ, գլխիւ լուրբան, էն-  
պիսի աչքածակերին ես իմ ծածկի դակ չեմ թողնի:

—Ես շաբ լաւ եմ ճանաչում մեր ծառայոլներին, ապահովաց-  
քի Ահմօ թէզին, նրանք իրանց լինաս կը դասն՝ ուրիշի ձեռքի աչք  
չեն դնեկել, բայց ընչի՞ չէ, ինչ լինաս ունի՝ եթէ նրանք ձեզ լա-  
ւութիւն անելիս՝ դուք էլ ձեր կողմից քաղաքավարի զանուեք, մի  
թեթև պարգևով շնորհակալութիւն անէք. մի՛թէ արժանի չի. մար-  
դիկը նեղութիւն են քաշում, արև, անձրեի դակ են ընկնում, ձիու-

ուրբերն են պարտել ուալիս, մեղք կը լինի. միթէ որ, օրինակ՝ հէնց հրամանքդ, Ահմօ բէզ, մի ձիու պայտի գին քեզանից առաջները դնէիր: Խոչ կաց որ, փառք Ասրծու, քո համայնքի բռնած ձորակումն երկու Թիվլիսի չափ քաղաք կը շինուի, ոչխարներիդ. հօտերի ծացը Փալանթօքեանիւ գլուխն է հասել, բացի դաշտերում արածող ջոկերը՝ ամէն մի վրանի առաջ չորս հինգ այլը նժոյգ է կապած, սևագուաւարի հաշիւն էլ ինքդ պահիր, թիւն իմ զլիսից թռել է. մեր ծառայողն երը հաշիւը մեզ ներկայացնում են, բաց ես որ մէկի համարքը միոքս պահիր: Աւզիլ չեմ ասում, Ահմօ բէզ, ծառայութիւնի մարդկանց սիրով շահած պահելն երկու կողմից էլ օգուր է, թէ վնաս:

— Ընչի՞ չէ, երանա՛լ, մեր պարտքն է մեր մեծերին պապիւ տալն և պալիս ենք ու կըտանք: Նիմի քո բարի ոգՔը մեր զլսին դնելու շնորհքն ես արել, եթէ ինձ ու տունս բաղդատորացնես, գիշերս ծառայիդ հիւր մնաս, մի՞թէ մենք էշ ենք, հացակեր չենք, մեր պարտքը մի՞թէ չենք ճանաչիլ: Մենք քաղցած կը մնանք ու մեզ համար գիշեր ու ցերեկ անհանգիսո լինողին մեր ծառայութիւնը կանենք: Բայց, նորից ասում եմ, երանա՛լ, թշնամիքս քեզ սխալ են հասկացրել, իմ համայնքը Ղարաբաղի կողմից եկած էլերից ամենալայետինից քիչ է. էսքան վրանը որ քո բարի աչքովդ դիսնում ես, մեծ մասը դարարի են, թշնամու աչքը տրաքացնելու համար ենք գինուուել: Խոչ անենք, չորս կողմերս հարամիեր աւագակներով լիքն է, եթէ իմանան որ մենք քչուոր ենք, մի գիշեր կը շրջապատին, բոլորիս սուրը կը քաշին, ունեցած չունեցածներս կը դանեն:

Եդ ամէնը թողնենք, երանալ, դու ինձ խօսք գուր, որ էս գիշեր մեզ հիւր մնաս, թէ չէ որ գնաս, իմացիր, որ խանչալն առար, քո ձեռով սիրոս ծակեցիր, խօսքը կարճեց Ահմօ բէզը:

— Ինձ համար մեծ ուրախութիւն է քո այս պարուական վրանի տակ հինգ օրէն փոխարէն՝ տասն օր բարեկամու թիւնդ վայելել, և դրանից աւելի մեծ պարդեւ չի լինիլ, որովհետեւ ես կեանքիս մէջ բացի սէր ու սոհըաթից՝ մի չոփ պարզեւ անոնով սպացած շըկամ և չեմ էլ արանալ, ու ով էլ կը բանդզնի մի այդպիսի բան ինձ առաջարկել, ես նրա տան հիմքը քամուն կը տամ, միամուեցրի իմ կողմից Ահմօ բէզին, միայն ներիր, որ չեմ կարող գիշերս մնալ, և

եթէ իմանաս, որ իմ մի ժամաշափ ուշանալու համար մեր Սարդարը (կուսակալ) սառն երես ցոյց կը բայց ինձ, կարծեմ ինքդ կը սպիտես այս բոսէին մի կորոր ցամաք հացով փորս կշրացնեմ ու ձի հեծնիմ: Մեր ողորմած սարդարի հրամանով՝ ևս երեք օրից իր առաջին, իր դուլլուղին կանգնած պիտի լինիմ, պիտի հաշիւ գաւամ իրան, թէ Ղարաբաղի, Գեանջու, Նախիջևանի, Երևանի գաւառներումը որորեղ, ինչ համայնք է սար գնացել, ամէն մի էլքաշի իր պատուին վայել յարգուած է մեր աստիճանաւորների կողմից, թէ այդ էլքէզիններից նրն է իրան լաւ պահում, որն ին են աւագակներին իրանց դներում պաշտպանում: Ես հասպար գիտեմ, Ահմօ բէզ, որ դու հարամկեր էլքէզինների ընկերը չես, դրա համար շագներին թողած՝ եկայ քո դանդ իմ դան պէս մի երկու ժամ հանդարանալու և զնալու:

— Մեր թօրփաղերանալն էս զիշեր քեզ մօս չի կարող մնալ, սպիտուեց, ի մեծ ցաւ իւր սրբի, իւր կողմից միջամկել և մեծաբանել գէրաբէրը. Գեղաբքունու զաւառի Գեօգալդարայ զիւղի գաւնու որէրին թէլլուգրաֆով սորդարից հրաման է զնացել, որ էս զիշեր իրանց զիւղումը սրա հրամանոց համուր դեղ պատրաստի. Երկու օր Գեօգալդարումը սրան սպասում է նոր բայցազիդի զաւառապետը, որ սրան դանին հասցնի Գեանջու հողն ու յիպ դառնաց: Մեղքս ինչ թագնեմ; Ես էլ ուրախ չեմ, որ զիշերս ես ու դու միայնակ պիտի էս վրանի դակ սէր ու սոհըաթ անենք, Ահմօ բէզ, բայց որ վերեւի հրամանն էսպէս է, կարմլ ենք հակառակիլ: Լաւն էն է՝ Երեխաններին (Պղացոցը) հրամայես՝ շուպով սրան հաց ուկացնեն. Պանուպէրիդ էլ պարուիրի, որ 40 կորիճ սպառագինուած ձիաւոր պատրաստի, մեր թօրփաղերանարին դանեն, անվկանգ ճանապարհ դնեն:

— Բալի՛, ըալի՛, (այ՞, այ՞), իրաւունքը մեր երանալինն է, թող դեռ մի կորոր հաց անուշ անի՝ յեպոյ կը մրածենք, պարասիանեց Ահմօ բէզն և կերակուրներով լիքը պղնձէ մեծ ափսէն հրամայեց դնել մէջ դեղ:

Ես պարսիկ խաների ու մեծամեծ բէդերի դներում շագ եմ հիւրասիրուել: Նոյն և մի պղնձէ խոր ափսէլով են կերակուրները մօս բերում: Մէջ պեղը մեծ սինիով դրուած է լինում փլաւը, իսկ

շուրջը մանր պնակներով 7--10 տևսակ մսեղէն ու թռչնեղէն իւղա-  
լի կերակուրներ։ Ահմօ բէզինը առաջիններից նրանով էր որոշւում,  
որ մէջդեղի մեծ սինու մէջ փլաւի պեղ՝ պարուական հասու ձուա-  
ծել էր, իսկ շուրջը կարագ, մածուն, սեր, կաթն ու ժամիկ։ Մի  
առանձին սինու մէջ էլ դրուած էր թիթեղէ բովի վրաց ձեռաց  
թխուած անթթմեմ խոր (անխմոր) բաղարջ՝ լաւաշ։

Տէրբէրի խօսքերից ես հասկացայ, որ ինքը միտք չունի ինձ  
ուղեկցելու և մղքումս ուրախացայ։

— Համարձակութիւն չը լինի, երանա՛լ, դարձաւ ինձ սեղանի  
վրայ Ահմօ բէզը, ի՞նչ է պարձառը, որ քեզ հետ 30, 40, 100  
ձիաւոր չը կան ճանապարհ դնողներ ու երկու երեք հոգւով հասա-  
րակ մարդի պէս ես սարերը չափչփուում։

Նաս պարզ էր, որ Ահմօ բէզը երկմղում էր իմ թորփաղե-  
րանալութեան վրաց, ինչպէս որ իսկ էր, և ուզում էր ինձնել ինձ  
խօսքերով ու խայբառակել։ բայց խեղճ էլքէզին չը գիտէր, թէ  
իւր դիմացի մարդը հազար դաշտ ու մաղերից հաց ուզելով՝ այդ-  
պէս չնչին հարցերի մէջ շփոթուողը չէ։

— Դրա պարձառն ես միայն մի մարդի եմ մինչեւ օրս յայտ-  
նել, ասացի խորհրդաւոր զղուշութեամբ։ այդ մէկը մեր տէրպէրն է,  
որ ինչպէս հայի հողեւոր հայրը, պարտական է խոսրովանք պահելու,  
երկրորդ մարդը դու ես, Ահմօ բէզ, որից ուզում եմ չը թաքցնել։  
Ծեր մարդ ես, քո անունդ սարդարի դուռն է հասել, մեր հօր  
գեղն ես, կասեմ, բայց առաջուց զղուշացնում եմ, որ էս դաշտ-  
նիքը քո մէջդ մեսնի, որդիդ ու կանաչքդ էլ չը պիտի իմանան,  
թէ չէ գործդ վար կերթաց։

— Չուզդ իր հետ գերեզման կը դանի էդ դաշտնիքը, դլուխ  
իջեցրեց Ահմօ բէզն և աչքով նշան փուեց վրանի դրան առաջին  
ժողովուած բազմութեանը հեռու քաշուիլ։

— Ուրեմն իմացիր, կամաց քչփչացի ես, սարդարի ականջն է  
հասել, որ Վարաբաղի կողմից եկած երեք չորս խումբ աւազակներ,  
որոնք բոլորն էլ մուսուլմանն են, բայց ոչ քեզ պէս աղնիւ մուսուլ-  
մաններ, շարունակ կողոպուդներ են անում Դարալաղեազի ու  
Նոր-Բայազիդի կողմերում և սպանութիւններ են կարարում։ Ես  
հրաման ունիմ՝ քիչ մարդով էս սարերը պարպել, որպէս զի աւա-

զակներն ինձանից չը քաշուեն ու չը թագնուեն, ու ևս գնամ տեսածներս տեղումը յայտնեմ:

Հիմի քեզ ասում եմ, որ օրն էս օր, իմ աչքովս գեսայ Փալանժօքեանի միւս երեսին Սուլէյման բէդին 15 ձիաւորով:

—Քո աչքին քիչ երեացին, ընդհարեց տէրսէրը, 30, 40 էլ ասես, սխալուած չիս լինիլ:

—Այդ միւնոյն է, շարունակեցի ես, իսկութիւնն այս է, որ աւազակախմբեր կան և ազատ շրջում են, և ես չը գիտեմ՝ Սուլէյման բէդն ինձանից քաշուեց, չուզեցաւ մօգնալ, թէ սարի արեւմբեան կողմից յանկարծ երեացող դասը ձիաւորից...

—Ահմօ բէդը մերն է, երանալ, դարձեալ մէջ մրաս տէրտէրը. ընչու ես 20, 30 ձիաւորը դասը շինում, չը դեսար մըջինի քարվանի պէս քանին էին իրար ետեսից ձորի միջից դուրս գալիս, դեռ դասն ու հնգից շափ կը լինէին, որ մեր երեսից ընկան ու չը հասան:

—Այն, սուպ չէ խօսքդ, տէր հայր, երկի շափ էին և միայն մէկը սարի գլխից մեզ, չը գիտեմ, ի՞նչ էր ասում, երբ մենք սարից վաղուց իջել էինք և մօպ էինք Ահմօ բէդի համայնքին, արդարացըրի ես քահանացի խօսքն և դարձայ Ահմօ բէդին. հիմա ի՞նչ ես խորհուրդ դալիս, սիրելի Ահմօ բէդ, սարդարին ի՞նչ համբաւ դասնիմ, էսքան թուրք աւազակալմբերը մրգեղ են ասդում, որ էլբէգինելի մօպ են պաշտպանութիւն գտնում:

—Ստաֆուուլլա՛, ողորմած երանալ, մօրուքը բուռն անելով՝ ասուց Ահմօ բէդը, իմ սպիտակ մօրուքս ոչ արժանանայ դրախտի լուսին, եթէ ես սուպ ասեմ. դեսած աւազակներիդ ոչ մէկը մուտուլման չի եղել. Գեօգէցի Յունոն է, որ մէկի փոխարէն դասը խումբ է պահում ու էս աշխարհը դակն ու վրայ է արել: Երկու շաբաթ չի լինիլ՝ իմ համայնքից հարիւր, երկու հարիւր էնողէս գէր ու մսաշի դաւար առաջ արեց, քշեց, Արագն անցկացրեց, ոռ ամեն մէկը մի-մի սար էին, եղբայրն ելքօրը հափը հարիւր մանէթով չէր դալ: Ի՞նչ անէինք, գլխիդ լուրբան, ձեռքներիցս ի՞նչ կը դար, վիզներս ծոած՝ մնացել էինք մգիկ դալով:

Ես և քահանան իրար տէքով արինք, ժպասոլով Ահմօ բէդի հակասութիւնների վրայ: դասն բոսէ առաջ՝ իւր ասելով՝ անքան

պաւար չունէին, որ երեխաների բերանը թանոս լինէր, իսկ հիմա  
200 կով են տանել դուել:

—Ընչառ պիստի ձեռքներդ ծալէիք մնացիք, հարցըի Ահմօ բէղին:

—Ի՞նչ անենք, զլիսիս տէր, Յունօն իր մարդկանցով ամեն  
մէկն երկու երեք հար այնալու հրացան ունի, իսկ մեզ իրաւունք  
չեն դաշխատ, որ մի հասր սահճենք. մեր հասարակ հրացանի զնդակը  
հարիւր քայլ չի հասնում, նրանք կէս վերսր հեռաւորութիւնից՝  
մեզանից ուժն ուզում են՝ նշան են դնում ու սպանում: Զես լսել.  
անցեալ դարի Յունօն մեր երկու սարի չափ դղամարդկանց օրը  
աև արեց ու որբերին մեր վզին բեռը շինեց: Յունօն, Յունօն, մու-  
սուլմանի արիւնը խմող Յունօն և բոլոր պեղերը ոսմարակ դուռը:

—Ես այդ բոլորն ի նկատի կունենամ; ասացի, սարդարի ականջը  
կը հասցնեմ և ձեզ կազմարեմ զանազան Յունօների ու Յուլէզման-  
ների դուած նեղութիւններից: Իսկ առ այժմ՝ այսքան պեղեկու-  
թիւնն ինձ բաւական է. մի քիչ էլ մեր փորերի խաթրը շահնենք:

Ահմօ բէղը լսեց, իսկ ես ու աէրտէրը հանգիստ սրբով սկսե-  
ցինք մեր ձաշն անուշ անել:

(Շարունակելի)

## ԵՍ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

ԼԵԽՈՆ ՄԱՆՅԻԷԼԵԱՆՑԻ

Ես ձեզ ասում եմ, այս ողջ քաշաքը,  
Որ լուռ գաննում է իւր նըշաւ ակը,  
Թող ճահիճ դառնայ ապականութեան,  
Խնչպէս մի Սոդոմ կամ Արշակաւան,  
Եւ մարդիկ, մոռցած ազնիւը, բարին,  
Անձնագուր լինեն իրանց կրքերին.  
Թող վաճառ հանեն ամօթ, խիղճ և գութ,  
Գործիք ընտրելով սուր, դաւ, կողոսկուդ.  
Ցերեկը դանձեր Դիզելով տըքնեն  
Եւ գիշերները անքուն անցնեն  
Անառակութեան շըւայս անկողնում,  
Արքեցութեան մէջ, զեղս օրդիայում,—  
Ես ձեզ ասում եմ—իմ մէջ կայ հաւաս  
Դէպի մարդկացին առաքինութիւն,  
Եւ այնու հանդերձ նա կը մնայ հասդար,  
Խնչպէս սըրբագաշ մարմարեայ մի սիւն:

Ինչ ամբոխ է սա? Մի հէգ բազմութիւն,  
Որ իր խըշճալի անգիրութեան մէջ  
Կարծեց, թէ գըտաւ բախսաւորութիւն  
Այնուշ, որսեղից Դըժոխք և նայում,  
Եւ, միջագների երամի նուման,  
Ալըրայ տըւեց այն ճահիճ՝ վըրան,

Որի շիթերը խառըն են թոյնով—  
Տառապեալների արիւն-արցունքով...

Բայց կը գայ մի օր—ազահ խուժանի  
Ընչասիրութեան եռանդը կ'անցնի.  
Եւ մինչև կոկորդ ուղղմի մէջ սուզւած,  
Անզօր և դալուկ և հիասթափւած,  
Մաքուր սինչերի կարօուը կը զգայ—

Եւ դարձի կը գայ:  
Եւր բազուկները պիտի ուարածէ,  
Ճըշմարդութիւնից փըրկութիւն հայցէ...  
Եւ այն օրւանից կը հնչէ զանգը  
Մոլորեալների ասլաշխարութեան,  
Եւ կը նորոգւի, կը մաքրւի կեանքը  
Ընկած բազմութեան!

18 մարտի, 1900 թ.

# ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

## Ց Ա Ւ Ց Ա Կ Ը

I Սեպտեմբեր.

Այսօր վերջապէս յայտնի կը լինի, թէ հվեր են ընդունւած նորեկներից ժամը 12-ին ինստիտուտի նախագաւթում, ուր ազագ ժամերին ուսանողները սովորաբար խմբում են զրուցելու և ուր աջ ու ձախ պատերի վրայ ապակիապար շրջանակների մէջ կախւած են դպրոցի վարչութիւնից ուսանողութեանը ուղղած զանազան յայտարարութիւններ, կը կախեն այն բախտաւորների ցուցակը, որոնց օակարագիրը չէր դաւաճանել։ Մեծ էր սպասումը, որ ամբողջապէս կլանել էր բոլորի միվքն ու հոգին։ Ամեն մի ցանկութիւն, ամեն մի հոգս և ուշադրութիւն գրաւող իր այդ օրը հեռացել էր մի կողմ, տեղի տալով միայն ընդունւած լինելու ջերմ փենչանքին։ Նորեկի մաքաղ հոգին դրա մէջ էր տեսնում իր ամենաբարձր երջանկութիւնը... Եւ կրիտիկական բոպէն, որի անցածող ելքը, ով գիտէ, գուցէ պիտի աւերէր նրա նախագծած ծրագիրները, խորակէր նրա բոլոր յոյսերը, փայլուն ապագան, այդ բոպէն խիստ լարել էր նորեկի ջղազին ամբողջ համակարգութիւնը և յառաջացրել հոգեկան ծանր փագնապ։ Եւ մարդաշ հոգու մէջ յաջորդաբար ծնունդ էին առնում մերթ մակընթացութիւն— բուռն յոյսերի խրոխոր կուրակումը—, և մերթ պեղաբութիւն— սիրու սեւացնող, դառն յուսահաբութիւն... Եթե ընդունեց... Այն ժամանակ կորչում է մի ամբողջ փարի, և մի ամբողջ տարի դպրոցի

դաները փակ են լինելու նրա առաջ... իսկ յետով, մի բարուց յեռոյ, գուցէ յաւիպեան...

Առաւօդիեան ժամը Զ-ին մօս էր, որ դուրս հկայ բնակարանից Պուրս գալով փողոց, կուրծքս ազարուեց մի ինչ որ ծանրութիւնից Վեցերորդ յարկի ցածր սենեակների ծանր ու խոհանոցային բուրմունքներով յագեցած մթնոլորդից յետոյ նորամուր աշնան սպաղ ու յարակ օդը ունեցաւ հմայիչ ներգործութիւն։ Ես սկսեցի ազար շունչ առնել. արեանս շրջանառութիւնը կենդանացաւ, ախորժելի ջերմութիւն պափեց ինձ և հոգիս պարզեց, որպէս այդ օրւայ փայլուն առաւօդը։ Աքանչելի օր էր. նոր ելած արեի նոսր շողքերի պայծառութեանը օգնութեան էր եկել երկնքի ջինջ կապուտակը, որը անդրադարձնելով արեի լուսանաճանչ ճառագայթները, սփռում էր երկրի երեսին աչք հրապուրող լուսատութիւն։ Եւ այդ լոյսի մէջ որպէս մի նկար ընկղմւած էր ճոխ բուսականութեան մէջ ծփող զեղեցկաշէն քաղաքը։ Կանաչազարդ և սաղարթախիպ՝ ծառերը պայծառ օդի հետ միասին մկրտւել էին գիշերային ցողով և այժմ իրանց փայլուն, անարափ հաջեացքները արեին ռուղղած, ովսաննա էին կարդում նրան... Եւ ահա նոցաշունչն էր, որ սփռել էր ամենուրեք մի սքանչելի զովութիւն ու թարմութիւն... Ես անցնում էի այն փողոցով, որը ուղղակի բանում էր դէպի ինապիրուտուուր Լայն փողոց էր, որի մէջ փեղով և ափերով հրաշալի և սոււերախիպ ալլեներ էին ընկած։ Փողոցը մաքուր էր, որպէս գիւղականի փան յարակը, և ջրւած։ Քաղաքի կեանքը եռում էր արդէն։ Էլէքտրական դրամւացը արագութեամբ օդին էր ծղում. կառքերը դէս ու դէն էին սլանում, փանելով իրանց հետ գործերով ու հոգսերով ծանրաթեռնւած դէմքեր. մեծ և կոշտ ու կոպիտ սացլերը իրանց հսկայական բռաներով սաստիկացնում էին փողոցում. աիրող դշրդոցը և նոյն իսկ խլացնում ամեն մի այլ ձայն։ Տաննիքինները շրապում էին շուկայ, ծառացշները իրանց գործին... Աշակերպներն ու աշակերպուհիները կամացուկ քչփշալով, ուրախ և անմեղ դէմքերով դէպ ուսումնարան էին շուապում։ Ամէնքը զիստէին իրանց անելիքը, բոլորի այսօրը երեկ էր որոշւած։ Միայն այնպէս, ինարիպուտի առաջ խմբւած ալիծուփ սրբերի համար որի բում է անորոշութիւն, միայն նրանց համար չկայ անդորրութիւն

Ա հանգիստը: Միայն ժամը 12-ին յայտնի կը լինի. դեռ ամբողջ 3 ժամ պիտի սպասել, այսինքն պիտի բանջւել:

Ինսպիրուտի առաջ դրանիվեաց հսկայական քարերից չինւած և լայնարարած սանդուխքների վրաց բաւականին բազմութիւն կար կանգնած. մի մասն էլ նսրած էր ալլէցներում շարած նսրարանների վրայ: Մեծ մասամբ նորեկներ էին: Ամեն մի ազգութիւն մի գեղ էր խմբւած. միայն ժիր, մուսղբալ և պնդերես հրեան էր, սր ամեն գեղ քիլմն էր կոխում, նոր բան լսելու, նոր բան սովորելու:

Ժամանակը դանդաղ էր ընթանում. ամեն մի ժամը դարի էր թւում. բոլորի դէմքերի վրաց խալում էր անհանգստութեան գոագնապը: Եւ որքան մօրենում էր կրիորիկական բողէն, այնքան էլ սասպիկանում էր այդ գագնապն ու ջղացին դողը... Անսիրու, անխնայ րոպէ, որ ոմանց համար բերելու էր երջանկութիւն, իսկ շառներին դառն յուսահապութիւն և նոյն իսկ արրասուք:

Ինսպիրուտի դարապասի դաներն էլ կորցրել էին իրանց ամառային հանգիստը. դղիքը շարունակ ներս էին մղնում և դուրս գալիս: Ներս մղնելով նրանք ամեն անգամ կանգ էին առնում այն շարադրոշակ պարի հանդէս, որպես պիտի կախէին ընդունւածների ցուցակը: Եւ լսում էին դառն, սրբաճմիկ բացականչութիւններ.

— Իէն յայտնեն, վերջանայ էլի, ինչու այսքան յեփաձգում են. սա կարարեալ բարբարոսութիւնն է:

## II

Ես մօգեցայ մեր պղերանց, որոնք խմբւած էին դպրոցի առաջ ընկած գեղաշուք ալլէցում:

— Տղեք, մնց էք. հարցրի բարեկելով բոլորին:

— Ժամը 12-ին կորոշէ մեր վիճակը, պարասխանեց Բէհրամեանը, որ ձեռները խաչաձև կուրծքին սեղմած՝ աշխափում էր վարագուրել իր նեարդային դողը: — Կը վճռուի մեր կեանքի կամ մահւան խնդիրը, աւելացրեց նա ժապալով և աւելի ամուր կծկեց իր գեղում:

Բէհրամեանը 18 ժարեկան մի նիհար և գունադ դայ էր, որի երեսը վաշոց էր զրկւել պարանեկական թարմութիւնից և

անմեղութիւնից։ Դալուկ դէմքը, կապուտակներով ակօսւած աչքերը և երեսի վրայ գեղափեղ դուրս ցցւած բշտիկները ցոյց էին դալիս, որ նա վաղուց գերի է եղել շւայր կեանքի։

—Երեք ժամից յեփոյ կամ կընկնենք եօթներորդ երկինքը և կամ ճանապարհորդական պայուսակները ձեռներս առած դէպի կատան կը շփափենք առանց յեպ նայելու, միշտ այնպէս, ինչպէս այդ անում էին դեռ քննութեան կիսում կիրւողները։

Այս խօսքերը ասաց մի նորեկ այնպիսի անորարբերութեամբ, որ կարծէք նրա համար մինենոյն էր ընդունել կամ չընդունելը։

—Ե՛ն, անկասկած ես չեմ՝ ընդունելու. հառաչանքով արդասանեց մի պատանի, որ նորեկների մէջ ամենաջահէն էր, —ինչ պիտի լինի իմ ճարը։

Պատանու գիրամած և մրախոհ հայեացքը մարդնում էր, որ նրա հոգու մէջ մրբիկ է պիրում. թախծալի աչքերի արդայացութիւնը կարեկցութիւն էր շարժում. նա հանգիստ չէր իր նստած տեղում. նրա կրծքի վրայ մի ծանրութիւն էր իջել, որ փանջում էր անընդհատ... Ախ, ինչ կը լինէր, եթէ նա կարողանար դիւթական մի շարժումով լուծել այդ սպանիչ դրութիւնը և իր ազգանունը գրւէր չարաբաստիկ ցուցակի մէջ։

—Ինչո՞ւ, ասաց հէհրամեանը թեթև նախանձով, քեզ ընդունած կը լինեն. չէ որ դու բոլոր առարկաներից լաւ թւանշան ևս սպացել։

—Ճշմարիս է, բայց ով գիտէ։

Եւ իր մասզբաղ հայեացքը մի կէտի յառած արձանացաւ Ռւսանողները նոյնպէս կամաց-կամաց խմբում էին ինարիկուտուի առաջ։ Նորեկները նայում էին նրանց հիացմունքով, նայում էին և չէին կշուանում։ Ահա երջանիկ մարդիկ. արդեօք դրանցից դուրս էլ այլ երջանկութիւն կայ. լինել ուսանող, հագնել ուսանողական զգեստը, երթալ դասախոսութիւնների, աշխատել, ձեռք բերել այն դիրքն ու արտօնութիւնները, որ վայելում է ուսանողը հասարակութեան մէջ, կանանց և մանաւանդ օրիորդների շրջանում, բերկրանք բերել ծնողացը և մանաւանդ մացրիկին ուսանողի շքեղ վորմայով... Օ՛հ, արդեօք ճակարտազիրը խղճալու է։

Խմբին մօպեցաւ նորեկ Մարտ թեանը, ու ժպաներս բարեկց.

քոլորին։ Նորեկների մէջ տարիքով ամենից մեծն էր։ Մի գեղեցկադէմ և վայելչահասակ դղայ։

—Հը՛, ինչպէս եղաւ անցած օր, պատմիր լսենք, դիմեցին Մարութեանին նսպոշներից մի քանիսը։

—Ինչպէս պիտի լինի. անիծածը ուզում էր կորել էլի։ Մի օյին էր, օյին, բայց լաւ պրծայ։

—Ի՞նչ առարկացից էր, հարցրի ես։

—Տրիգոնոմետրիացից, պատմախանից Մարութեանը, —այդ անիծւած Բուսլակի մասին սուր չեն ասում, թէ նա ունի մի որոշ սիստեմ, այն է հՕ-ից մէկին միայն անցկացնել. զօրով, ուղղակի զօրով ուզում էր ինձ կորել... Դե գիտէք, թէ ես ինչպէս էի սովորել այն բոլոր խնդիրների լուծումը, որ սովորաբար առաջարկում է Բուսլակը. Չըի նման զիտէի... Մօրեցայ դասիստակին. Դեռ խնդրի պայմանը չըվերջացրած ես արդէն գիտէի, թէ որ խնդիրն է. ասաց, երկու բուգէում լուծեցի։ Բուսլակին դիւր չեկաւ այդ, որովհետեւ երեխ իր հաշւով պիտի կորէր ինձ։ Ասաց թէ խնդիրն ուղիղ է լուծւած, բայց մէկն էլ է հարկաւոր լուծել։ Նոր խնդիր առաջարկեց։ Նոյն արաղութեամբ լուծեցի։ Գոյաւ մի փոքրիկ թերութիւն լուծման եղանակի մէջ և ասաց, եթէ ուզում էք լու թւանշան սրանակ պիտի մէկն էլ լուծէք։ Ես հաւանութեան նշան արեցի. Բուսլակ առաջարկեց ինձ երրորդ խնդիրը և պիտի ասեմ՝ դժւարը։ Այդ ես լուծեցի։ Վերջը Բուսլակը դարձաւ. ինձ ու ասաց, ես ձեզ չօրսից առելի չեմ կարող դնել։ Ես մնացի քարցած. ինչու, պարճանուը, դա անարդարութիւն է. ինձ հինգ պիտի դնէք։ Բուսլակը թարսեց. չէ, ասում է, ես չեմ կարող առելի դնել։ Յեպոց քիչ մկածեց և ասաց. ուզում էք մէկ խնդիր էլ առաջարկեմ. եթէ կարողացաք լուծել, օ կը դնեմ, եթէ չէ երկու կ'ըստանաք... Նայ բարի, ասացի ես։ Առաջարկեց մի բարդ խնդիր, որը ինձ նոյնպէս ծանօթ էր նրա խնդիրների ժողովածուից։ Զեր արեն եմ ասում, այնպէս լուծեցի, որ մնաց էշ կորած... ել ճարն ի՞նչ էր. սրիսդւած եղաւ օ դնելու...»

—Այդ անպիտանութիւն է, ասաց Բէհրամեանը վրդովւած, ինկուզիցիացից էլ վար է...»

Եւ կրկին կծկւեց իր գեղում. բայց եթէ ինքը ընդունւած չըլլինի...

— Ծիծաղ է, ծիծաղ, շարունակեց Մարութեանը, — Բուսլակի մասին ասում են, որ ուղղակի յայրնել է, թէ սրիպւած է քննութիւն գուռլների մեծ գոկոսը կարելու, որովհետեւ այդ պահանջում են. մոր մրկուղ պիտի զերեղել բոլորին...

— Եղայր, զոշաղ ես, ասացին այս ու այն կողմից:

Իսկ Մարութեանը ժագում էր և ինքնաբաւական:

Մնացած գողերանցից ոմանք յաջող էին անցել Բուսլակի ձեռքից, իսկ ոմանք բախոր էին ունեցել այդ առարկացից այլ ուսուցչի մօք քննւելու, որը համեմատաբար բարեսիրա էր:

## III

Ահա ժամը գասնըմէկ ու կէսն է... Նորեկները կամաց-կամաց իմբ ում են նախագաւթում: Ասեղ զցելու գեղ չկայ: Ուսանողներից շափերն են ներկայ. եկել են ոմանք իրանց ծանօթների, ոմանք բարեկամների մասին գեղեկանալու: Նրանք միայն յուսադրում են, սիրու են գալիս: Բազմութեան սիրով ուժզին է տրոփում: Զղացին ցնցումներ են խաղում շափերի դէմքերի վրայ: Փշերն են խօսում, ծիծաղում, հանաքններ անում. բազմութիւնը լուռ է և շրթունքները կծած սպասում է, սպասում է իր նեարդացին ամբողջ համակարգութիւնը լարած...: Մի թեթև շարժում, ոփի մի ձայն դէպի դիւանագունը գանող սանդուղների կողմում—և ամբոխը ցնցում է ամբողջովին... Փամացոյցի սլաքների զոյգը կանգնած է XII-ի դիմաց, մի բոպէ է մնում նարձանում է աղմուկ... Խորհրդաւոր բոպէն շարժում է բոլորին և գաղափարներին: Զարկեց ժամը 12-ը: Բազմութիւնը լսեց և մի քանի վայրկեան ինքնամուացութեան մէջ անցկացրեց... Բայց ոչինչ չըկար դեռ ևս, և աղմուկը նորից բռնկեց:

— Դէ բերեն էլի, գոչում էին դէս ու դէնից:

— Մինչ երբ պիտի գուէ այս դրութիւնը:

Աղմուկը խրսխանում է, իրարանցումը սասպիկանում: Անցաւ 5 բոպէ 12-ից և յանկարծ նախագաւթից դէպի վերև գանող սանդուղքի գլխին երևաց ծառան՝ շրջանակի մէջ դրած ցուցակը ձեռին:

— Յուցակը, ցուցակը...

— Ամսն, ինքնամոռացութեան մէջ մոնչաց բազմութիւնը:

Եւ ամենքը մի վայրկեան պապանձւեցին, դիւթական տախտակը գեսնելուն պէս Նափերը սառել, մեխած էին գեղներում, ոմանց թուքը չորացել էր կոկորդում, շաբերը հեալով և արագաշունչ դէս ու դէն էին հրում՝ կանգնածներին և շրապում դէպի հրեղէն տախտակը:

— Ճանապարհ... Ճանապարհ ուէք որ ցուցակը կախէ, դոչում էին այս ու այն կողմից:

Ծառան դժւարութեամբ էր անցնում բազմութեան միջով: Նափերը կռանում, փորձում էին որսալ իրանց ազգանունը, սակայն իզուր չանքեր:

— Ճանապարհ ուէք, հրամայական եղանակով գոչում էր ծառան և արհամարանքով ժայռում: Մի քանի վայրկեան ևս, և տախտակը կախւած էր պափից:

Բոլորի դասավճիռն էր այդ, որ ոմանց արդարացնում էր, իսկ ոմանց մահան դասապարփում... Եւ ամբոխը ուժգնութեամբ մըլլ-ւեց դէպ այդ նւիրական տեղը՝ ոմանց երջանկութեան, ոմանց դառնութեան ալլեհւը... Աղմուկ, կարմրած և քրգնած դէմքեր, բիբերից դուրս թռչող աչքեր և կորակի ձայներ:

— Իմ անունս չկանչ:

— Ես ընդունւած եմ:

— Լաւ նայեցիր. լաւ նայիր...

— Մենք ընդունւած ենք...

Եւ միայն ընդունւածների ձայներն էին հնչում շանթահարների պապանձւած բազմութեան միջից:

Մի ժամանակ ընթացքում ամբոխը հաղիւ ցրւեց: Թէ ընդունւածները և թէ ընդունւածները մի քանի անգամ ցուցակին նայելուց յերոյ միայն թողնում էին նախագաւիթը և հեռանում, ոմանց սրբերը բերկրութեառը լցւած, իսկ ոմանցը դառնութեամբ խոցւած... Մի կողմ ուրախութիւն, միւս կողմ արրատուք... Որպիսի դառն և սրբաճմիկ գեսարան, երբ ընկերներից ոմանք իրանց զգում են երջանկութեան գագաթնակէտին, մինչ միւսների առաջ սկացած է աշխարհը, և որմնց կուրծքը պատռուում է յուսահարութիւ-

նից... Ուրախները, ինչպէս իւղը ջրից, բաժանւում, հեռանում  
էին մի կողմ. վշտահարները վշտահարներին մօքենում միմեանց  
միսիթարելու, և փախչում էին երջանիկներից իրանց վիշտը չկրկ-  
նապարկելու համար:

## IV

**Սերոնցից միայն Միհրանեանը չէր լնդունել:** Եւ չէր  
երեսում:

— Ի՞նչ դառաւ Միհրանեանը, հարցրեց Մարութեանը գւար-  
թաղին:

— Տուն դնաց, պարասիսանեց մէկը:

— Աչքերին արդասուք կար, աւելացրեց Բէհրամեանը, — Խեղճ  
է, գնանք միսիթարենք. մասձենք, նրան մի կերպ օղնենք:

Եւ միասին գնացինք Միհրանեանի բնակարանը: Մփնելով նրա  
սենեակը, պաշտին գրանք մէջքի վրայ պառկած: Նա երկու ձեռով  
քռնել էր ձակարը և աչքերը փակել: Նունչն անգամ չէր լսւում,  
այնքան խաղաղ էր նա պառկած: Սակայն խաղաղ չէր նրա ներքին  
աշխարհը. ծանր վիշտը մաշում էր նրա սիրոը և խեղճ որդին  
չկարողանալով դիմանալ հասած հարւածին, թռւլացել, մարել էր  
փեղն ու դեղը և մի կերպ իրան գուն գցելով, լնկել անշնչացած:

Միհրանեանը մի վերին ասորիմանի զգացուն և ինքնասէր դղայ  
էր: Վշտահար զգացմունքների և վիրաւորւած ինքնասիրութեան  
ահեղաղու մանչիւնին չէր դիմացել նրա թռւլակաղմ մարմինը. և  
նա այժմ դպրութեան մէջ էր:

— Այ դղայ, Միհրանեան, գոշեց Բէհրամեանը, շարժելով հի-  
ւանդի ձեռքը, — Ի՞նչ է պարահել քեզ:

Միհրանեանը լայն բաց արաւ աչքերը, նայեց լնկերների  
վրայ, մի վայրկեան դիրեց զարմանքով և յանկարծ երկու ձեռով  
ծածկելով երեսը, սկսեց դառնաշունչ հեկեկալ:

— Տօ, գիտ ես, ինչ ես, դիմեց նրան Մարութեանը, վեր կաց.  
վեր կաց գնանք զբունենք և ամեն ինչ կ'անցնի:

— Ես անբախտ եմ, մը միջնջաց Միհրանեանը՝ դառնագին հեկե-  
կանքի միջից, — հիմայ ես ինչ անեմ... Խեղճ հայրս. Բալախո-  
նու նաւթ ու մուրը կուլ պալով, հազար ու մի զրկանքներ կրելով,

իր ամբողջ ընդանիքի բողազից կտրելով ինձ ուսում է տւել, որ գամ բարձրագոյն դպրոց մրնեմ, աւարտեմ և, վերադառնալով հաշքենիք, ազագիւմ բոլորին դժոխալիքից. իսկ այժմ... Խեղճ հայր... ես մեռած եմ քեզ համար... Խոչ միտք կայ այլ ևս ապրելու. մահը ամենափրկարար ոյժն է այս բոպէին... Ամիս...

Ամենքը այդ խօսքերի ճնշող ազդեցութեան դակ մի ըստէ լուցին: Տիրութեան վարագոյրը իջաւ նրանց դէմքերի վրայ և ընկերները գլուխները խոնարհած մրածում էին, թէ ինչպէս օգնեն իրանց դժբախոր ընկերոջը:

Միհրանեանի հայրը մի մեծ ընդանիքի տէր գործակարար էր Քալախանի: Տեսնելով թէ ինչպիսի գրաւիչ ոռնիկներ են սպանում Բաքւում ինժենէրները, նա վճռեց իր որդուն ևս բարձրագոյն ուսման դալ: Եւ այդ օրից նա իր ամբողջ ընդանիքը զրկանքների ենթարկեց միայն իր մեծ որդու համար: Ցան աւարտեց ռէալ դպրոցը: Խազէինները խոսդացան օգնել նրան նիւթականապէս՝ բարձրագոյն ուսում սրանալու համար: Այդ նախարակով քանի անդամ էր հայրը Դիմել նրանց:

—Այսքան դարի ձեզ համար չնշին ոռնիկ և ամենայն հաւաքարմութեամբ ծառայում եմ. ի՞նչ է իմ դրութիւնը. նոյն 30 ոռուրի ոռնիկը և նոյն նաւթն ու մուրը: Գոնէ որդուս օգնեցէք:

Եւ յաջողւել էր: Անսահման էր հօր ուրախութիւնը այն օրը. իսկ մշտմ, եթէ լսի այս բոթաբեր լուրը:

—Խեղճ հայր, մրմնջաց նորից Միհրանեանը, ինձ ամենից շար նրա դրութիւնն է դանջում և այն վիշտը, որ նրան հալ ու մաշ պիտի անէ, երբ իմանայ ընդունած չինելս:

Եւ նա կրկին սկսեց հեկեկալ:

Ուրախ, ճակատները բաց և համարձակ ալմուկով ներս մրած ընկերները լուռ էին և ոչ մի խօսք չէին զանում ասելու: Թողին զրուանքի գնալու հարցը և մեացին:

—Ոչինչ, ասաց Բէհրամեանը, այսրել կը մնաս, մի լաւ ուսուցչի մօր կը պատրաստւես, որը կապեր ունենայ ինսդիրուտի հետ և եկող սեպտեմբերին կը մդնես ուսանող: Քանիսն են այս դարի այդ միջոցով մրել: Եթէ այդ էլ չի յաջողւիլ, մինխորին կը դի-

մես, կամ այլ բարձրաստիճան մարդու և կը պատմես նրան Դրութիւնութ, ծնողների վիճակը:

Ոչ ոք չառարկեց այդ առաջարկութեանը:

— Այդպէս էլ հօրդ և բարերարների կը գրես, աւելացրեց Մարութեանը:

Միշրանեանը փոքր ինչ խաչաշւեց, տեսնելով ընկերների անկեղծ հոգասարութիւնը և ջերմ կարեկցութիւնը:

— Դէ վեր կաց գնանք զրօսնենք, Դիմեց կրկին Ասրաթեանը:

— Զէ, գնացէք. սիրու չէ մնացել ինձանում, պարապիսնեց Միշրանեանը:

Երկու հոգի մնացին վշտահարի մօտ, իսկ մնացեանելը ցպեսութիւն ասելով, Դուքս եկան:

— Ո՞ւր գնանք, Դիմեցին, այս ու այն կոշմից:

— Գնանք պարկ, ասաց Մարութեանը. երաժշութիւն կը լսինք, ու գարեջուր կը խմենք: Պիտի միմեանց շնորհաւորենք:

— Դա ոչինչ, պարապիսնեց նէշրամեանը, պանը պիտի քէֆ սարքենք և հին ունանողներին էլ հրաւիրենք: Իսկ այժմ իսկապէս պարկ գնանք և տեսնենք ինչ գեղեցկուհիներ կան այնպես:

Վմենքը քրքջացին: Ու խումբը շարժւեց:

## ԱԽՈՅ ԵՐԵՄԵԿ

Ս Ի Ե Տ Տ Ի Բ Ի Խ Ա Ա Հ Ա Ա Ա Ա Ն Ի

Ա Շ Ա Խ , ե ր ն Ե կ , թ է հ ե ա ն Ա թ ի ս , գ ն ո վ  
Ա զ ա ր , լ ի ն ի մ , մ է ն . մ ի , օ ր ,  
Ա զ մ ն կ , . . վ ա յ ր ի , ե ղ ն ի կ ի , հ ե մ կ ,  
Ը ն կ ն ե մ , մ է ն ա կ , ա ս ր , ու , ձ ո ր , . .

Վ ա ս , ա ր ե կ , շ ո շ ք ը , ո ս ի ի ,  
Կ ս կ ո ւ ծ , խ մ ե մ , ու , ծ ծ ե մ ,  
Ա ն ո ւ շ , ե ր դ ո վ , ս ի ր զ ս , բ ա ն ա մ ,  
Լ ա մ լ , ու , լ ա զ ն ե ր , ե ր կ ն ի , դ է մ ։

Գ ա ս , ու , զ ա ր բ ա ր , ծ ա շ կ ա ն ց , վ ր ա ն  
Լ ո ւ ո , ծ մ ն կ ի , խ ո ր ք ն , ը ն կ ն ե մ ,  
Զ ա ն , ա զ ք ն ւ ր , ջ ա ն , ք ե զ , հ ե պ , ս ր տ ա ն ց  
Գ ր կ ե մ , ծ ա ւ ե ր ն , ա ր դ ա ս ւ ե մ , . .

1857 թ. մարտ, Երևան։

---

Կ ս կ ո ւ ծ = = = ա ւ ժ ո վ , թ ա վ ո վ , խ ի ս գ ո : — Լ ա լ ու , լ ա զ ու ր = = = կ ա ր մ ի ր ու , կ ա ս -  
ա լ ո լ ո : — Զ ա ռ ու , ու , զ ա ր բ ա ր = = = ո ո կ է ու , կ ա ն ա չ ա պ ա ր : — Ծ մ ա կ = = = ա ն դ ա ո ր ի , ա մ ե -  
ն ա խ ո ր ու , լ ո ւ ու , գ ե լ ը , ա ն ա լ ո դ ի ա լ ո վ , կ ո չ ւ ո ւ մ ե ն , ծ մ ա կ , ն ա և , ձ ո ր ե ր ի , հ ո վ ,  
ա ն ա ր ե թ ա ք ն ւ ա ծ , գ ե լ ե ր ը :

## ԼՈՒՐ ԳԻՇԵՐԻՆ...

Ահետիք ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Լուռ զիշերին մզվիս դիմաց  
Նազ սգւերներ ժողովւան.  
Ա'ս, ընկերներս—մեռած, կորած,  
Հոգուս խորքով անց կացան:

Նրանց աչերն—անյոյս, անսիր,  
Սրբիս խորքը նայեցին.  
Խոր վէրքի պէս սիրբոս բաց էր,—  
Նրանք այնպեղ սուզւեցին...

Ու կուլամ ես լոիկ—մնջիկ,  
Ա'ս, ընկերներ, ի՞նչ, մի՞թէ.  
Միթէ մեռաք, իրաւ մեռաք...  
Ա'ս, ձեր շիրիմն սրբումն է...

## ՄԵԹԱԾՆԵՐԻ ՄԻ ԶՐՈՅՑ \*

ՓՐԱՆՍՈՒԱ ԿՈՊՈՅԵՒից՝ Թարգմ. Մ. Նաւասարդեանի

Երբ դագաղները վերսպին գամեցին ու գերեզմանները ծածկեցին, երբ պաշտօնաւորները, դիքնականները, լրագուներն ու լուսանկարիչները հեռացել էին արդէն, երբ վերջապէս Պանթէօնի դամբարանը դափարկեց, Վոլտերի ու Ժան-Ժաք-Ռուսօի սփւերները, որ ներկայ էին գտնւել աներևութապէս իրենց շիրիմների պղծումին, յանկարծ գեսանելի դարձան \*\*:

Որովհետեւ ուրւականների սովորոցթն է մարդկացին կերպարանք հագնել միայն մեր բացակայութեան միջոցին, նկատի ունենալով որ նրանք ոչ մի կերպ չեն ախորժում մեզպէս միս ու ոսկրից կերպւած, կոշոր անձների ընկերակցութիւնից։ Սրանով է բացատրում, փակազծում ասած, թէ Բնչու հոգեհարցները (=spirit) չկարացան երբէք, —որքան ինձ լայփնի է, —դուրս կոչել մի իսկական սպւեր, մի ուրւական գոնե, ինչպիսիներն ես որեսել եմ երբեմն Նապոլէ թարրոնում անզլիականին նմանեցրած մի մելոդրամի ներկայացման միջոցին։ Նրանք, հաւարացնում եմ ձեզ, խիստ ևհոելի»

\* Անւանի Փրանսիական հելինակի այս փոքրիկ գրւածքը՝ունի առանձին աշխմէութիւնն Յաշտնի է, որ Կոպակէն Դրէյֆուսի ինդրի մէջ սորադործի վերաքննութեան վերաբերութեամբ, որ ասել է թէ ճշմարտութիւնը երման գալուն հակառակուների կողմն էր բռնած, նաև այն օրից, երբ Հանրին իւր կարտարած կեղծիքը խոստովանեց, թէ հակադրէցքուսեանները Ֆրանսիակի անցեալ դարի մեծ վեշափոխութեան և ներկացիո կարգերի մասին ինչ կարծիքի են, աչդ երեսում է ներկայ «Գրուցուից», որի մեծ միակողմանիութիւնը շատ աշկարա է։

ԾԱՆ. ԽՄԲ.

\*\* Վոլտերի և Ռուսօի, որպէս նաև Հիւզոի աճիւնները, պարլամէնդների վճռուի, ամփոփւած են Պարիզի Պանթէօնում։

ուրւականներ էին, որոնք մելոդրամի անձերից մէկի թրի հարւածների դէմ յուղմունքի ոչ մի նշան չէին արտայացում Հէնց սրանից է բշխում իմ պածած անվարտնութիւնը դէպի մեր սերժուկաւոր կախարդները, որոնք չեն աջողութ նոյն իսկ, իրենց ամբողջ մօղութիւնով, ո՛վ հասարակ մեքենադէսի խելացօրէն դասաւորած քանի մի հայկլինիցի միջոցով արացւած հեղուանքը ձեռք բերելու:

Օ՞ն ուրեմն, երբ Պանթէօնի դամբանները կրկին վերսպացան իրենց անգորգը ու մենութիւնը, Վոլտէրն և Փան-Փաք-Ռուսոն աւանշօշափիլի ու կենդան ոգիներ» լինչպէս երբեմն յայրարարել էր Secret de Miss Aurore-ի աֆիշը—յայրնւեցին իրենց սեփական շիրիմների առջև այն կերպարանքով, որ նրանք ունեին իրենց կեանքի վերջին գաւրիներում: Ֆերնէ-ի Նահապետը (=Վոլտէր) թիւրաւ ճանաչելի էր իր ձեռնախայտից, կեղծամից, սուրմանիւն պրոֆիլից ու Անդաքնէ դու լուսներ հագած Մի զոյգ որդիներից, որոնք սրտնգների փոխորէն էին ծառացում նրան: Այն ինչ Հռչակաւոր Ժընեցին (=Ուլսո) հազել էր հայկական տարագ—ա լլա տւեա կաֆթան ու մամանուշի կոչւած արախչին, որոնցով մեր արդի մահմեդական պատրամաւորի չափ ժողովրդականութիւն վաստակեց հին Պարիշի փողոցներում:

Հենց առաջին ակնարկից և եթե երկու փիլիսոփանները իրար ճանաչեցին և, զարմանալի քանի, նրանց հայեացքները չարփացարեցին իսկոյն և եթ ոչ ացելութիւն և ոչ զայրոցթ: Քանի մի քանի գերազանց յարկութիւններից, մահն ունի և այն լաւ կողմը որ հաշուեցնում է ամենամթունդ թշնամիներին, նոյն իսկ զրական մարդկանցը, և որ, Կոսիւթի ծրիւքսի<sup>1</sup> միւս ափի վրայ, գրչի մարդիկ դադարեցնում են իրենց գծուծ կափւներն ու ցած ախոյանութիւնը, որոնց պարբռանով, կենդանութեան միջոցին ծալը ու յանախ նոյն իսկ անպարւութեան են ենթարկուում:

Բուն արխարոկրագի կապարեալ շնորհալիսւթեամբ հանդիդի<sup>2</sup>

<sup>1</sup> Յոյն առասպելական դառնաքի գետի որին իր ուժութ և դառն արձանքներով բոլորում էր Տարտարոսի շուրջը:

<sup>2</sup> Կանդիդ կոչում է Վոլտէրի հեղինակած մի փիլիսոփական վէպը, որի հերոսը վիշեալ անունն է կրում:

Հայրը Դիմեց Խոստովանքի<sup>1</sup> (=Confessions) հեղինակին և ոսկե-  
հօնու բանկռնի գրադանից հանելով՝ Պրուսիացի թագաւորի մինիա-  
տիւր պահպերով ու շղակիներով՝ զմրդարուն քթախոզի ուռուքու-  
մեկնեց՝ Առւաօին, որը զըզւանքի այց մի նշան չարփայալանելով՝ մի  
լիքը պարզունց վիրոցեց մակուրա թիւթիւնից ու ներս շնչեց աղ-  
մըլուլից:

Յանկարծ, մկարերելով իրենց այսօրւայ սկսածը, երկու ըստ-  
ւերները արփայացպեցին իրենց Դէմքերովը, իւրաքանչիւրն իր ձեւի,  
այն զգացմունքները որոնցով զբաղւած էին: Վոլոգէրն իր ժամանակի մա-  
ժպիգը —և Առւաօն, վարի շուրջը ծամածուելով՝ մի ամենամարդա-  
բեաց պառշ արեց:

—Սիրելի Փան —Փաք, ասեց այն ժամանակ Տերունի Արուէնը<sup>2</sup>,  
համաձայնեցէք, որ այս վայրկենին մենք մի անարդ հանդէսին ներ-  
կայ գրնւեցանք:

—Անշնչառ, պապսսխանեց Առւաօն —մի հանդէս, որը կարար-  
ւեց զգայուն մարդու սիրու նողկանքով լիցնելու դիպումով:

—Աւ ներկայում մեզանով հիացոլները, կցեց Վոլոգէրը, ձա-  
խողակներ են: Հասփառ ապացուցելու համար թէ Լուդովիկոս X VIII...  
մի նուրբ գրականադէտ, ինդրեմ նկագէք, շկոլայիս պապկանող մի  
բանասրելջ.. Ծանծթ է ձեզ նրա՝ Պարի-Անգլուանչորի հովհարի  
վրայ գրած հետևեալ սիրունիկ քառեակը:

Շունչ արգելող անդանելի տօմթերին,

Զըւարժութիւն բերում եմ Յեր խոներին.

Լոկ զեփիւռ և՛մ հրաւիրում դէպի ձեզ,

Տարփանքները ինքնին կըգան ասպարէզ:

Թովիթ: է, այնպէս չէ.....

Սպացնեցիու համար ուրեմն թէ Լուդովիկոս X VIII-ը թոյ-  
լադրել էր մեր գերեզմանների պլծումն ու մեր ազիւների ցրւելը,  
գենէք այս խակմոքները իրենց սրբին սիրելի մի առասպել ոչըն-

<sup>1</sup> Խոստովանք(=Confessions) Առւաօի սեփական կենսագրութիւնն  
է, որի մէջ մանրամասնորէն լիշտակում է իր գործած չարն ու բա-  
րին առանց խորանքի:

<sup>2</sup> Վելոգէրի ազգանունն է:

չացըրին, ազար կացուցին մի խոշոր մեղքից Ռեստարացիան (Restauration), ու Եգւիդներին; և այս բաճարում՝ գրնուղ մեր դրացի Վիքոր Հիւգօի գրւածքի մի էջը պատռեցին... Որքան յլնաթացիկս եմ արդի գաղտնալեզւին (argot), այս կարելի է անւանել փղոթոց:

—Նամանաւանդ, շարունակեց Ժընի փիլիսոփան—շիրիֆների յարգանքի վերաբերմամբ մեր սաները իրենց անցեալումն ունին միքանի գոգեղ յիշապակներ...

—Այն, ընդհանուց Վոլուէրը ձեռքը կզակին բանելով մըրախո՞ն ձեռվ—Սեն Դընի մայր բաճարի կողոպում, գերեզմանների պըլծում, Ֆրանսիացի արքաների ոսկրուինները կոյուղիններում թափել... Լուդովիկոս XIX-ինը մասնաւորապէս, որի ներբողեանն եմ դրել և Հենրիկոս IV-ինը, որի գովաբանութեան համար մի ամբողջ պոէմա եմ շարադրել, որը, խօսքս մեր մէջ մնայ, իմ գրւածքներից ամենաընդիրն է... Այն, պարզ է թէ, այն միջոցներում նողկալի է եղել ամբոխը, նա իր ամբողջ կափաղութիւնն է արգալայսել և ցոյց է դրել չախկալին յափուկ բնագդները... Բայց ով է յանցաւորը Դուք չելիք առաջինը, որ ժողովրդին ասացիք թէ նա գերիշխանն էր, և, հետեւապէս, թոյլ վուիք նախօրօք ամեն բացապրութիւն և չըքմեղանք ի նոպասու սինլքորի ծայրահեղութիւնների:

—Պախարակելու հարկ չըկայ, Վոլուէր: Այն սարսափների համար իմ չափ դուք ևս պատասխանագու էք: Եթէ ես հետամքել և մանիրագործելի մի քիմերացի, եթէ օդի մէջն եմ կառուցել, դուք էիք, դուք սակայն յարգանքի և իդէալի անխոնջ կործանիշը: Գաղափարը չի սխալւում երբ նա լնկերանում է մեր երկուսիս անունների հետ և մեծ յեղափոխութեան հեղինակների անունների շարքի մէջ առաջին փեղում մերն է դասում: յեղափոխութեանը, որի ժամանակ, կարելի է ասել, աշխարհս հանդիսատվես եղաւ մարդկացին չարութեան ժայթքումին, և որի արգասիքները, թէե սկիզբներում մոլի հիացման առարկաց, ներկայումս շափ վիճելի բարիքունքը են թւում... Սակայն ևս միայն ծշմարգութիւնն եմ երազել, բոլորի բարօրութիւնը... Ես կարմղ էի այդպիսի չարիքներ նախադասել: Ես, որ մինչև արգասուելու ասդիման զգայնու էի, հանգիստ զբուղութեան սկրահար ու կաթ խմող, կորմղ էի նրան-

կայել, որ ինձանից ծնւելու են այդ բոլոր արնեխումներն ու ապառաժ սիրու ունեցողները. և որ յիշելով իմ՝ յանուն ընկելային դաշնադրութեան՝ յայրաբարած մահան պատժի օրինաւորութիւնը, Ռոբեսպիերը, այդ սարսափելի աշակերպու, կը ծածկէր ամբողջ Ֆրանսիան կառավինոցներով (=échafaud)... Այս, մոքովս անցնում է երբեմն թէ այն օրը, երբ ես այդ ճակապագրական երեսը գրեցի, հազարաւոր մահան վճիռն ապորագրեցի:

— Ժան-Ժաք, սանահայր, ասեց իր հերթին նիհար ծերունին, որ այլ ևս չէր ժպառում — իմացէք, եթէ այս կարող է ձեզ մխիթարել, որ ինքս էլ շատ յաճախ եմ կասկածում՝ գործիս զերազանցութեան վրայ: Պործունէութիւնս սակայն իմ դարի պատկերն է լնձայում, այնպէս թեթև և անբարոյ, որը բարբանջելով առաջին անգամ զարհուրելի խօսքեր արգասանեց: Ճիշգն ասած՝ երկնչում եմ թէ կախարդի այն աշակերդի չափ յանգուգն եղած լինեմ, որը շատ լաւ գիտէր սագանին թաքսորից դուրս կանչելու պայմանախօսքը, բայց մոռացել էր նրան նորից իր բունը մորցնելու ոգեհաղորդ բանաձեւը. այն օրը, երբ ես տեսայ քահանաներին փողոքելիս ու Պարիզի մայր քաճարում մի հասարակաց աղջկան իբր իմաստութութեան դիցուհի պաշտիլիս, ինքս ինձ հարց դրի լրջօրէն թէ, արդեօք իմ ժամանակի բարեկիրթ դասակարգը իրաւունք ունէր ծափահարելու այնչափ սրբաբաց իմ ամբարիշու ու լկութիլութիւններին, և թէ արդեօք առաւել լաւ արած չէ՞ լինի, որ փիլիսոփայական բառարանի (=Dictionnaire philosophique) մէջ զրած սբահակութիւններս ինձ համար պահէի:

— Եթէ զոնէ, կցեց Ժան-Ժաքը, կարելի լինէր ասել թէ յեղափոխութիւնն անցաւ ինչպէս մի փոթորիկ, որից յետոց երկինքը պարզել է, և թէ այնքան սոսկալի յուզմոնքներին կարգ ու խաղաղութիւնն է յաջորդած: Արանցից ոչ մէկը չի եղել սակայն: Այն օրից ի վեր բոլոր լուսաւորւած ազգերը մնում են յարարու շփոթ կացութեան մէջ: Առսկալի պարերազմներ են բունկել, մէկը միւսի դէմ զօրքեր են մշել, որպիսին չէ փեսնւած բարբարոսների արշաւանքներից ի վեր, և ներկայ Ժամիս, երբ մենք խօսում ենք, ամբողջ Եւրոպան թնդանօթներ ձուլելու դենդով է բռնւած, զբահակիր նաւեր է կառուցանում և մարգանքներ անում... Աւաղ, ես որ

մօրազայում նսկի Դարի աւելում էի երազում մարդկութեան համար, երբ անմեղ պատանեկութիւնը կորպար պիտի կազմէր Տենի ծն Վիլլայ-ի եղանակներն երգելու, և երբ ծերունիները, իմաստութեամբ լեցուն, բուսաբանութեամբ պէտք է զբաղւէին:

— Ի՞նչ կարելի է անել, հառաջեց Վոլոբրը: Համոզւել պէտք է թէ ուրակաները նրա համար նո միայն անմահ, որ ժամանակի ընթացքում կորցնեն իրենց վերջին քաղցր անուրջները... Նեպամունքները ուրիշն խղճի մասին մեր քննութեանը... Ի՞նչ է ձեր կարծիքը, ասէք խնդրեմ; Յելափոխութեան հաշակաւոր յաղթանակների մասին... Քաղաքացիների միջև ընդհանուր հաւասարութիւնը՝ օրինակի համար:

— Ար նա դոյցութիւն ունի օրէնքներում և ոչ բարքերում. և գոհմական արխստոկրապիացին, որն անկասկած ծանր զեղծումներ էր զործում, փորարինել է այժմ դրամականը, որ առաւել ամօթալի անիրաւութիւն է. բաւական է մի ակնարկ դցել ներկաց հասարակութեան վրայ հասկանալու համար, թէ ացնքան էլ շուր սպասելի չէ միակ իսկական արխստոկրապիացի յաղթանակը, որը պէտք է ընդունելի լինի ամենքի կողմից—արժանիքի ու առաքինութեան արխստոկրապիան:

— Իսկ ձեր կարծիքը եկեղեցու աշխարհական վարչութեանը ենթարկելու մասին:

— Ես հասպատում եմ թէ դրանից ծագել է պաշտօնական մի պիսակ անասպէածութիւն, որը ոլքալի կը թւի նոցն իսկ իմ Պաւոյտի Փօխանորդին<sup>1</sup>... Մենք բոլորովին մենակ ենք, այնպէս չէ, և այսպեղ չի գոնուում քաղաքացին խորհրդարուն, որ, եթէ մեզ լսելու լինէր, ուշ գհանձէր և առանց այլ և այլի մեր շիրիմներն այս անգամ գեղափոխել կը գար մի որ և է անյացր գեղ... Եթէ ուզում էք, ձեր ականջում անեմ, որ այս օրից ի վեր՝ երբ ամեն կարելի միջոցներով ֆրանսիական ժողովրդի կրօնական հաւաքը ոչնչացրին, այդ ժողովուրդը աւելի պակաս բարոյական ու առաւել դժբախու դարձաւ:

— Մնում է քննել աղաք մամուլի առաւելութիւնները՝ ասեց

<sup>1</sup> Բուասօֆ Le vicaire de Savoyard.

այն ժամանակ՝ Վոլտերը — և այդ արդէն ինձ է վերաբերում. որովհեծ ես եմ, մի որոշ մզքով, լրագրութեան (≡journalisme) հաջըք։ Արդ՝ մամուլլ նմանում է պործիս, որ այսօր դադունքներում ախտարկութեամբ նրա մէջ առել եմ՝ ամեն՝ բան և մանաւանդ ինքս ինձ հակասել։ Նրա մէջ դպիւում է, որ ու դէն, մի երես ճշմարկութեամբ և արդարութեամբ թութուն, անհայն նրանից կարելի է լուրանքների, խարեւութեան և լրբութեան մի լաւ ժողածու կազմել։

— Վոլտեր, բարեկամն, դուք ամբողջ ձեր կեանքի ընթացքում կրօնական համբերադարութիւն էք քարոզել... Սնկայն իմոցէք, որ անցեալ ամառ քաղաքապետին մէկը խաղի շքանշան սփացաւ այն առիթով, որ հաղորդող փոքրիկ աղջիկների մի թափոր էր ցրել ժանդարմների միջոցով... Այս մասին Բնակչութեան կանչք։

— Խռուսօ, լնկերս, դուք շարունակ մեծամեծ պահանջներ էք անում բարոյականութիւնից. և դուք ցանկանում էիք համոզէք զիզի-պիզի զարդարւած յըսուհիներին, որ իրենց զաւոկները սեփական կաթնով կերակրեն... Սակայն, իմացէք, որ ներկայումս ունինք գեղեցիուհի ֆեմինիստներ, որոնք յօդւածներ են փաղացրում՝ բոլորովին խակօրէն, թէ մայրական սրինքով սընտելլը՝ իբր բարբարուութիւնից մի մասցորդ դիմելի է... Ի՞նչպէս է թւում ձեզ այս։

Այսպէս երկու փիլիսոփաները նայեցին միմեանց երես, ինչպէս հասարակօրէն ասում են, աշքերը չորս արած, ապա բացականացին մէկը միւսից յերոյ։

— Օօօ, Խռուսօ, մեր պարրասպած յեղափոխութիւնը արդեօք չի սնանկացել դիպւածով։

— Օօօ, Վոլտեր, Մարդու իրաւունքների Յայբարարումը (Déclaration des Droits de l'Homme) յոկ միստիֆիկացիա չէ արդեօք։

— Ե, որ առաւել ծանրակշիռ է, շարունակեց Կալասի<sup>1</sup> պաշտուածութեամբ։

<sup>1</sup> Տուլուզցի վաճառական, սուսր ամբասդուանւած իր որդու սպանման համար, որպէս զի արգելէր նրան բոլոքականութիւնը չըդժոիէ իբր թէ. պարլամենտի վճռով նրան ողջուղջ նահագակեցին անիւի պարժով, բայց որի անմաշուղթիւնը հասդարեց Վոլտերը 1765 թւին իր հռչակաւոր հոգեպաշտպանողական Յառնով։

պանը հարցն այն է, թէ նմանօրինակ խնդիրներ լրաբ այս  
մենաւոր գետնափորներում իրակ փարարտած ուրւականներ, ինչ-  
պիսին մենք ենք. այլ հարցն այն է, որ բազմաթիւ ուշիմ մոքե՞ր՝  
ոգեորւած բացարձակ ճշմարտութեամբ, իրենք իրենց են ուղղում  
նոյն այդ հարցերը գոռողաբար, և յուսահաւուում են ու զբգում  
քաղաքագէոների պւած ամեն մի չափաւոր ու խուսափող վճռից  
և վերջացնում են բացաշկարա անիշխանականութեամբ:

— Ումն էք ասում այդ, շարունակեց տիկին Դը Վարանի  
նախկին սիրականը: Բաւական վշրացած եմ դրանից. որովհետեւ իմ  
գրւածներիցն են քաշել այդ բոլորը ձեր ասած մարդիկ: Ես չե՞ր  
արդեօք, որ հրապարակ նետեցի մի անգամ այն գեղեցիկ պարա-  
դորսը, թէ մերժելի է ամեն մի ընկերութիւն, որ հիմնւած է մի  
քանիսների անիրաւութեան ու միւսների որմարդութեան վրայ: Այնպէս որ այսօր, ուրացած լինելով իմ բոլոր քիմերաները, ցա-  
ւում եմ փեսնելով Էն անհամբեր անիշխանականներին իրենց ռուս-  
բերի պարոյզը վառելիս Ընկերական Դաշնագրից <sup>2</sup> (=Contrat  
Social) պատուած մի թերթիկով:

Վոլտէրն և Ռուսօն երկար կր շարունակեին, անկասկած, իրենց  
զրոյցը, եթէ այն միջոցին դամբարանի հեռաւում որնածայն չըլլս-  
ւէր: Նիրիմները պղծոյներից մէկն էր նա, որ իր անձրևի հովանին  
մուացած լինելով՝ գալիս էր պահապանի ուղեկցութեամբ յետ վերց-  
նելու: Եւ որովհետեւ մաքուր ոգիները, ինչպէս վերն ասել էինք,  
չեն ախորժում գործ ունենալ հասարակ մահկանացուների հետ, եր-  
կու արւերները շոգիացան մի վայրկենում ու անհետացան կախար-  
դանքի պէս:

<sup>2</sup> Ժ.ան-Ժ.աք Ռուսօնի նշանաւոր հեղինակութիւններից մէկն է, Վ. Թ.

## ԵՐԱԶ

ԱԽԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Ալագեազի շնւքն էր փռւեր,  
Զան, շուքի մէջ քնւն մտայ.  
Փէրին եկաւ, երազն եկաւ,  
Ինձի գրկեց, քնւն մտայ...—

—«Հովիրն է իմ դիմաց մօրս պէս գրկաբաց, հովիրը զառ  
կանանչ, ինձ մանկունց խաս ճանանչ: Գերին է մար-մարմանդ զալ-  
թում դէպ' հեռնւն արօդի միջով, արտերի միջով. քարիէն, սուր  
քարփէն առուն սօթ կուրայ... Ու հովիրի հովն անուշ, հովն անուշ,  
հովն անուշ...»

Ե՛, ձիս, ջան ձիս եռ կուգայ,  
Ովքը ժէռին զիլ կուրայ,  
Ժէռը կէծ ու պէծ կուրայ...

Խշնւն անրառը հեռւէն, շալր հեռւէն խորունկ կը հնայ, մէկ  
էլ զօրքի պէս զիլ քան զիլ կը դուայ. մէկ էլ մնջի պէս կը մարի  
ու մէկ էլ ձէն կուրայ, ինձի ձէն կուրայ...

Ե՛ց, սիրոս, վառ սիրոս, ջան սիրոս  
Ջանգի պէս, սիրոյ պէս կը զնգայ...  
Տիս գրկի ու ճակուէն պագ առայ,  
Քամու պէս զիլ թռայ, ուր թռայ...

Ե՞, ջան, հովիպը սորքիս տակն առայ, նշխուն հովիորը վարդերով վառւան. էնտեղ բլբուլն է սիրտը բաց արել. ձէնն անուշ, ձէնն անուշ...

Կանանչ, կանանչ ուռենի,  
Ջահել, սիրման ուռենի  
Ես էլ քեզ պէս կանանչ եմ,  
Ջահել, սիրման ուռենի...

Կրակի պէս ու ջրի պէս սիրուն ձիս,  
Մարալիս մօպ, եղնիկիս մօպ դար ինձ, ձիս...

— ԱԵ ու կանանչ վարդ կոկոն,  
Էյ մեաչեայ մարմալ ջան.  
Ես քեզ կոկոն վարդ պեսայ,  
Ջան, մարմալ ջան, եղնիկ ջան.  
Վարդդ ասովիս դուր կուզայ,  
Դալար կեանքս քեզ մարադ,  
Ջան, մարմալ ջան, եղնիկ ջան...

Ե՞յ, սիրտս, իմ սիրտս, բոց-սիրտս,  
Աշխարքում, երկնքում իմ սիրտս.  
Կեանքի պէս, գարնան պէս կը զիգայ,  
Եղնիկ ջան, մարմալ ջան, ծով-սիրտս...

1899. Գուլիս  
Լիառն. Արագած.

## ՀՅԱԼՐԱԿԱՆԻ ԽԸՆՈՒԹՅՈՒՆԵՐ

Ա. ՍՊԵԼԵԱՆԻ

Մեր գիւղերը շահ ցաւեր ու հոգսեր ունին, որոնց մասին յա-  
ճախ խօսում են մամուլի գաւառական և գիւղական թշվա-  
կիցները։ Դոցա մէջ ամենագլխաւորը և ուսումնասիրութեան հա-  
մար ուշադրութեան ամենից արժանին մէր գիւղացոց պահանջների  
օրէցօր աճելնէ և դրա հակառակ զնդեսական մշտարկ ճգնաժամը։  
Այդ աներդաշնակ դրութիւնից առաջ են գալիս ամեն վեսակ չա-  
րիքներ և մռայլ երեսյթներ, որոնք կազմում են գիւղական կեանքի  
հիմունքները ուսումնասիրով գրովների, սովորական թեման։ Մռայլ  
երեսյթները, ինչպէս և ամեն երեսյթ հանդիսանում են որպէս հե-  
տի անք որոշ պատճառների և այդ էլ հէնց վիրեւ յիշած կօնորասորից  
և բլիսւմ։ Գիւղական հասարակական կեանքն էլ մի օրգանիզմ է, և  
եթէ այդ օրգանիզմի մի որ և է մասը հիւանդուի է ու քայքայւած,  
ընդհանուր խանգարումն է առաջ բերում ամբողջ օրգանիզմի  
մէջ։ Հասարակսկան կեանքի նշանաւոր Փակորոնների փոքր ի շարէ  
ներդաշնակ յարերութիւնը միայն սփեղծում է հասարակաց բարե-  
կեցութիւնը։ Այդ Փակորոններից մինն էլ դնդեսականն է, որ այժ-  
մեան սոցիոլոգների մի որոշ շկոլա ազարճառների պատճառ է ըն-  
դունում։ Այս ծայրացեզութիւնից իսկ ակնյալնի է զնդեսական  
ֆաքորի ահազին դերը։ Եւ եթէ մի հասարակութիւն մադուած է  
դնդեսական քայքայման, ու անշարժութեան, սարսափելի պարկեր  
է ներկայացնում նա իր ազքագութեամբ, որդիգութեամբ և հասա-  
րակական-բարոյական զարաբերութիւններով։

Մեր լրագիրների դաւառական թղթակիցները գրելով գիւղի սպակասութիւններին մասին—յաճախ նկարել եմ—այդ բանում մեղադրում են գիւղացոց. բոլոր մռավլ, վնասակար երևովթների պափառները գիւղացոց մէջն են գտնում. իսկ սրան յաջորդում է մեզնում գոյութիւն ունեցող մի շկոլացի, դժբախտաբար մինչ այժմ էլ դեռ ապրոյ այդ հին շկոլացի սովորական ֆրազիօրութիւնն ու ճռումաբանութիւնը. քրաւական է, որքան տգէտ մնացիք, մի առանձին պահուով ասում են այդ թղթակիցները, պէտք է լուսաւորւել, պէտք է համերաշխ լինել. մարդ զգւում է և նոյն իսկ ցաւում, երբ գիւղացիք իրանց տրդիրութեան և կուրութեան շնորհիւ ապրում են ցածր, մութ, խոնաւ և կեղարու խրճիթներում, ապրում գրաւարի նման, բարոյապէս ընկած են և այլն այլն։ Մի շարք այսպիսի կիսաբուրժուական մրմունջներ... ժամանակ է թողնել այդ ձանձրալի, ականջ ձակող և զահլա գրարած բարոյախօսութիւնը. դրա փոխարէն գուեցէք մեզ ուսումնասիրութիւն։ Զեր գրածը ուսումնասիրութիւն չէ, այլ աչքի հարեւանցի դիրողութիւն, պահուական ևպէտք էաներով համեմած։ Արոնեցէք, պարաններ, այն պատճառները, որոնք դիւղացուց դուրս են և որոնք տանում են գիւղացուն այնպէս, որպէս հեղեղը մի տերեւը։ Գիւղացին իր ցաւերում մեղաւոր չէ. դոցա հիմքը որոնեցէք պարմական-դնդպեսական այն հանդամանքների մէջ, որոնց բարդ կապի շնորհիւ նորա այդ թշւառ դրութեանն են մարտւել. քրքրեցէք այդ հանգամանքները, վերլուծած դրանց, մի առ մի զննեցէք վերլուծած գարրերը—և երեսյթը պարզւած կը լինի... Այնուհետ կը տեսնէք, որ գիւղացուն յանդիմանելով, մեղադրելով ու հանցած, զահլա գրարած խրափներով մեղանչում էք ծշմարութեան դէմ, բռնանում էք գիւղացու վրայ, վիրաւորում էք նրա անհարական արժանաւորութեան զգացմունքը։ Հարկաւոր է, որ անձնաւորութիւնները մի կողմից և դնդպեսական հանգամանքներից առաջ եկող դիսպածների ընդհանուր կապը միւս կողմից այնպիսի սպազմաններ սփեղծեն գիւղական ժողովրդի համար, որ սա առանց ևպէտք էաների լինի այն, ինչ որ ցանկանում ենք, ուրիշ խօսքով գիւղացուն հնարաւորութիւն ուրանք ընթանալու այն ճանաղարնով, որով ընթացել են քաղաքակիրթ ժողովուրդները, այն ճանապարհով, որը մի մեծ պատճեշով կրթւած է ժողովրդի առաջ... Փոխա-

Դակի զիւղացուն նախարհիու, մըսածենք սպեշնել զիւղացու համար այնպիսի կուլգուրական միջոցներ, որոնք կը բարձրացնեն դիւղացու դուրս և առաջանական դրուժմիւնը և հանուարակիշութիւնը իւն կը տարածեն, որու կեանքի վագրութների, մէջ: Այդպիսի, միջոցներից մինը, օքիուական հասարակական խանութիւ գաղափարն է, որը պիտի պարածել զիւղական ազգաբնակութեան մէջ և պէտք է ձգուի իրազործելու այլ գաղափարը:

Եւ այդպէս մի կողմից ուսումնասիրեցէք, որպէս աց անուշ է բժիշկը, զիւղական աշխարհի զանազան հիւանդու երեսցների հիմունքները, միւս կողմից ձրունք նպարակայարմար դարմաններ գործադրելու:

Հոգսերով և կարիքներով ծանրաբեռնւած զիւղացու կութօք, որ պաւապում է պնդեսական ներկաց ծանր վիճակի և կեշեցի մանրավաճառների գոյութեան շնորհիւ, համեմառորդութեան մասն կը զգայ, եթէ զիւղերում բացւեն զիւղական հասարակական խանութները: Հասարակական խանութը կազմուէ զիւղացուն մասնաշանութիւ, որը օգուելով իր մանուպուլ դրութիւնից, անունելի զներով է ծախում իր ասրանքը և ացդպիսով մրգում զիւղադու առանց այն էլ անհասաննելի եկանուգի զդալի մասը: Եւ այդ մասաւանդ այնպիսի զիւղերում, ուր փեղացիք կարեւոր մեթեցների մեծ մասը զնում էն: Հասարակական խանութը կը մասակարար զիւղացուն էժան, լաւ որանիլի առըրանք, և բացի դրանից որոշ պոչու էլ զուտ արդիւնք կը բերէ, որ պարւաց վերջը կը բաժանեւ, խունութին մասնակցող անդամների մէջ: Դա արդէն այն միջոցներից մինն է, որը մի յաշունի չափով կը թեթեւացնէ զիւղացու ծանր վիճակը, կը խնայէ նրա եկամուգների մի մասը, իսկ դա կը քննիւ ու առամբ կազմելով մի շօշափելի զումար, կը գործադրու այլ պահանջների կամ նոյն իսկ ձեռնարկութիւնների համար:

1897 Պարւազ, մայիսին ներքին գործոց մինիսուրը հասարակական է հասարակական խանութների կանոնադրութիւնը (հօրմանակ ստավ ու ուժութեան պահանջման համար) և պյում նահանգապետութեանը իրաւունքը ունին անմիջապէս հասարակու այդպիսի զններութիւնները:

Եսու կարեւոր և օդակար գործ համարելով հասարակական

իւանու թնկերը մեր զիւղերի համար, ներկայ յօդւածովս ևս միտաշիբու ևմ ծանօթացնել, մեր զիւղական ընթերցողներին հասարակական խանութների էտմթեան, պատմութեան և նշանակութեան հետ և, ցոչք պալութե ինչպէս տիտի հիմնել հասարակական խանութները Առ կը լինի նրանց համար մի փոքրիկ ուղեցոյց՝ զիւղական հասարակական խանութներ բացանելու համար:

Սպասողերի ընկերութիւններ կրչւում են այն միութիւնները, որոնց նապատակն է կարելոյն չափ էժան և լաւ որակի մթերք մականաբարել իրանց անդամներին: Այդ մթերքներն են հաց, միս, ալիքը, ցորեն, թէյ, շաքար, հագուստեղին, չթեղին, նաւթ, փայտ և այն և ացն, մի խօսքով այն ամենը, ինչ որ մարդ գնում է մասնայ որ խանութների մօպ: Սպասողների ընկերութիւնները կարող են չկարենր մթերքներ մականաբարել անդամներին երկու կերպ: Դռաջինն այն է, որ ընկերութիւնը իր անդամների անհրաժեշտ պիտոչքները գնում է մասնաւոր մթերավաճառից միայն այն պաշմանով, որ վերջինս իր ապրանքը սովորական գներից էժան գնով վաճառէ: Ծնկերութեան անդամնելին: Մթերավաճառը այդպիսի պաշման ուրախութեամբ է ընդունում, մասնաւոր եթէ ընկերութիւնը քաջմանդամ է: թէկ նա որոշ զոկոս զիջում է ապրանքների սովորական գներից, բայց և այնպէս նա օգուզ է սպասում շնորհիւ առելորուրի արագ և մեծածաւալ շրջանառութեան:

Ա հարկէ սպասողների ընկերութիւնը աշխատում է պայմանականի լանելիքի հասպատուն և բարեխիշգն վիրմանների հետ, ոլոնքներաշխանորում են լաւ որակի և ուղեղ չափի ու կշռի ապրանք մականաբարելը անդամներին: Անրաբեխիշգն մթերավաճառը չի բանկանանում մուշտարինների շապութեամբ և աշխատում է ացէ միջոցներով ևս հարապանալ: թէկ նա եճան գնով է ծախում՝ իր ապրանքները ընկերութեան անդամներին, բայց ծախում է սպասում որակի ապրանքը: Եհա թէ ինչու անպատճառ պիտի կրպակցութիւնունենալ մեծ, բարեխիշգն և աղնիւ վիրմանների հետ, որոնց հետ ընկերութիւնը, պարզ է, պիտի կապէ մի որոշ պայմանն:

Սայ ամսնահեշտ միջոցն է, որով սպասողների ընկերութիւնները իրանց անդամներին պահանջելի մթերքները կորոշ են մաքուղաբարել:

Միւս միջոցն այն է, որ լնկերութիւնը ինքն է սեփական խանութ բացանում. նա զնում է ապրանք, վարձում է գործակադարձներ և մթերքները ծախում իր անդամներին: Պարահում է, որ ծախում է և կողմնակի անձանց՝ ոչ անդամներին: Իհարկէ, այս միջոցը աւելի մեծ հոգս ու պարրասրականութիւն է պահանջում: Այդ դեղում անհրաժեշտ է, որ լնկերութեան անդամները կարողանան վարել առեգուրի զործը և հասկացողութիւն ու փեղեկութիւններ ունենան ապրանքների գների, որակի մասին և այլն: Այդ իսկ պագիճառով նպաստակայարմար է, որ նախ քան սեփական խանութ ունենալը, լնկերութիւնը դիմեր առաջին միջոցին: Այդպիսով լնկերութեան անդամները կարող կը լինեն ծանօթանալ զանազան ֆիրմաների, ապրանքների հետ, առեգուրի մէջ փորձնականութիւն ձեռք կը բերեն և միայն այնուհետ կարող կը լինեն սեփական խանութ բացանել:

## Հ Ր Ա Ժ Ե Ծ

ՄԱՐԻ-ՇԱՀՆԱԽԻԲ

Դիմ, մեաս բարձվ, սրբիւս սիրելի  
Աւ բռուըն, անկեղծ յոյզերս ևն տալի  
Վերջին բարես,  
Քեզ, իմ արես:

Անցաւ. էլ հիսի ձայնըդ լսելիս  
Չեմ ճգնում զսպեմ թրթիաը սրբիս,  
Աւ էլ չեմ դողում  
Նայւածքիդ ծովում:

Սիրուս մի թռչուն, զլխովը սարի,  
Թը'ռս, լուսամուգիդ կուզէր գայ իշաոի.  
Զերմ յուզումս ու սեր  
Գայլայլել կուզէր:

Բայց դու իմ չարըս տեսնել կամեցար,  
Թէ մնց է սիրուս, վշտից ներահար,  
Յամաքել լնդմիշտ...  
Այդպէս էլ է ճիշտ:

Արդ հոգով հանդիսաւ ես էլ եմ, քեզ պես,  
ու էլ չի ձգտում սիրալս դէպի քեզ,  
ինչովէս մի փոքրիկ  
Թրթռուն թռչնիկ:

Այն սէրլս անրիծ, այն վիշպըս անուշ  
Այժմ՝ անցնալիս մի էջն է քնքոյշ՝  
Անքան յիշելի,  
Անքան սիրելի:

# ՆԱՄԱԿՆԵՐ ԶԱՆԳԵԶՈՒԹԻ ԳԵԼԵԾԻՑ<sup>1</sup>

ՆԻԿ. ՍՂԲԱԼԵՍՆԻ

## I

Մի երկու խօսք: Այս նամակների նիւթը այն գեղեկութիւնն է, որ արձանագրել եմ յուշարեպրիս մէջ 1896 թ. գարնանը: Ես շրջել եմ առաւելապէս գիւղական ժողովրդի դրութեան հետ ծանօթանալու համար, որպէս սոսկական հերաքրքրւող: Պարզ է, որ դիմել և արձանագրել եմ չըմոռանալու համար միայն այն, ինչ հերաքրքրական է թւացել ինձ: Հաւաքած գեղեկութիւններս վերաբերում են գիւղական կեանքի մի քանի կողմերին և նոյն խոկ դրանց վերաբերմբ պակասաւոր են: Այդ այն հանգամանքի հետւանքն է, որ գիւղերն անցնելիս ես չունեի որ և է սիստեմական ծրագիր և շար հարցեր ինձ հերաքրքրել են արդէն մասամբ գիւղի կեանքը ճանաշելուց յերոյ: Ընթերցողը կը նկարի թէ ինչպէս տեղեկութիւններս գնալով բազմակողմանի և մանրամատն են դառնում: Այս էլ պիտի ասեմ, որ հարցուվորձի ժամանակ ինչ հարցը ել եմ մի գիւղում, մոռացել եմ հարցնել մի ուրիշ գիւղում, ինչի վրայ ուշադրութիւն եմ դարձել մի տեղ, մարհան եմ արել մի ուրիշ տեղ: Եթէ այն ժամանակ մրածէի թէ մի օր կարող եմ

<sup>1</sup> Շնորհակալութիւնս եմ բարոնում Մեղրեցի ալ. Մատթէոս Շահենին, որ իր բազմաթիւ ծանօթութիւններով Զանգեզուրի գաւառի մասին, չափագանց օգնել է ինձ:

պու շափեփրս դալաղրութեան դալ, ի հարկէ շառ բան այսպիս չէր  
կինի, ինչպէս որ է այժմ:

Ասելու այն է, որ թող ո՛ ոք ըլիսրծութեան անութիւնն  
ունիմ մի գաւառի ուսումնասիրութիւն դալուք Խեթէ զարդարու  
որքան կարող է մէկին օդրակար լինել, որ ցանկանում է Զենքի զորի  
մասին մի զաղափար կազմել, այդ իմ վկացելու բանը չէ բացը որ  
ևս չե՛մ կտորածում նրա դալիք օգուտի մասին, որու ապօպջոցը  
յուշափեփրս դալաղրութեան ցանձնելու իրողութիւնն է:

1. Եւանիձոր: Դիւղի պաշտօնական անունը Ապասզուք (Աս-  
տազոր) է և մօրակայ թրքաբնակ թղութ գիշեղի հետ կազմում է  
մի վարչական համայնք: Նա ընկերում է Ալանդեազի իսնաշշեցին  
Դէպի Արտքսն իջնող կողերից երկուսի արանքում, համարեա Արտքսի  
ափին: Դիւղը Մեղուց Դէպի հիւսիս-արևելք է: այդ երկու գիշերը  
կցող ճանապարհը, որ գնում է Արտքսի ուղղութեամբ, թէե քար-  
քարուր է և կառք չի բան անում, բացց փանք է զաւարի շառ  
ճանապարհների հետ համեմարած, որոնք պեսնուու բաներ են: գնում  
են, ծուռում, զլիսի վերում, բարձրանում, սոլում, մաղլում են  
ժայռերը, մընում անդառը և ամուր դիմում, ցեխ, որ ձիռ  
պայտն է պոկում ամբակից՝ այնքան թանձը է ու կողող: Դուքս են  
գալիս՝ լնկենում արփերը, զանազան ուղղութիւններով՝ իրանց քմաց-  
քին նայած՝ վազում կանաչուղներով, մընում զիւղերը, դուրս  
դալիս, և այժմէս շարունակ...

Պետական հաշվով Եւանիձորն ունի 99 ծուխ, բացց իսկազեւ  
152 լուս է: Աւհասարակ զիւղերն երկու հաշիւ ունին ամեն զեղ-  
ծիսի հաշիւ և քափաղ ուփողը լոների հաշիւ: շար է պատրահում,  
որ մի ծուխ քաֆանում դասնում է երեք լուս, բացց էլի մի ծուխ  
է հաշւում ու մի ծիսի հարկ դալիս, ինչպէս նաև մի ծիսի հող-  
ունի միայն Բնակիչների թիւն է 1793, որընցից 423 ազգանդը  
և 372-ը կին: Դիւղը ձորի մէջէ, ուր վազում է մի գերանի և  
թափւում է Արտքսը: բացի վենակիք, զիւղն ունի 3 ալյուրը: այս  
ջրով է բաւականանում Եւանիձորցին: Ալբիւրները վաս չեն: Եւ  
պարւազ ընթացքում ամառը երկու անգամ կարւել են իսպառ:

Դիւղացիները սկիսական հոգի փրաց են Հողը բաժանում է ոչ համայնական, այլ աշխակիս կոչւող համիա-շարէքսի սկզբունքով։ Եցա պետակ հողաբաժանութեան հական յագկութիւնն այն է, որ հողի բաժնելը ուրաբերաբար չի կրկնուում, ինչպէս համայնականը Վաշ մամանակներից ամեն ծուխ յայգնի քանակութեամբ հող ունի, որ իր սեփականութիւնն է հաշում և բաժանում է իրանից դուրս եկող նոր լնուանիքներին։ Ով ու զում է նոր կոտր ձեռք բերել զիւղի քնշհանուր հողաբաժնից վարելու համար, հասարակութեան մի սրագորի համար վճարում է 20—50 ռ. Նայած դեղի պրշաբերութեան այդ վճարը աւելանում է զիւղի ծախսերն անհելու դումարին։ Վարելուհողերը այդիների հոգի հետ համեմատած շափ անուշուղ են, և զարմանալի էլ չ։ Վարելահողը ոչ ջրուում է, ոչ պարագացուում։

Հողը քիչ է և չի բաւականացնում զիւղացիներին։ Պագամառներից մէկը, որ այդ քչութիւնը զգալի է դարձնում մասնաւոր լնուանիքների համար, այն է, որ ինչպէս ծուխերը այնպէս էլ ընդունիքները շուրջ են բաժանուում։ (Նահապետական լնուանիք չիաց)։ Սի կողմից նոր պահանջներ են առաջ զալիս, միս կողմից հողաբաժներն աւելի և աւելի փորբանում են և դրա հետեւանքն այն է ինուում, որ զիւղացիք սպիտակում են հողերը ծախսելու կամ ամրացնուին կամ մի երկու կոտրը, որից առաջանում են հողաւական անհող լնուանիքներ՝ ապագայ բանւոր դասակարդի կորիզը։ Հողը ծախսելու առիմուները երկու մն են, աղբարանալը և այրիա-

---

Համառօտ առ զեկո թիմ Զանդեզորի ազգաբնակութեան մասին Զանդեզորի գաւառը Գանձակի հանանդի մի մասն է, Նրա աղղաբնակութեան ընդհանուր թիւը 1886 թ. մարդաբնամրով 19,446 ծուխ է, կամ 123.997 մարդ, որոնցից ու մարդու 68.560 հոգի, իսկ կին՝ 55.437։ Սրանցից Հակերը 6.946 ծուխ էն, կամ 57.425 մարդ, որոնցից 31.489-ը ուղամարդ, իսկ 25.936 կին։ Համեմատական չափով Հակերը աղղաբնակութեան ամենամեծ մասն են կազմում, և թէի ծխանաշուղ Թուրքերից, որ աղղաբնակութեան միւս խնչորացան մասն է՝ քիչ են, բայց թւող մօք 20,000-ով շապահնեան թուրքերը (մեծ մասով Նրա աղանդից, կան նաև Ալիւնիներ) 7.047 ծուխ են, բայց 37.653 հոգի։ Միւս աղղերից թւող աչքի են ընկնում Քրդերը, 5.081 ծուխ, 26.524 հոգի։

նալը։ Աղքամութեան, զլիստոր պարագառներն էլ չբերքն է և վաշ-  
խառութիւնը։ Եւանիձորցին քանդուում է թէ արտերի և թէ այ-  
դիների ջրերքից։ վերջինների թշնամին «թողն» է, որի դէմ, մեղ-  
րեցիներից սովորելով, վերջերս սկսել են կռւել ծծումբ փշելով։

Եւանիձորցոց առաջնակարդ պարագառնքը այգեգործութիւնն է և ապա՝ հողագործութիւնը, բայց այս վերջինը մինչև անդամ՝  
ապրուստի աղբիւր չի ճանաչւում Խսկապիս հողը վարում են գըլ-  
խառորապէս չարդի համար, որ ձևուը դան անառուներին։ Եւ քանի  
որ անասունը, մանաւանդ զրասով ամեն մի Եւանիձորցու անհրա-  
ժեշտ է, ուստի համարեա ամենքը ցորեն ու դարի են ցանումն  
Պարզ է, որ այս պայմաններում զիւղացին միշտ էլ հացի կարիք-  
ունի, որ և լրացնում է շրջակայ զիւղացիներից՝ զինին՝ ցորենի  
կամ ալիւրի հետ փոխելով։ Եւանիձորցոց վարելահողերը՝ համարեա-  
առանց բացառութեան զիւղից բարձր՝ լիսներութն են, ուր և չուում  
են ամառւաց սկզբին թէ հունձ անելու ե. թէ ամառանոց։ («Եացյլա»)։  
Հողի մշակութիւնը նահասկերական է։ վարում՝ են երկու ծ արօ-  
բով, որ այս կողմերը կոչում է «փէսկի»։ Երոպական ոչ մի դոր-  
ծիք չկայ։ նոյն իսկ դութան, ամենք՝ անշարժար էլ է, ինչպէս մեր-  
լիռնուր գաւառներից շատերում՝ այս կողմերն էլ վարելահողը «Ղը-  
ուձառով» (մանրաքարով) լիքն է։ առում են որ եւրոպական գու-  
թանը շուպի է կոպրւում։ Այս դէպքում ուրեմն մեղաւորը զիւղա-  
ցու այնքան բամբասող անշարժութիւնը չէ միայն Արովհեսու ամեն-  
գուն երկու լուծ եղը չունի և ձեռնորու էլ չէ ունենալը, ուստի  
հողը վարելիս «հարակքաշ» (=վարակից) են դառնում, ընկերո-  
նում են և փոխադարձ օդնութեամբ իրար հող վարում։

Օժանդակ և դարձւած զբաղմոնք է այսորել շերամապա-  
հութիւնը, սրանով առանց բացառութեան ամենքն են պարապում։  
Վարեկան 12 ֆ. աւել սերմ է՝ զործադրում, որ մի զդալի քանա-  
կութիւնէ 152 գունը ունեցող զիւղի համար։ Ընդհանրապէս շերա-  
մապահութեան արդիւնքը միջակ է լինում և Համարեա ամենքն այս  
պայմաններով են աշխապում։ ոբքան պահելու կարողութիւն ունին-  
անքան սերմ են վերցնում սերմափիրոջից։ (մեծ մասամբ Կար-  
Քաբայեանից, որ թել մանելու գործարան ունի Օրդուքամթ քաղա-  
քում։ Նախնանի գաւառ), սերմին փող չեն վճարում, իսկ պատ-

ցած բոժոժը ծախում են սերմ փւողին միայն, փութը օռութլով։ Այս գործը բացառապէս կանանց ձեռքին է։

Միւս օժանդակ պարապմունքը անսանհապահութիւնն է. ամեն դուն, ամենաշատն ու ամենաքիչը վերցրած՝ ունի 2—20 հար աշճ, միայն դասը դուն ունի 30—200 հար ոչխար, սակաւ բացառութեամբ ամենքն ունին 2—5 կով՝ մի քանիսը միայն 1 հար, դասր դան բացառութեամբ՝ ամեն դուն ունի 1—4 եզ։ Իսկ ջուրին, որ անհրաժեշտ և ամենաշարմար գրասպն է այս քարքարով կողմերում՝ ամեն դուն ունի 1—2 հար։ Տաւարն ու ոչխարը ամառ սար են դանում զիւղաղաղիան դեղեր (հողարածնի մէջ է) զիւղից 10 վերսոր հեռու, որի համար ոչինչ չեն վճարում։ Սարի արդիւնքներն այնքան քիչ են, որ իրանց էլ բաւական չէ. ինչ խօսք որ ոչինչ չեն ծախում, այլ՝ իւղ է թէ պանիր՝ իրանց համար են շինում։

Եթէ յիշենք արհեստներն ու պանդխորութիւնը՝ օժանդակ պարապմունքները վերջացրած կը լինենք։ Ինչպէս առհասարակ ամեն գիւղում, այնպէս էլ այստեղ առանձին մարդ կայ միայն այն արհեստների համար, որի իմանալն անհրաժեշտութիւն չէ և յարմար չէ ամեն գիւղացու։ Տրեխ անել, գործիքների փացրի մասերը շինել ամենքն են կարող, բայց պար քաշել, դան դուռն ու լուսամուռը շինել ամենքը չեն կարող. Դրա համար էլ գիւղում կայ մի որմնացիր և մի հիւսն։ Դարբինը զնում. գալիս է, սա մի ըմափառական արհեստաւոր է, որ գիւղէ գիւղ ման է գալիս և ժամոնակաւորապէս պարապում իր արհեստով։ Այս դիպարի արհեստաւորներ շատ կան Զանգեղուրի գաւառում և իւրաքանչիւրն իր գիւղերի շրջանը՝ ուայոնն ունի։ Դիւղն ունի նաև մի երկրորդ կարգի վաճառական, որ դեղացի է, և մի մասգործ։

Պանդխորութիւնը նոր է սկսել. զիստոր պարագառ հողի քըութիւնն է, գործի պակասը, որ նոյն է թէ աշխաղողների աւելորդութիւնը. նրանք պանդխորում են շատ հեռուները և բացառապէս երիտասարդներ են լինում. գնում են Բագու, Քաթում, Թիֆլիս։ Օգարութեան մէջ նրանք հասարակ մշակներ չեն (չերհօրածութեան), այլ խռարաբներ, դան ու երկաթուղու ծառաներ և այլն։

Նւանիձորեցիք հէնց թէկուզ նրա համար, որ զլսաւ որ ուշա-  
դրութիւնը այզիների վրայ է, զարդացրել են պարապմունքի այդ-  
ճիւղը և լաւ այզինործներ են համարւում։ Նրանց դինին լաւ հրո-  
շակ ունի և արքահանուում է 100 աւոր վերաբեր հեռու՝ մինչև Շուշի։  
Քայց նրանց զլխաւոր հրապարակը Ագուլիսն է, Օրդուբաժը և գա-  
ւասի պղնձահանքերը<sup>1</sup>։ Ամեն տուն 500—6,000 հաշողի որժ՝  
վազն ունի. ամեն վազի տարածութիւնը հաշում են 30 քառակ.  
վերշոկ, ուրեմն ամեն տուն ունի 195—2340 քառ. սաժէն այզիք  
Այզիները բացառապէս վազնապունկ չեն. կան նաև պրշադու ծա-  
ռեր. սպոռուզներից նշանաւոր են՝ թութը, ծիրանը, կեռասն ու  
դեղձը, բայց մանաւանդ նուսն ու թուզը գոված տեսակից. պրուզ  
չեն ծախում; կարելի է ասել. իրանց համար են չորացնում կամ  
պահում։ Գիւղացու աշխապութիւնը հաւասարաշափ ծանրանում է  
նաև այզիների վրայ. սրանք էլ են ծախում։ Այզիների գինն  
աւելի բարձր է քան վարելահողերին, ի հարկէ. ծախում են վա-  
զահաշով. մի վազնապեղը, որ այսպէղ կոչում է «մէւ կամ «կը թիէ»  
նայած փեղին արժէ 20—70 կոտ. այզիները որքան դէսի Արաքսն  
են իջնում, այնքան թանկ են գնահաւաքում։

---

Կանանց վրայ է ընկած ի հարկէ բոլոր տան ու սարի գործը.  
Վերակուր եփել, հաց թիսել, լւացք անել, կարել-կարկափել, իւղ  
ու պանիր շինել, մի խօսքով ամեն բան, ինչ անում է ամեն գեղ  
զիւշացու կինը. սրա վրայ աւելացրէք, որ նա գործում է պափւա-  
կան, գոված գեսակի շալ, կարպել ու վերմակերես, կփաւ. եռան-  
դով մասնակցում է այզիներութիւն և ուրիշ աշխարհանքների, չորսվ  
աշք է կրում այզիները պարարփացնելու համար. ինչպէս տեսանք  
շերամապահութիւնն էլ նրա գործն է։ Ինչպէս ամեն փեղ, այսդեղ  
էլ կինը մարդու աջ թեւն է, նոյն իսկ 8 տարեկան փոքր աշջիկը  
այսպէղ շատր է պէտք գալիս։ Աշխարհասէր լինելուց զար՝ բարոյապէն  
էլ շատր մաքուր են, կրօնաս էր ուժամասէր. գինի խմելու սովորութիւն  
չունին և չափից. դուրս համեսփ են։ Իրանց շիրքն ընդանիքում

<sup>1</sup> Զանգեզուրում կան մշակող պղնձահանքեր, որոնց մասին խօսք  
կը լինի նամակներից մէկում։

շաբ նախանձելի է՝ ուրիշ զիւղերի կանանց հետ համեմապած, որոնք  
թէև նոյնքան դործ են անում, բայց շաբ սփոր վիճակ ունին: Եւա-  
նիչորցու կինը գանձամեն ինչին գեղեակ է, ոչ միայն ներսի, զան-  
դործերին, այլ և դրսի՝ մարդու զործերին: Մարդիկ լաւ են վար-  
ում իրանց կանանց հետ... սրանք բանն այնպէս են տարել, որ մի-  
գործ բռնելիս՝ առուծախս լինի թէ վար ու ցանք, մարդը կնոջ հետ է  
խորհուրդ անում, և երբ մեռնում է տան տղամարդը, բոլոր զործը  
վարում է կինը: Մեզ թւում է, որ այս բանին շաբ է օգնում ըն-  
պանիքների բաժանելլը. նոր բաժանւած և քանդամ ընդանիքը  
ապրելու համար պէտք է լարի բոլոր ուժերը. և իր բոլոր տնդամ-  
ներով մրցման մէջ մրնի, պարզ է, որ ամեն մէկին բաժին է ընկ-  
նում աւելի շաբ աշխատանք և կինը ամենից առաջ դառնում է մի-  
ւնփոխարինելի և չափազանց գնահատելի անդամ նոր ընդանի-  
քում: Մեծ ընդանիքներում հարսների դերը սքոլւած է և պարզ  
չի գիտակցում, որովհետեւ նոյն զործն անող շաբ մարդ կայ տանը:

Աղջիկները մարդու են գնում սովորաբար 10—12 դարեկան.  
18 դարեկան աղջիկը պառաւ է համարուում: Վղաներն էլ 18—25.  
դարեկան են պասկւում: 13—18 դարեկանն էլ պարահում է. բայց  
առկաւ: Նապ են սիրում չաս պատիներ. մի բանից մի բարեկամ  
պուն աղջիկ բանելլը սովորակոն է: Աւզած աղջկան եթէ չեն դա-  
լիս՝ փախցնում են:

---

Եյս զիւղը միւս զիւղերի հետ համեմապած լաւ վար ապահով՝  
կարելի է համարել. այդ երեւում է նաև ապրուսրից. սովորական  
սնունդը պասին սոխ ու հացն է, շոռ (թթու) դրած բախը, կա-  
ղամբը. իսկ ուփսին՝ թանեսպասը, պանիրն ու մածունը. մաի կոշ-  
մից, մոնաւանդ պաւարի մսի, որ աւելի արժան է զիւղը զուրկ՝  
չի և յաճախի է ուտում: աշխնքն ամեն կիւրատի և գոն օր. Փունդը  
ծախում է 4 կուկէ: Գուցէ շապերին այս կերակրացանկը այնքան  
ճոխ շերեաց, բայց ով գիւղել է սոխ ու հացով և քաշած պանրով/  
միայն ապրուղիւղեր, կասի որ այսպէս ապրելլը փառք է:

Ընդհանուր առամբ նւանիձորցիք քաջ են և սրբուր. քիչ  
մարդ կը լինի, որ հրացան բանացնել չիմանաց և որս անելիս չլինի:

լաւ աշխատողներ են և լաւ կոնծողներ, բայց հարթեցող՝ առւսի  
միքով ինչպէս մեր ոչ մի գիւղում, այնպէս էլ այս կողմերը չկար

Գիւղացիների ընդհանուր գիտակցութիւնը ցած է. օրէնքից ինչպէս ամեն գեղ այս կողմերում էլ, ոչինչ չեն հասկանում: Առ իմանալով թէ ինչ է նշանակում դափնարանի ձեռն ընկնելը, սովոր են վիճերն իրանց մէջ խաղաղ վերջացնել, մանաւանդ որ չեն ուղում իրանց ազոր մարդիկ իմանան, զիւղից դուրս գայ: Անշարժ չեն նորամուծութիւնների ընդունակ են:

Ազրում են մինչև 65 տարեկան հասակն ամենաշատը. 60 տարեկան դառած՝ ոչ ոք այլ ևս գիւղից չի դուրս գալիս, կարծես իր պանն ու դռանը մեռնելու համար։ Որպէս դաշտի ժողովուրդ միջհասակ են, նոյն իսկ աւելի ցած. Դիմագծերը խոշոր, մազերը շաղանակագոյն, աչքերը պէս ու շաղանակագոյն, «ոչխարաշք», քթերը ալաւաղւած։

Գիւղն ունէր միդասեան երկսկո. ուսումնարան և պահում էր  
երկու ուսուցիչ. մէկը 650, մի սր 325 ռ. ոռծկով։ Ուսումնարա-  
նում կային 70 աշակերդ, որոնց 65 տղայ, 5-ը աղջիկ։ Աշակերդու-  
ներից 15-ը օգար գիւղերից էին։ Դրանցից 5-ը երեք վերսպի հե-  
ռու գիտող Մալվա (Մալվալա) ղիւղից՝ որ գնում-գալիս էին ամեն  
օր։ Նւանիձորցիք թէ ուսումնարանին և թէ ուսուցիչներին լսա-  
են նայում, որովհետեւ պարզ գիտակցում են ուսման կարեռութիւնը.  
աշակերդից պահանջում են, որ Դուրոցի աւարդելուց լեփոց իմանաց  
նամակ, մուրհակ ու բապորափ գրել։ Հաշիւ պահել և հենց այդ լու-  
սամակ, մուրհակ ու բապորափ գրել։ Աղջիկ ու աղջոց հաւասարա-  
սով էլ ուսման են պայխ որդիկերանց։ Աղջիկ ու աղջոց հաւասարա-  
սով ընդունակ են բոլոր առարկաներում և նոյնքան անընդունակ  
երդելում։ Գիւղացիք երդում են թուրքերէն։ ինչպէս նաև առաջ-  
ներն են թուրքերէն։

Աւճիս մի անզմբէթ նորաշխ եկեղեցի, որ շինել է 1878 թ.  
Համայնքի միջոցներով։ Մի քահանաց ունինչ որ ֆամանակաւորա-  
պէս հովում է սրանց։ Եկեղեցին գիւղի քահանակից Այժմ ուղում  
Թօն իրանց սեփականներ ունենալ։ Թեհնաձուն նուշը թեմական  
դպրոցի 4. դաստիարակից դուրս եկած թէն է, որ պահութանէ

և խթելով հետաքրքրում է՝ զիբք ու լրազրով. ուսուցիչն է դաշլիս: Գիւղի անունով գալիս է մի Շշակի, որ բժ. Գասպարեանիներին է. բացի ուսուցիչներից և խանությանից ուրիշ ոչ զիկարդում. նոյն իսկ չեն էլ ուզում լսել ուրիշի ընթերցումը. չեն հետաքրքրում պարզապես:

Եկեղեցին դրամ ունի, որ պրւում էր զիւղացիներին  $20^{\circ}/_0$ -ով, այժմ  $12^{\circ}/_0$ -ով են դաշլիս Յազգ եկեղեցու միջոցներն այնքան քիչ են, որ վաշխառուներ կան 10 հոգի, որոնք թէ շրջակաց զիւղացիներին և թէ Եւանիձորցց  $20^{\circ}/_0$ -ով փող են դաշլիս:

Հասարակական հիմնութիւններից չմոռանանք ցիշել նաև զիւղական կշիռը:

2 Կեմանց. Գիւղը Եւանիձորից դէպի Վաթարի պղնձահանքերը բանող ճանապարհի մօգերքն է զպնւում, մօտ 20 վերտար դէպի արեւելք: Ճանապարհն անխնամ է, դժւարանց, նեղ ու ոլորապոյտ, լերի ու ապառաժով կամ անպառաժով տեղերով ցցւում կամ իջնում է, մինչեւ հասնում է Եւանիձորից դէպի արեւելք ընկնող լիսնալուսուր գլուխը, որ մի բնական սահման է. Գիւղ. մահալի և Ապիանի միջև: Գիւղը շրջապատճ է անպառաժ, որ օղակում է անմիջապէս վարելահողերը, որոնք նոր են բացւած: Նոր զիւղ է և չի ցիշարակած հին 1886 թ. մարդաբանում: Հիմնողները Վարադաղի գաղթական մի քանի ընդունելիքներն են, որոնք անդել են Զանգեզուր՝ կտրելով երկու զաւաներին նաև երկու պետութիւնների բնական ու միանգամացն նաև քաղաքական սահմանը—Արտքսը: Գիւղը 12 պուն ունի, որոնցից 5-ը Վարադաղից եկածներն են, իսկ եօթը եկել են Կղանանց, Կաշլը և Վանք զիւղերից. Արանցից երկու վերջինը Գիւղէյունն են, Մեղու լեռների դէպի Վրաքսն իջնող վեշերի վրաց, իսկ միւսը Վանունն է, նոյն լեռների տրեւելա. հիւսիսային կողմում՝ Բոլորն էլ գաղթել են հողի սրականից սորիստած:

Կեմանցի հողն անպասի հետ տառած դեռ վեճի դակ է. վիճով կողմերն են. մի կողմեց պետութիւնը, մի ս կողմեց՝ Նլնջեանի թաւրք բէգերը (Զանգեզ. զաւա) և Երկանողի Սկլիք-նուրաբովները:

Արովհեակ զիւղի Դիբքը բարձր է, զպնւում է սարահարթիքաց, և բաւականաշափ արօպներ ունի, ուսորի ամառը թէ հոյ է և թէ սար զնալու կարիք չի սպազում: Իսկ հմեռը վեռաներով

պաշտպանւած լինելու շնորհիւ՝ բարեխառն է։ Գիւղացիների դըլ-  
խաւոր պարապմունքը երկրագործութիւնն ու անասնապահութիւնն  
է։ Ցանում են ցորեն, զարի և աճար. խակ անասուններից պահում  
են աչծ ու կով Հացն այնքան դալիս է, որ մի մասը կարելի է  
ծախել. ծախելու դասում են Մեղրի կամ Վախերի հանքերը։ Եր-  
կիրը հին ձեռվ են մշտիւմ. հին զործիքներով. վարում են արօրով  
և 4 լուծն են լծում։ Վարելահողերը չեն ջրում. գիւղի մօպից հո-  
տղ գեղակի ուղղութեամբ հողեր են լնկած, որոնք կարող են ջըր-  
ւել և ոլէտքական լինել ծառապահնի և կարտովիկի համար. արդեն  
սկսել են օգուտել այդ հողերից։

Հացի աւելցուկը զիւղացիներին յարաքերութեան մէջ է դնում  
շրջակալքի հետ. Վաթարի հանքերի հետ նրանք կապւած են նաև  
բանւորներ փալով, որովհետեւ շապերն սրիպւած են գիւղուկան պա-  
րապմունքներից դուրս էլ աշխատանք որոնելու։ Սակայն սրանց  
թիւը շատ քիչ է։ Աւրիշ կողմնակի պարապմունք չունին. որտոր-  
դութիւն անում են, բաց իրանց համար. ինչպէս նաև ձուկն են  
բռնում. զերը շատ համեղ ձուկն ունի։ Մէկը փորձել է նաև խոզ  
պահել, որ և յաջողւել է։ Արհեստաորներ չկան. դարբինը, որ  
ամենահարկաւոր մարդն է ամեն մի գիւղում, այսպէղ դալիս աշ-  
խատում և զնում է։

Գիւղացիք զուցէ լաւ ապրեին եթէ հողի վէճը մէջպէղ չլի-  
նէր. այդ վէճից վնասուլը զիւղացին է զլիսաւորապես. թէեւ չքո-  
ւոր լինելու պարձաւուներից գիւղի նոր շինելը ինքն ըստ ինքեան մի-  
խոչոր պատճառ է, բաց թուրք բէզերի հարստահարութիւնը դա-  
լիս կրինապարկում է զիւղացու վիճակի վագութիւնը։ Տղիսու-  
թեան վրաց աւելորդ է շեշպելը, որովհետեւ նա մի ընդհանուր պատ-  
ճառ է ամրող զաւառի յետամացութեան, և ուրիմն տեսն զիւ-  
ղում էլ շեր և խալում։ Թէեւ հոցի սեփականութեան վէճը շե-  
զերջացած չէ, բաց բէզերն ուժով, թափելով որիրոշ են հանդիսա-  
նում և 10-ից մեջն առնելու դեղ՝ օ-ից մեջն են առնում։

Քանի որ զիւղի հողերն այսպէս առած նոր են հազմեում  
պէտք է անորառ լիրել, արմամները դուրս ածել, որ նոր կարո-  
ջանան վարել, ուսուի հիւշքան կարողանում է բեզից վերցնել ու-  
վարելահող դարձնել, այն էլ իրանն է, սպարզ է, որ այսպէղ հողը

բաժանելու մասին խօսք չի կարող լինել: Յիշենք այսպես, որ հողը պարագանելուց յետոյ՝ այս աջին դարին, բէղին, ոչինչ չեն վճարում: ոչինչ չեն վճարում առհասարակ նաև անդադից և արօդներից օգտուելու համար: Հողը սևահող է, հարուստ, նոր մշակող և պաշարեր:

Սակայն ջնայած իրանց խեղութեան, 95.ին շինել են մի եկեղեցի սովորական գիւղական եկեղեցիների նման՝ անշուք, անգմբէթ, իր մեծութեամբն ու գեղութց դուրս շինւած լինելովը գիւղի միւս գներից տարբերող բահանաչ չունին. սրանց հովում է ձըկբէն գիւղի քահանան:

Տղամարդիկ համեստ են, աշխագող, զինի խմել չգիտեն և լաւ բնաւորութեան գէր են: Սակայն կանաքը այնքան էլ օրինակելի վարք ու բարք չունին. ասում են 12 դան մէջ 3 չորս աշխիկ կայ: Բայց կինը՝ որստու մարդու օգնական՝ այսպիզ անդնահարելի է. նրա ոչ միայն աջ թեն է, այլ դեռ մի բան էլ աւել: Առեն հոգս, բացի վարուցանքը, ծանրանում է հաւասարատէս նաև նրանց վրայ, նրանք կատում են, որ նորութիւն չէ մեր նաև ուրիշ կողմերի գիւղերի համար, բայց որ նորութիւն էր ինձ համար այդ այն է, որ նրանք նաև հունձ են անում: Տան հոգսերն ի հարկէ նրանց վրայ է. գործում է զուլպաց, չուխաց: Ջնայած այս աշխագունքին, կինը որոր դիրք ունի և այն ոչ թէ ընդհանուր առմամբ, այլ համեմապած միւս գիւղերի կանանց դրութեան հետ. կին ծեծելն այս գիւղում սովորական բան է: Աղջիկներն ամուսնանում են 18—20 տարեկան. մի բացառիկ երկութ ջանդեղուրի համար, պարման ոչին է, որ բանով չկաց. զիւղը շատ է աշխատ և յեր ընկած: Պապահում են սիրահարութիւններ, բայց ծածուկ. չհաս պատկներ չկան:

Պարոց չկաց, ի հարկէ. մանուկների կրթութիւնը դանին ու հանդումն է մինչև մեծանալները. յեպք մեծ մասը մնում է զիւղում՝ իրանց դանին ու գործինյ ումանք ցնում են հանգերը բանելու, մի երկուսն էլ բազու մշակութեան: Պանդիսպելու պարմանը չքաւորութիւններ ու նոր դունդուղ անելու դժւարութիւններն են:

Մի նկատողութիւն այս կողմերի երգերի մասին: Խօլորը բանցառապէս թուրքերէն են երգում. շրջածս զիւղերից ոչ մէկում են այլիրէն երգ չեսեցի: ոչ էլ ուղարկում պարուցած թէ ունին: Զի՞մ

Վարող պնդել որ «Զանգիւլում»-ի երգեր չունին. Դա այնքան  
տարածւած բան է, որ կարելի է ասել թէ համահայկական երգն  
այդ է որ կայ. բայց այդ երգերը երեխ նկատում են որպէս միայն  
Համբարձմանը երգելու բան, երբ վիճակ են հանում. ուրիշ դեպ-  
քերում միայն թուրքերէն են երգումն նկատել պէսպ է, որ ընդ-  
հանրապէս շատ պրոզացիկ մարդ է զանգեզուրցին, իր հոգսերով  
ու աշխարհանքով զբաղւած. երկու ամսից աւելի թափառեցի այդ  
գաւառում և միայն մի փեղ գեսայ գիւղի «իշխաններին» քեֆի  
նսրած, այն էլ երեխ թափառական աշուղ կար գիւղում, ուրա հա-  
մար էին հաւաքւել: Ակամայ մարդ չիշում է Շէրակի դաշրի գիւ-  
ղացուն, որի կեանքում երգը, այն էլ հայերէն երգը՝ ամեն դործի  
ընկերն է համարեա:

# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՈԽԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱԶԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՅՉԵՅՆԻ

(Շարունակութիւն \*)

ՊԱՏՄՈՒԱՆՆԵՐ ԵՒ ԲՈՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիլֆսբունդի վրայ եղած պաշտօնական և ոչ-պաշտօնական յարձակումների արձագանքները եղան պաշտօնական և մասնաւոր պատասխաններ:

Ա. Պաշտօնական սկավասիսանները:

«Aus der Arbeit» թերթի 1899 թ. մայիսի համարում: Դր. 1.եպսիուսը ի դիմաց Հիլֆսբունդի՝ (Բերլին-կենտրոնի) հեղինակ բացարրութիւնն է տալիս: Առաջ կը բերենք բովանդակութիւնը: Դասի առում է, որ «Օդնութեան միութիւնը» գհանձութեամբ յետ է դարձնում «Köln. Zeitung»-ի մեջադրանքը, իբր թէ այդ միութիւնը իր քրիստոնէական սիրոյ գործի մէջ ըլայնածաւալ կերպով նւիրւել է դաւանափոխական գործերին: Հիլֆսբունդը իւր գործունէութեան մէջ ընդունել է որպէս սկզբունք՝ գործել համաձայնութեամբ այն եկեղեցիների վարչութիւնների հետ, որոնց պատկանում են երեխալքը, և լուսաւորչական եկեղեցու կողմից ևս ոչ

\* Տես «Մուրճ» 1899, № 11-12, 1900 թ. № 1, 2.

մի գանգար չէ լսել նաև «Մեր գործունելութեան շրջանում՝ դաւանափոխութեան մի դէպք անգամ չէ պատահել», և եթէ գերմանական սրացորդները քարոզել են երբեմն լուսաւորչական եկեղեցիներում, այդ պատահել է նաև լուսաւորչական քահանաների հրաւերով։ Այդ անւանում ենք մենք քրիստոնէական համբերագրագութիւն։ Պատրիարք Օրմանեանի նամակում մեղադրում են Վանի վիլայէթի կաթոլիկ միսիօնարները, անկարելի բան է, որ բողոքականները դաւանափոխական քարոզչութեամբ պարապեն, որովհետեւ բողոքականութեան սկզբունքները արգելում են այդ։ Եթէ Քէօլնիշը ցացրունգը կամնար, կը կարողանար, բացի այն նամակից, որը հրատարակել է իւր էջերում, սպանալ և պատրիարքի մի ուրիշ նամակը, գրած Կ. Պոլսի մեծ պետութիւնների դեսպաններին։

Դեսպաններին զբած այս նամակում, պատրիարքը հանդիսաւոր կերպով հերցում է, իւր թէ նա երբ և իյէ գանգարւած լինի Բ. Դրան հայերին օգնող օփար ընկերութիւնների վրայ։ Գերմանական օգնութեան հիմնարկութիւնները հաւանութիւն և պաշտպանութիւն են զպնում մինչև անգամ դաճիական դաւառների պաշտոննեանների կողմից։ Խնչ վերաբերում է «Կ. Շ. ի խորհըրդին, որ Ազն. միութիւնը» թողնէ հայերին օգնելու գործը և հաւաքած գումարները գործադրէ դերմանացինների օգործն, այսինքն փողոցը զցէ 1:600 հայ սրբիկներին—«Օգնութեան միութիւնը» անընդունակ է այդպիսի բարբարոսութեան։ Այսպէս Լեպսիուսը բերում է և պռուսական չորրորդ ընդհանրական սինոդի (29 նոյեմբերի 1897 թ.) որոշումը հայկական կորորածների վերաբերմամբ։ Վերջապէս «Օգնութեան միութիւնը վասակար չէ հանդիսանում գերմանական քաղաքականութեանը Արևելքում, ընդհակառակը, նա պարիւ է բերում գերմանական անւան։ Հիլֆսբունդը հաւափացած է, որ այդպիսի յարձակումները աղեցութիւն չեն ունենալու գործը համակրողների վրայ։ Նոքա կ'կրկնապատկեն իրենց եռանդը օգնութեան այս քրիստոնէական գործում, ի փառս այն Աստուծոյ, որը անւանում է իրան որբերի և այրիների հայրը, և որը ցանկանում է, որ օգնութիւն հասցնեի բոլոր մարդկանց և որ սոքա հասնեն հշմարդութեան զիգութեանը»։

Այս «բացապրութիւնը» գրւած է շապա ջերմ և ազնիւ ողով. ու գրաւում է ընթերցողի վտանհութիւնը:

Այս «բացապրութեան» մէջ մի բան մնում է ոչ-պարզ. Կեպուսը ընդհանուր խօսքերով ասում է, որ բողոքականների կռջմից անկարելի է, որ դաւանափոխական քարոզութեան մի որ և է դէպք պատահած լինի, մինչդեռ Օրմանեանի նամակի մէջ պարզ ասում է թէ բողոքական և կաթոլիկ միսիոնարները գայթակղեցնում են հայերին և այլն: Այս փոքր ինչ մութ կեսը պարզում է մի ուրիշ «պարտախան» յօդւածի միջոցով, որը արւած է մասնաւոր մարդու կռջմից: Այսուղ յօդւածագիրը, Դոքր. Ռոռբախը (Rohrbach) ասում է, որ պատրիարքի գրութեան մէջ ոչ մի խօսքով ասւած չէ, թէ բողոքական միսիոնարները գերմանացիք են: Այդ ձիշդ է: Խոռքախը հաւարացնում է, որ այսուղ խօսքը ամերիկան միսիոնարների մասին է: Այն ժամանակ ինչպէս պէտք է հասկանալ որ Օրմանեանը պնդում է դեսպաններին գրած նամակում, թէ նա երբէք չի գանգարւել ոչ մի օտար օգնող կոմիտէի վրայ: Զէ որ ամերիկացիք նոյնպէս ունին իրենց օղնութեան կոմիտէները, հիմնարկութիւնները: Մնում է ենթադրել, որ հարկաւոր է զանազանել օգնութեան հիմնարկութիւնները և նոյն պարկանող գործիչները՝ կրօնական միսահոնարներից, որոնց և գուցէ ինկարի ունի պատրիարքը իւր գանգարի մէջ: Յանենայն դէպս կարելի ՚է վերջնականապէս որոշւած և պարզած համարել, որ Օրմանեանը ինկարի չէ ունեցել գերմանական բողոքականներին, որովհետեւ Հիլֆսրունդը «Կ. Հ.-ի յօդւածի երեւան գալուց յետով, դիմեց պատրիարքին հետեւեալ հարցով. զանգարւել է նա արդեօք Բ. Դրան առջեւ գերմանական Հիլֆսրունդի վրայ թէ ոչ: Իւր պարասիսնի մէջ պատրիարքը իմ զգացմունքներս դէպի ձեզ, կը ցանկանամ բացադրել, որ հս երբէք ձեզ մեշադրող չեմ եղել, ոչ էլ թշնամի ձեր որբանոցներին. նորին գերազանցութիւն գերմանական դեսպանը յացմնել է ինձ, որ նա ոչ մի ժամանակ ոչ մորածել է, ոչ ասել է, և ոչ էլ դրել, թէ ես ձեզ վրայ զանգարած և ձեր որբանոցների թշնամի ելած լինիմ: Պատրիարքարանի արած զանգարքը Բ. Դրան դաւանապահութեան նկազմամբ չի վերաբերւում որբանոցներին, այլ

այնպեղ բացառապէս ասւած է միայն, որ կրօնափոխութեան պայմանով վտողներ են բաժանւած եղել, որ իրօք և կագարւած է Վանի կաթոլիկ միսսիոնների կողմից<sup>1</sup>:

Հետաքրքիր է, որ այս վերջին նամակում ցիշւած չեն բողոքական միսիօնարները. լինին դոքա գերմանացիք, թէ ամերիկացիք: Օրմանեանի նամակներից, առհասարակ, դժւար է հասկանալ, թէ ով է զբաղւում դաւանափոխական քարոզութեամբ հայերի մէջ, կամ սպարապում են դորանով բողոքականները թէ ոչ: Բայց և խակապէս, անոփեղի կլիներ զբաղւել այսպէղ այդ հարցի պարզաբանութեամբ, չորովհետու այսունդ մենք գործ ունինք միայն գերմանացիների, կամ աւելի ճիշգն ասած, «Գերման. օգնութեան միութեան» հետ, և հարցը կարող է միայն այսպէս դրւած լինել— անում են արդեօք այդ բանը՝ Հիլֆսօրունդի ներկայացուցիչները հայերի մէջ թէ ոչ, և թէ մենք գանկանանք հիմնել Օրմանեանի նամակի վերայ, այն ժամանակ սպափառսխանը կարող է միայն ըացասական լինել: Այն տեսակէսիթց, ինչպէս դուռմ ենք մենք մեր հարցը, սպագրիտագիքի վերոյիշեալ երեք համակները մէծ վիզիրին, դեսպաններին և «Գերմ. օգնութեան» միութեան հակասական չեն հանդիսանում: Ընդհակառակը, նոքա զանազան կերպ հասրափում են միենանը, որ Հիլֆսօրունդը, չի զբաղւում կրօնափոխական քարոզով:

Հիլֆսօրունդի Ֆրանկֆուրտի կենտրոնը իւր կողմից •K. Z.-ի յօդւածի երեան գալուց մի քանի օր յերոց, մի ընդհանուր ժողով հրաւիրեց, ուր լիշեալ լրագրին այսպիսի մի սպագրասխան խմբագրւեց: Կրերենք մի քանի: Քաղլաւածքները: «Այն մեղադրանքները, որոնք անսում են վերջին ժամանակները Հիլֆսօրունդի զործունէութեան դէմ միայն իրախուսում են մեզ նոր եռանդով շարունակել մեր սիրոյ զործունէութիւնը (unsere Liebesthätigkeit), այն զիտակցութեան հիման վրայ, որ այդպիսի թշնամութիւնը միայն սպագրի է բերում մեր զործին. անոփեղից, ուր անսում են այդ յարձակութեարը, մենք դնահարաւթիւն չենք սպասում, որովհետ այնպեղ ընդունակութիւն չունին հասկանալու, թէ ինչ է

<sup>1</sup> Mittheilungen aus dem Orient. № 8 1899.

կագարեալ եօազուրկ, քրիստոնէական սիրոյ գործունէութիւնը, և այդ պարճառով նսքա կասկածանքով են վերաբերւում դէպի այն, ինչ որ չեն հասկանում... Ազգբունքով մենք հրաժարւել ենք հիմնել Փոքր-Ասիայում որ և է բողոքական հոմանիքներ և այդ միջոցներով (այսինքն փոշով և պաշտպանելու խասպմունքով) ոչ մի մամանակ չենք դրդել որ և է լուսաւորչականի թողձել իւր եկեղեցին... Բայց դորանից, ոչ մի աննշնորհութիւն, մենք չենք զգնում պատրոր Քրոկոսի գործողութեան մէջ, որը Զէլֆունում, մի աւելուրանական ժամանացութեան ժամանակ, գործածելով աւելաբանական մի բառ, խօսում էր մեղքերի ազարութեան մասին, և եթէ այս դէպքից օգտում են մեզ մեղադրելու համար, դա ցոյց է պալիս որքան դժւար է, Տաճկասպանի մեր հակառակորդների համար, մեզ մեղադրելու մի դրական պատճառ դպնել: Այդպիսի մեղադրանքները ամենալաւ ասկացոյն են, որ մենք ոչ մի ասիթ չենք գուել արդար գանգափերի... Վերջապէս այն խրաբը (որը առլիս է «Կ. Հ.-ը»), այսինքն՝ «Պործադրել մեր գումարները աւելի լուրջ և բարեյացող նպատակների վրաց, —կարող են պալ միայն նոքա, որոնք ինչպէս քահանան և լեւիոր, անցնում են սպանւածների մօգուվ, և որոնց համար առեւգրական շահերը աւելի արդարացի են, քան թէ ինհզերի բարեբախտութիւնը: Մենք հաւաքացած ենք, որ մենք աւելի ենք դործում Թիւբքիակի բարեկեցութեան համար, քան թէ նոքա, որոնք այս երկիր վրայ նայում են միայն ինչպէս մի գործունէութեան ասսարէզի վրայ իրենց շահերի համար: Գերմանական Հիլֆսբունդի լնդիանուր ժաղովը վճռում է, աւելի մեծ եռանդով և սիրով, քան մինչև այժմ, շարունակել սկսած շնորհալի գործը<sup>1</sup>»:

Այս ժողովում որոշվեց նոյնպէս, արբայացել Քրոկոսին Հիլֆսբունդի կարաքեալ վագանութիւնը և առաջարկել նրան, որ նա բացադրի իրա հետ պատրահած դէպքը անմիջապէս գերմանական կայսրին:

Հետաքրքիր է նոյնպէս էլաստ-լուրարինգիայի ճիւղ-կոմիտէի պատասխանը, որը մենք<sup>2</sup> գուելի պակասութեան պատճառով չենք.

<sup>1</sup> Mittheilungen aus d. Or. № 7 1899.

<sup>2</sup> Flugblatt des Elsass—Lothringischen Hilfseomités für Arm. 1899. § 4.

առաջ բերելու ազդյակեղ. այսքանիք կը նկատենք, որ այս պատասխանի մէջ ցոյց է քրուռմ կաթոլիկների վրաց, որոնց խարդախութիւնների շնորհիւ իրք թէ այդ պիսի գանգապներ նն առաջ գալիս Հիլֆութունցիւ դէմ: Այս ենթադրութեանը հանդիպել ինք մենք և մի ուստից գալ բաց աս անկասկած սխալ է. թէսկէք, իրաւ, որ «Հ. Շ.»-ը հրապարակում է գերմանական կաթոլիկութեան կենտրոններից մէմ կում, Քեօլն քաղաքում, բաց այնուամենայնիւ նրա Հիլֆսբունդի դէմ արած գանգապների վրաց չի կարելի նայել, ինչպէս կաթոլիկական մի արշաւանքի վրաց Հացասպանի բողոքական միասինարների դէմ, որովհետիւ, չէ որ պատրիարքի այն նամակում, որը լրաց գիրը բերում է, Օրմանեանը գանգապում է և կաթոլիկների դէմ:

Բ. Մասնաւոր պատասխաններ: Մեզ ծանօթ մասնաւոր կողմից եղած հերքումներից և բացարրութիւններից ուշադրութեան արժեանի են Reichshöhe լրագրինը, պարոն Յելլերի (Zell r) և պ. Խոռախինը (Rohrbach):

Նախ յացնելով իւր զարմանքը որ այդպիսի մի թիւրիմացութիւն, ինչպէս պ. Քրոկունի հետ պատրաճած դէպքը կարողացել է յարձակումների պարճառ ծառացել, «Reichsboeo» լրագիրը (№ 89, 1899 թ.) գրում է. «բացարձակապէս սխալ է հաւատացնելը, ուն աւելաբարանական օգն. միութիւնը ցանկանում է շտամփունութիւն քարողել: Մենք հասպար զիմենք որ դա ճիշտ չէ. Հիլֆսբունդը ծգուում է միայն գթապերք դործերով և աւելաբարանի քարոզում ուղղ զարթեցնել հայ լուսաւորչական եկեղեցու մէջ, որը խեղուել է արդարքին ծէսների մէջ, աւելի բարոյական-քրիստոնէական ուղղական կեանք (mehr christlich-sittliches und geistiges Leben zu erweeken): Նա չի ցանկանում հայերին անջափել իրենց եկեղեցուց, նոքա պիտի շարունակեն պատկանել այդ եկեղեցուն. բաց պիտի դառնան այդ եկեղեցու կինդանի անդամներու Աւելաբարանական Հիլֆսբունդը (շարունակում է լրագիրը) բոլորի վերաբերմամբ էլ մաքուր խշճմիքանք ունի, ինչպէս թուրքի, այնպէս և Գերմանիացի և լուսաւորչական եկեղեցու, որովհետիւ նա չի զբարում ոչ կրօնափոխական, ոչ էլ քաղաքական քարոզներով. միթէ ամօթ չէ, որ մի գերմանական լրագիր անցնում է թիւրքերի կողմէ. և ասում է գերմանական օգն. միութեանը թէ հեռացեք, դուք

իսանգարում էք խաղալութիւնը արևելքում և վնասում էք մեր պնտեսական շահերին։ Սւետարանական օգնութեան միութիւնը չափազանց բարձր զաշափար ունի քրիստոնէական պարտաւորութեան և գերմանական պատրի մասին, որ կարողանայ հետեւ ։ Կ. Զ. ա. ի խորհրդին։ Լրադիրը վերջացնում է նկագելով, որ եթէ գերմանացիք օգար և սխալ գեղեկութիւնների հիման վրայ, ինքները հալածեն իրենց սեփական հայրենակիցներին և մանաւանդ այնպիսի պատրելի անձերին, ինչպէս են պատրոր Բրոկս, Պր. Լեպսիուս, և Առմանը, այն ժամանակ, ոչ թէ միայն գերմանական միսիոնարի, այլ և գերմանական վաճառականի և առհասարակ գերմանացու անունը և դրութիւնը Արեելքում կը կոպրեի։

Ցելէր'ի («Zur Beleuchtung der Angriffe auf deutsche evangelische Hilfswerk in Armenien»)<sup>1</sup> յօդւածից, ոշադրութեան արժանի են հետեւալ պարզաբանութիւնները։ Անկարելի բան է, որ Հիլֆսրունդը զբաղւի Դաւանափոխական քարոզով, որով հետեւ նորա հրապարակախօսութիւններից մէկում մինչև անդամ արդայացրում է այն միոքը, թէ այն ժամանակ, երբ հայերը մարդիրոսութեամբ ապացուցին հաւաքարմութիւնը դէպի իրենց եկեղեցին, արդէն ազնւութիւնը արգելում է կրօնափոխական քարոզ կարդալ նոցա մէջ։ Հետեւ ։ Կ. Զ. ա. ի խորհրդին—փակել որբանոցները և հաւաքւող զումարները մսիսել գերմանացիների օգտին, անհնարին բան է, որովհետեւ այդ կնշանակէր քանդել գերմանական միսիոննի մի գործ (ein deutsches Missionswerk), որին միացած են բիւրաւ որ մարդիկ և որի ասլագան ապահովւած է։ Գերմանիայի աւետարանական քրիստոնէաների համար խղճմունքի գործ է պարահած կուորածներից յետոյ հայերին օգնելը և պախարակելի է, որ մի շարք լրագիրներ թողլ են բալիս իրենց ացդակիսի թեթևամորութեամբ վերաբերել խղճմունքի այդ զգացմունքին։ Ճիշդ է, օգնութեան միութիւնը, սկսելով իւր եղբայրական օգնութիւնը չէր շեկագարում և ի նկարի չունէր Գերմանիայի կառավարութեան շահերը և յարաբերութիւնները Յիւրքիայում, բայց այդ չէ նշանակում, որ Հիլֆսրունդի անդամները աւելի քիչ են հայրենասէր,

քան թէ «Կ. Հ.»-ի շրջանները: «Օգնութեան միութիւնը» ամենեին անպարբեր չէ Դէպի Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի յաջողութիւնը և նա ոչ մի ժամանակ չէ ցանկացել խանգարել այդ կէտում իւր կառավարութեանը. ընդհակառակը նա Դիմել է մի անգամ այդ կառավարութեան, ինդրելով ցոյց տալ նորան «այն ճանապարհը, որով պիտի նա շարունակէ ընթանալ, ներդաշնակելով իւր քայլերը իշխանութեան ցանկութիւնների հետո:

Բայց ամենահետաքրքիրն է Դր. Ռոռբախի յօդւածը, «Գերմանիան հայերի մէջ» (Deutschland unter den Armeniern) վերնագրով, որը երեան եկաւ անցեալ գարի «Preussische Jahrbücher» նշանաւոր ամսագրի մէջ: Հեռադրես մրգերով հարուստ այս յօդւածը ունի և այն արժեքը, որ նրա հեղինակը, ինչպէս ասացինք վերև, շրջել է անցեալ գարի Մեծ Հայաստանը և Փոքր-Սահման: Նկարագրելով հայկական գաւառների ներկայ դրութիւնը և ցոյց տալով ինչ սարսափելի տնտեսական և այլ հետեանքներ առաջ բերին հայկական ջարդերը, հեղինակը ասում է, որ ուղղակի անգնահատելի է այն ծառայութիւնը, որը եւրսպական և ամերիկեան բարեգործութիւնը արել է Թիւրքիային, որովհետեւ թէ այդ գաւառները որ և է բան կարող են դալ հիմա կամ ապագայում գամձկաց պետական գանձարանին, դա շնորհիւ Եւրոպացի և Ամերիկացի օգնութեան կոմիտէնների է (էջ 316): Առանց այս կոմիտէնների շատ գաւառների հայերը բոլորովին պիտի բնաջինց եղած լինէին...: Ռոռբախի կարծիքով հայկական կոտորածները Թիւրքիայի համար գանուլ դւած պատերազմի նշանակութիւն ունին. գալով այն հարցին, թէ արդեօք Հիլֆսբունդ՝ դնում է որ և է արգելքներ Գերմանիայի պետական քաղաքականութեանը Տաճկաստանում, թէ ոչ, նա ասում է, որ դժւար է երեակացել մի ուրիշ բան, որը այնպէս նպաստաւոր կերպով աջակցէր Գերմանիայի ներկայ արևելեան քաղաքականութեանը, որ է Թիւրքիան ուժեղացնել և հիմք դնել պնդեստական լարաբերութիւնների Գերմանիայի հետ, քան այդ անում են գերման և գնութեան կոմիտէնները: Գերմանական Դիմումադրիային պատիւ չէ բերում այն հանգամանքը, որ նա չի հասկանում օգուել այդ կոմիտէններից, ուղղութիւն դալով և պաշտպանելով նոցա դաճկաց կառավարութեան առաջ (318—320):

«Կ. Հ.»-ի ուած խորհուրդը Հիլֆսբունդին՝ թողնել օկնութեան գործը, կարող է բշխել միայն անգիտութիւնից, թէ որքան խոր դժգոհութիւն և պհաճութիւն յառաջ կարող է բերել այդ առաջ ջարկութիւնը ժողովրդի մէջ։ Նեղինակը տառմ է, որ ինքը փորձառութեամբ զիսէ, որքան առաջասարակի իրերից հսկայական քաղաքականութիւնը բողոքներ է ծագեցնում գերմանիական այն շրջանների մէջ, որոնք սովոր են զգալ և մտածել համաձայն կրօնի և բարոյականութեան։ Այս շրջանների մէջ այդպիսի յարձակումները բերում են բոլորովին հայտառակ հետեւանքներ և համակրութիւնը դէպի հայերը զօրեղ սնում է։ 350 հազար մարդ փարեկան ծախսել օտար ազգի տանջանքները մեղմացնելու գործին, դա կարող է լինել արդարացրութիւն միայն մի խոր քրիստոնէական մարդասիրակոն համակրութեան (319—320)։ Առաջ բերելով Օրմանների գրութիւնը մեծ վեզիրին, յօդւածագիրը առում է, որ այդ նամակից երևում է, որ գանգաղը ուղղւած է Վանի վիլացէթի կաթոլիկական միսիոնարների դէմ։ այդ միսիոնարները Քրանսիացիք են, և ինքը զարմանում է, որ «Կ. Հ.»-ը այդ նամակով արշաւանք է սկսում Հիլֆսբունդի դէմ։ «Օգնութեան միութիւնը Ակզրունքով խուսափում է որ և է դաւանական քարոզութիւնից, վերջադէս պապրիաբքի նամակի մէջ մի խօսք ևս չէ լիւած, թէ բողոքական միսիոնարները գերմանացիք են։ «Ամբողջ Ասիական Թիւրքիայում առում է Խուրախար, Հայերի մէջ չըկացու մի գերմանացի բողոքական միսիոնար, և ընդհակառակը այնպեղ գոյսութիւն ունին մի շաբք ամերիկան բողոքական միսիոնական կենտրոններ, որոնց շուրջը հաւաքւած և կազմակերպւած բողոքական համացնքների մէջ 30-ից մինչև 40 հազար հայ կազ Նեղինակը նկատում է, որ Հիլֆսբունդի փարիչները համաձայնութիւն են կոչացրել ինչպէս Օրմաննեանի այնպէս և էջմիածնաց կաթողիկոսի հետ, որ ճընշումի ոչ մի փորձ չէ անելու հայ երեխացոց վրայ նոցա խլելու համար իրենց ազգացին եկեղեցուց։ և Օրմաննեանը իւր նամակի մէջ ամենեին չէ ցիշում։ Հիլֆսբունդի անունը (էջ 326), «Կ. Հ.»-ի յօդւածի ծագման մասին այսպէս է խօսում նա

«Ես զուշակում եմ, որ այն սրամիտ ոստիկանական կոմմիտարը (որը արգելեց Բրոկեսի քարոզը Զէյթունում) հաղորդած է լինելու Կ. Պոլիս, պալատը, թէ Զէյթունում երեւան է եկել մի վերին աստիճանի

վկանգաւոր անձնաւորութիւն և թէ պետութեան դրութիւնը գուցէ և ամենասուրբ կեանքը (այսինքն սուլթանի) վկանգի մէջ են Սորանից յետոյ, երեխ, մի սարսափելի նորայով դիմումն է եղած գերմանական դեսպանագանը, և մի որ և է թշրիմակից Կ. Պոլսում, որը այնքան է գետէլ Զեյթունը, Հայաստանը և որբանոցները, որքան լուսնի միւս կողմը և որի ձեռքն էլ ընկել այս հարցի հետ ոչ մի կապ չունեցող պատրիարքի գանգագը, նստում է և գրում «Կ. Շ.»-ին այն սքանչելի յօդւածը»:

Վերջին գողերում յօդւածագիրը նկատում է, որ վերին ասպիճանի ցաւալի կը լինէր, թէ Թիւրքիայի հետ ապագայ տնտեսական լարաբերութիւնների փետակէրից, և թէ Գերմանիացի բարոյական անւան համար, եթէ գերմանական արքաքին գործոց նախարարութիւնը ընդունէ «Կ. Շ.»-ի գետակետը՝ նա աւելացնում է. «Գերմանական Հիլֆսբունդի վարչութիւնը ոչ մի բան այնքան ուրախութեամբ չէ ողջունելու, որչափ ցանկութիւնը՝ իւր գործունէութիւնը համաձայնելով կառավարութեան հետ, զիտակցաբար ծառայեցնել կայսերական կարևելեան քաշաքականութեան մեծ նպագակներին: Մկան զորքից հրաժարւելու մասին խօսք չէ կարող լինել, և եթէ նորանից վնասներ են ծագում գերմանական հայափակների համար, եթէ մեր արքաքին գործոց նախարարութիւնը անընդունակ է հանդիսանում գերմանական շահերին օդիրակար դարձնելու այս նիւթական հարուար միջոցները, իշեալական անձնագունութիւնը և Հիլֆսբունդի ամբողջ փորձառութիւնը և չի կարողանում պարզել Թիւրքիայի կառավարութեան գործի հութիւնը — այն զէտի վնրաբնամամբ կոմիտէննը հրաժարւում նն որ և պատրասիանագւութիւնից»:

(Հարունակելի)

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԻՔԱՅԵԼ. ՅՈՒՀԱՆՆԵՍԵԱՆԻ

(Վ. և բ. ջ<sup>1</sup>)

\* \* \*

Այն ինչ Բուրժուազիան, այդ երրորդ դասակարգը<sup>2</sup> բարձրանում էր ասպիճանաբար, միշտ աւելի շեշտելով իր ոյժն ու ազդեցութիւնը:

16. Ի՞նչ դարույ զարգանում է մանուֆակտուրան, որ ԴՆՈՒՄ է սկիզբ մի նոր զննվեական սխուէմի, այն է՝ կառլիդալիարական արդիւնագործութեան: Մանուֆակտուրայի մէջ բազմաթիւ ուարքեր արհեագաւորներ կենարոնանում են մէկ կապիւրալիագի (Դրամարիբոջ) հրամանագարութեան գոակ, մի լնդարձոկ հիմնարկութեան մէջ, որի անունն է գործարան: Արդիւնագործութեան խարիսխը գտնիալին արհեագին է, ձեռագործք: Աշխագանքը բաժանում է շափերի մէջ. ամեն մի առարկաց (Դիցուք մէկ կօշիկ, մի ժամացոց) հանդիսանում է իբրև արդիւնք բազմաթիւ արհեագների համերաշխ զործակցութեան: Անում է ճարպիկութիւնը, զարգանում է աշխագանքի բաժանումը, դառնալով ԴՐԴԻ: նշանաւոր գիւղերի: Պարասպունքների այդ մասնաւորումն էր, որ ՃՆՈՒԴ վւեց յեղագայում մեքնաներին:

<sup>1</sup> Տես Մուրճ 1899 թ. № 11—12, 1900 թ. № 2:

<sup>2</sup> Tiers état—երրորդը՝ աղնւականութիւնից ու կշերից լեզով:

Ֆրանսիայում մանուքակրուրան ծաղկեց Լուդովիկոս XIV-ի օրով, չնորհիւ նրա առաջին մինիստր՝ Կոլբէրի ջանքերին։ Նա մեծ զարկ տւեց առևելութիւն ու արդիւնագործութեան, պետական հովանաւորութեան դակ առնելով նրանց, նիւթապէս աջակցելով ֆրանսիսկան գործարաններին, սահմանելով հովանաւորող սաքսեր՝ ֆրանսիսկան ապրանքների համար և այլն։

Կապիտալիստական շրջանը առաջ բերեց նոր սոցիալական յարաբերութիւններ։ Երեան եկան ազատ, վարժեկան բանւորներ կամ պրոլետարներ։ Ազատ բանւորներ՝ երկու գեսակէտից. ոչ նրանք են անմիջապէս պարկանում արդիւնագործութեան միջոցներին (հողին, աշխատանքի գործիքներին), ինչպէս հնադարեան գերին էր և միջնադարեան ճորտը, ոչ էլ արդիւնագործութեան միջոցներն են նրանց պատկանում, ինչպէս այդ պեսնում ենք գիւղացու ինքնուրոյն գնակետութեան մէջ։ Ազատ՝ թաշնի պէս, իրենց ուժերը ազատորէն գնորդինորդ, զուրկ սեփականութիւնից, միմիայն իրենց ձեռքերի ու ուսների գործը՝ պրոլետարները կամ պիտի ծախէին իրենց մկանների ոյժը կամ թէ սովամահ լիսէին։

Դա է իսկական պրոլետարիատը։ Նրա թիւը այնուհետև աճեց գոնիստական էւոլյուցիայի հետ գուգընթացարար։ 16-րդ, 17-րդ և 18-րդ դարերում նրա սոցիալական դերը աննշան էր։ 19-րդ դարում էր, որ նա պիտի ծաւալէր իր դասակարգացին ոյժը և սոցիալական մեծ, համարած շարժումը։ Նրա շարքերը յանկարծակի սրբարացան 16-րդ դարում, երբ բրդի մանուքակրուրան զարգանալով՝ զանազան դեղերում (գլխաւորապէս Անդիայում) խոշոր հողագործերը որոշեցին քշել գիւղացիներին իրենց կալւածներից և փոխարինել նրանց ոչխարների հովերով։ Երդի գինը բարձրացել էր, իսկ փողը ամենակարող ոյժն էր ֆէօդալների աշքում։ ուսպի աւելի շահաւետ էր նրանց համար՝ ունենալ ընդարձակ արօքագեղեցր, քան երկրագործներով բնակեցրած կալւածներ։ Եւ գիւղացիները բռնի դուրս քշեցին։ Զրկուած ամեն ինչից՝ նրանք մասսաներով գեղափոխեցին քաղաքները՝ գործ որոնելու։ Հողերի բռնի պրաւումը դեղի ունեցուած նաև Քերմանիայում ու Էֆորմացիայի

շարժման միջոցին, երբ կաթողիկ եկեղեցինքը ու վանքների ահապին կալւածները յափշտակւեցին իշխաններից և աջնորել ապաստանւած թշւառները դարձան խմբովին թշափառական, մուրացիկ:

16-րդ դարը, ինչպէս գիտական ենք, հետաքրքրական մոմենք է ներկայացնում գնդեսական էւոլիցիալի մէջ: Հողերի այդ մեծածաւալ էկսպլոպրիացիան (զրաւումը) մի կողմից, և զիւղացիների մասսացին պլրութառարիզացիան միւս կողմից՝ սկիզբն են դնում այն նշանաւոր անդրագոնիդմի, որ այսօր իր նորագոյն, յափուկ ձեռք խաղացւում է բուրդուա և բանւոր դասակարգերի միջև:

\*  
\* \*

Բուրժուազիան իր հարստութիւնների շնորհիւ դառնում էր հասարակական զօրաւոր գործոն: Կապիտալը համարակեցնում էր իրեն ամենքին և ամեն ինչ: Կապիտալին ջերմ երկրագու էր դառնում ինքը թաղաւորը: Նա պէտք ունէր դրամի՝ պատերազմներ մշելու և արքունիքի անսահման ծախքերը հոգալու: համար: 17-րդ, 18-րդ դարերում պերճանքը առասպելական էր արքայական պալատներում: Եսալութիւնը ինելագորութեան էր համենում Այդ ամենը պահանջում էր դրամի անսպառ աղբւրներ, ուստի հարկերը միշտ աւելի և աւելի ամուսնում էին, ծանրանալով ժողովրդացին ընդհանրութեան վրայ: Միասպեսական բռնուկալութեան լուծը յաջորդելով ֆէօդալականին, կամաց-կամաց դարձաւ սրանից աւելի անզում ու բարբարու: Միասնակութիւնը ֆրանսիայում իր յաղթանակը գանելով ֆէօդալիզմի ու կղերի վրայ իրեն գործիք դարձեց այդ երկու հակածողովրդական գործերը՝ բռն ժողովրդին հարստահորելու համար: Սուրբին դասակարգերը շուրջ զշացին իրենց կաշը վրայ արքայական դեսպատիզմի լուծը և շուրջ սովորեցին արել նրան: Բայց աւելի նշանակալից էր բուրժուազիայի դիրքը: Այդ դասակարգը, որ միացնակ մղում էր առեւտուրն ու արդիւնագործութիւնը, և որ հետեւապէս ներկայացնում էր ֆաքտորէն սոցիալական կարևորագոյն դասակարգը, իրաւագանորէն մնում էր ոչընչութիւն, զուրկ քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներից: Այդ դասակարգից էին առաջանում նշանաւոր գրողներ, պիլիսոփաներ, պատմական պաշտօնեաներ և այլն: Փակտորէն—ամեն բան,

իրաւաբանօրէն—ոչինչ... Ընդհարումը—վաղ թէ ուշ—անխուսափելի էր։ Եկաւնց մի զարհուրելի անփագոնիզմ բուրժուազիայի ու իշխանութակարգերի միջև, որ արքայացուեց անքան կարաղօրէն 18. րդ դարի ցեղափոխական դրակ ունութեան մէջ։ Այդ անփագոնիզմը լարւելով, բորբոքւելով՝ կամաց-կամաց պարրասպեց պարական այն մեծ կապատրովքը, որ յայրնի է աշխարհին։—

### ՖՐԱՆՍԻԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՆԾՎ

Ո՞րքան թոյն ու ափելութիւն էր կուպակւած բազմապահջ մարդկութեան ծոցում... Պէտքէր վրէժինդիր լինել։ Պէտք էր բապալնլ վերջապէս երկրաւոր ու երկնացին բոլոր կուռքերը, որոնց անունով դարերի ընթացքում խաբեցին, թալանեցին ժողովուրդներին։ Պէտք էր վերջապէս դափի կանչել բոլոր աշխարհական ու կշերական հեղինակութիւններին, որոնք իրենց անձնական կամ դասակարգացին արքօնութիւնները անխախտելի օրէնք դարձնելով՝ երբ բէք չըկարողացան կամ չուզեցին ըմբռնել, թէ ինչ ասել է մարդկային արժանաւորութիւն, մարդկացին իրաւունք։ Պարիզը ժայթքեց, զնցելով իր հետ բովանդակ աշխարհը։ Որքան վեհ էր տիեզերական մայրաքաջաքը իր ողբերգութական մեծութեան մէջ... Ո՞րպիսի վեմ ու ահարկու տեսարան՝ երբ ազագացած դարերի վառւած ամբոխը, որպէս մարմնացած դարերք, խելագարի պէս առաջ էր սլանում սրուպալով՝ ձ լա Bastille!...»

Նև մինչ սպրուկ ժողովուրդները դիեզերքի բոլոր ծայրերից խուլ ձաշնակցում էին այդ որոգումին, ոյջունելով ազագութեան արշալոյսը, մինչ դիրանները բոլոր բռնապետական երկիրներում սարսափանար իրենց գլուխն էին ողբում,—հանրասպետական ազդացին ժողովը բաց էր արել արդէն ահաւոր դափաստանը և Նէմեզիսը, վրէժինդրութեան այդ ասուածը անխնաց լափում էր ժողովրդի դահիճներին...»

Ֆրանսիական Յեղափոխութիւնը մի եղակի երևոյթ է մարդկացին պատմութեան մէջ։ Նա պարրասպւել էր երկար ժամանակից ի վեր գնարեսական ու մոտաւոր առաջադիմութեամբ։ Կան դեռ այսօր էլ կարձամլու ուղեղներ, որոնք այդ վիթխարի պարմական դրամային գուպտ իշելողիական (գնեսլադիտական) հիմունք են պալիս,

վերագրելով այն՝ Վոլտէրի, Առուսօցի և այլոց քարոզներին։ Հարկ կայ արդեօք Տանրանալու, որ Վոլտէրները միայն արծագանքն էին պիրութրութեան ու դրամադրութեան, որ նրանց քարոզած գաղափարները միայն անդրադարձու մն էին զոյտութիւն ունեցող սոցիոլական դասակարգացին յարաբերութիւններին

Մի քանի Փաքիեր միայն բերենք նախայելափոխական սոցիալական յարաբերութիւնները բնորոշելու համար

Յեղափոխութիւնից առաջ Յրանիսիացի բոլոր հողերի 1/5-ը թագաւորի սեփականութիւնն էր, իսկ 1/7-ը բաժանուած էր թագաւորական ընտանիքի իշխանների միջի։ Այդուհանելի հարաբութեան հոկ միասին թագաւորը, ինչպէս արդէն յիշել ենք նախընթաց էջերում, վայելում էր միապետական անսահման իրաւունքներ։ Լուդվիկոս XVII, որի պլուխը զիյոուինի տակ չդրւեց 1793 յունարի 21-ին, սիրում էր խօսել Լուդվիկիա XIV-ի ձևերով։ Կպեպութիւնը ես եմ, և բարձրաձայն յայրաբարում էր, որ իր պապերից ժառանգած իշխանութիւնը երբէք չի կարող որ և է փոփոխութիւն կրել<sup>1</sup>։

Ազնւականութիւնը, որ ըստ Տէնի՛ հաշըում էր ամբողջ երկրում ընդամենը 25—30,000 ընտանիք, սպանում էր պետական դանձարանից ահազին զումարներ։ Միմիայն մօտ 1560 հոդի, որ ծառացում էին արբանիքում, վայելում էին պետական եկամուտի 1/10-ը, մօտ 100 միլիոն ֆրանկ։

1774 թւականից մինչև 1789 պետական գանձարանից յագեկալ է պէնսիաների ու զանազան պարզեների համար մօտ 570 միլիոն ֆրանկ, որից 200 միլիոնը՝ միմիայն թագաւորական ընդանիքին։ Պօլինեակ ազնւական ընդանիքը, որ թագուհու առանձին բարեհաճութիւնն էր վայելում, արացաւ այդ միջոցում 1,750,000 ֆրանդրնի է թագուհի Մարիա Անդրուանեափի առաստելական շուալլասիրութիւնը։ Այդ ախտով վարակւած էր սակայն ամբողջ ազնւականութիւնը, ուստի և ընայելով չաշչայլապենսիաներին՝ նա միշտ ծանրաբեռնւած էր պարպերով։

Ոչ պակաս հարուստ էր Կղեղը. Եկեղեցուն պատկանում էր Ֆրանսիացի բոլոր հողերի 1/5-ը և ամենաբարգաւանդ մասը։ Եկե-

<sup>1</sup> Lavisse et Rambaud, Histoire générale.

շեցական բոլոր հողերի արժէքը հաշւում էին մօպաւորապէս մեկ միլիարդ։ Հսկայական եկամուտից առիւծի բաժինը հասնում էր բնականաբար եկեղեցու զերագոյն սպասաւորներին։ Ֆրանսիայի բոլոր 131 եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները ունէին գարեկան եկամուտ՝ աւելի քան 35 միլիոն ֆրանկի, ուրեմն միջին թւով աւելի քան 250,000 իլուրաֆանչիւրը։ Կարդինալ Ռոհան, Սփրասքուրդի արքեպիսկոպոսը սպանում էր մենակ մօդ 2 $\frac{1}{2}$  միլիոն գարեկան <sup>1</sup>։

Այս մի քանի չոր, բայց ծանրակշխատ ֆաքտերը պայծառ օրէն վկայում են, թէ որքան հրեշացին էր այն կազմակերպւած թալանը, որ միացած ուժերով մշում էին աշխափաւոր ժողովրդի երեք թշնամի գարրերը։

Դասակարգացին այդ անարդար յարաբերութիւնների անհրաժեշտ ծնունդն էր Մեծ Յեղափոխութիւնը, որը հէնց իր առաջին գործողութեան մէջ ծանուցեց աշխարհին մարդկանց հաւասարութիւն, ազատութիւն և եղբայրութիւն...։

